2004

203

412-ԱԶ 5259-ան

# ԲԺՇԿԱՐԱՆ ՀՈԳԵՒՈՐ

Բաժանեալ յերկուս մասունս:

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Յորում պարունակի Յորդորակ ապաշխարութեան սրբոյն Եփրեմի խորին ասորւոյ՝ ի պէտս հոգեպէս հիւանդացելոց.

Ի Պատրիարգութեան կոստանդնուպօլսոյ Տեառն Ստեփաննոսի ամենապատուի և վեհափառ Արքեպիսկոպոսի.

ՏՊԵԱԼ ՎԵՐՍՏԻՆ

1837 ՅՕՐԹԱԳԻՒՆ. ՌՄՁԶ

Ի Տպարանի երից Որդւոց Պօղոսի Արապեան ապուշեխցւոյ.

33976

Վերականգնված է
Մատենադարանի
օրինակից:

* Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից։ Մատթէոս, Գ, 2։

* Այլ եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքին նոյնպէս կորնչիցիք։ Ղուկաս, ԺԳ, 3։

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Որովհետև հոգի առաւել է քան զմարմին, զի իմացական մտօք և ազատ կամօք և անմահութեամբ է պերճացեալ. ապա յաւէտ պէտս ունիմք զգուշանալ հոգւոց մերոց և խնամ տանել նմա.

Զի թէ մարմնական ախտք՝ պատճառեն զցաւ և զչարչարանս, և 'ի վերայ բերեն զմահ ժամանակաւոր. ապա և հոգևոր հիւանդութիւնք՝ յառաջածեն զխայթս և զտանջանս խղճի մտաց, և ապա զմահն յաւիտենական.

Ուստի 'ի դարման և 'ի սատարութիւն հոգեպէս հիւանդացելոց մատուցաւ Բժշկարանս հոգևոր, բաժանեալ յերկուս մասունս։ Յառաջնումն է Յորդորակ ապաշխարութեան առ 'ի սրբոյն Եփրեմէ ատացեալ՝ պարզ և հեշտիմաց ոճի. որ և է յուսադրութիւն մեղաւորաց դիմել 'ի զեղջ և 'ի խոստովանութիւն, և գտանել անձանց զփրկութիւն.

Յերկրորդումն են եօթնեկի թուով սաղմոսք և աղօթք ըստ եօթնեակ աւուրց շաբաթուն, կարճառօտ բանիւ՝ առ 'ի չձանձրանալ ումեք. որք և սրտառուչ խնդրուածք են առ ած՝ 'ի բժշկութիւն ամենայն հոգեկան հիւանդութեանց.

Այս ամ որ սրտի մտօք ընթեռնու զՅորդորակս, և ջերմեռանդն սիրով կարդայ զկարգեալ աղօթսն որ 'ի սմա, արժանաւոր ընդունիլ 'ի տեառնէ զշնորհս թողութեան մեղաց, և պարգևս ողորմութեան 'ի ժառանգութիւն կենացն անվախճանից. Որում արժանաւորս արասցէ զամենեսին զմեզ երկնաւորն Հայր՝ արդեամբք չարչարանաց յի քսի տեառն մերոյ, ընդ որում Հօր և Հոգւոյն սրբ վայելէ փառք և իշխանութիւն յաւիտեանս, ամէն.



Դու ախտացեալդ բաղձիս մեղ.
Խնդրեմ հոգւոյդ փրկութեան դեղ.
Թէ սա լացցես արտասուս հեղ.
Անդ ցնծասցես փառօք Հրեղ.

# ՅՈՐԴՈՐԱԿ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

## Մեծին Եփրեմի խորին ասորւոյ։

1 Սա է երանելի մարգարէն Եզեկիէլ. Անօրէնն եթէ դարձցի յանօրէնութենց իւրոց զոր արար, և արասցէ արդարութիւն և ողորմութիւն, կելով կեցցէ՝ և մի մեռցի։ Ամենայն յանցանք իւր զոր յանցեալ իցէ, և անօրէնութիւնք իւր զոր անօրինեալ իցէ, մի յիշեսցին. այլ ողորմութեամբ իւրով զոր արար՝ կեցցէ։

Աան որոյ զբաղմօք զանց արարեալ՝ փութասցուք հասանել յընչաւէտ հօր առաստ որդին. որոյ անունն կեանք է և լոյս

և փրկիչ. յոր հաւատացաք՝ յոր մկրտեցաք և լուսաւորեցաք։ Որ ՚ի Հօրէ առնու, և զինուորսն զգեցուցանէ. զփառսն զոր ետուր ինձ, ետու նց։ Որ զձեռանէ կալեալ զինուորսն, առ հայր մուծանէ. կամիմ զի ուր ես իցեմ, և սոքա ընդ իս իցեն։ Որ լանջակից և գրկախառն հօր կացուցանէ. զի ոպ դու հայր ՚ի յիս՝ և ես ՚ի քեզ. և սոքա ընդ իս և ընդ քեզ ՚ի մէջ իցեն։ Ով սքանչելեաց. ով երջանիկ աւետեաց. ով անչափ մարդասիրութեանն։

Մատթէոս՝ երեկ մաքսաւոր կողոպտիչ անողորմ, այսօր եղեալ յերկինս բազմի։ Պետրոս՝ ուրացօղ քսի, այսօր գահ ՚ի վեր անցեալ՝ փառօք փառաւորի։ Պօղոս՝ հայհոյիչ և հալածիչ եկեղեցւոյ, այսօր յանձառնելեան մտեալ՝ առ ած հանգչի։ Ընդէ՞ր անագանիմք, արի՛ք փութացո՛ւք առ այնպիսի ողորմած տէրն. մի՛ յապաղեսցուք, մի՛ հեղգասցուք։ Եթէ զբազում աշխարհօք և զդաւառօք պիտոյ էր անցանել, առաւե՛լ փութալի էր երագեալ անկանել առաջի նորա գթութեանն՝ և անչափ մարդասիրութեն։

5031/83

2 Ի՛ջւ Ն̅ր ծանուցեալ զհեղգութ̅իս մեր՝ և զանփութալի ծուլութիւնս, առ դուրս եկեալ՝ առ սեամս մտուցեալ, ձայնէ՛ առ մեզ՝ և կոչէ ուժգին. եկա՛յք առ իս ամ̅ վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ. վարանեալքդ և ձանձրացեալքդ գտջի՛ք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քա՛ղցր է, և բեռն իմ փոքրոգի. Ո՛չ եմ պահանջող, ոչ կշտամբիչ, ոչ յանդիմանիչ. միայն զլեզուդ շարժեա՛ և խոստովանեա՛ զոր գործեցեր. բեռն իմ փոքրոգի է թեթև, անաշխատ. զոր եթէ կամիցիս՝ դիւրաւ տանիցես. Իսկ դու ընդէ՞ր տարակուսիս և դանդաղիս և վախվախես, որպ̅ թէ 'ի մեծամեծ տանջանս ես մտանել, և կամ 'ի նեղութ̅իս և'ի վտանգս, և ոչ գաս յուղղութ̅ի։

Դարձեալ՝ նայեցեալ 'ի տկարութիւնս մեր՝ զամենապետութ̅ին իւր ցուցանէ՝ և հարցանէ. զի՞նչ կամիս, ո՞ւմ բաղձաս. հիւանդ ես, Ճարտար բժիշկ եմ ես. ոչ է պիտոյ բժիշկ ողջոց՝ այլ հիւանդաց. ձրի բժշկեմ, չպահանջեմ ինչ 'ի քէն՝ բայց միայն զդեղն. Ո՛չ առ վաճառականս առաքեմ, ոչ

Ընչս ծախել, ոչ յայլմէ աղերսել. մինա ՚ի սենեակ սրտի քո, բե՛ր ինձ արտասուս զղջման և ձեռնհաս իցես. եթէ մի կամ իցէ՝ բաւական է մկրտել զքեզ երկրորդ անգամ, և յառաջին փառսն հասուցանել. Եթէ մեղաւոր ես, ողորմած եմ ես. ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս յապաշխարութի. Որք առ իս դարձան՝ ոչ ամաչեցին. և ոչ ոք ՚ի նոցանէ կորեաւ՝ բայց միայն թիւրեալքն ՚ի ճշմարտութէն։

Զմաքսաւորն միով բանիւ արդարացուցի. զպոռնիկն իւրով արտասուօքն սրբեցի. զբժշկութիւնն և զողորմութին պարգևեցի ամենեցուն. Պետրոսի՝ ուրացողին զիս երիցս անգամ, դառնապէս արտասուացն ողորմեցայ. առ իս կոչեցի՝ և ՚ի կարգի առաքելութե պահեցի. Զիս ձաղանօք ՚ի խաչին դատապարտեցին. արարածք ողբային և սարսէին. ես վասն խաչահանողացն աղօթս առնէի. Նոքա բարկութե և սրտմտութե զգլուխս իւրեանց շարժէին. ես քաղցրութե և ողորմութե թողութի խոստանայի. Դու ապա զի՛նչ կատարումն. զա՛մ հեթանոսս ողորմութե

կոչեցի յորդեգրութի՟ · ածի զօտարոտի ոչխարման ՚ի գաւիթ սրբութեան իմոյ · և եղև մի հօտ և մի հովիւ · ես նոյն եմ և ոչ փոփոխիմ, երեկ և այսօր, նոյն և յաւիտեան ։

3 Ծարաւի ես՝ մի՛ դանդաղիր, ես եմ աղբիւրն կենաց քաղցրաբուղխ և անուշաճաշակ · եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ առ իս և արբցէ · և որք արբցեն՝ մի՛ ծարաւեսցին յաւիտեան · այլ գետք յորովայնէ նո՟ր բղխեսցեն ջրոց կենդանութե՟ ։ Քաղցեալ ես՝ մի՛ լքանիր, ես եմ հացն կենաց ՚ի յերկնից իջեալ · եթէ ոք ուտիցէ ՚ի հացէս յայսմանէ՝ կեցցէ յաւիտեան ։

Մերկացար՝ ով մեղաւոր, ես եմ պատմուճան քեզ և վերարկու · միայն ՚ի չարեացդ հեռացի՛ր, և ես ագուցից քեզ զառաջին հանդերձն · զի որք ՚ի ք՟ս մկրտեցարուք՝ զք՟ս զգեցեալ էք ։ Եթէ կարօտացար կօշկաց, ես զգեցուցից քեզ կօշիկս լաւագոյնս, որով կոխեսցես զօձս և զկարիճս՝ և զա՟մ զօրութիւն թշնամւոյն ։ Եթէ ծառայ գտար մեղացն, ես ազատեմ զքեզ · զի ա՟մ որ մեղս գործէ՝ ծառայ է մեղացն ·

իսկ եթէ որդին այ ազատեսցէ զձեզ ,
ճշմարիտ ազատք լինիցիք :

4 Ո՛վ մեղաւոր՝ խորշեա՛ յիմ յահեղ և՛ ի
հրատեսիլ զօրութենէս · մի՛ երկնչիր ,
չեմ օտար · ազգական եմ քո , որդի եմ
դաւթի , թոռն եմ աբրահամու · խօսակից
և մարմնակից եմ քեզ · Դու ապա զինչ կա-
մեցիս՝ ’ի պատրաստ կամ՝ տամ ինձ · զոր
ինչ բարի կամեցիս վն քո , դու մ՛ղդ- արա ,
և ես կատարեմ անյապաղ · քանզի ո՛չ եկի
պաշտօն առնուլ՝ այլ պաշտել , և տալ
զանձն իմ փրկանս փոխանակ բազմաց :

Զինչ կամիս զի արարից քեզ՝ ասա
ինձ · ո՛չ հրաժարեմ, զի սովոր եմ առնել :
Եթէ զմատնչին զիս ’ի մահ՝ զոտսն լուացի
և ո՛չ տաղտկացայ · ապա ո՞րչափ առաւել
զքոյդ ևս զիմոյ խոստովանողիդ զգլուխս
և զոտսդ լուացից առանց դանդաղանաց ·
ո՛չ յայլ ինչ իրաց մաքրեմ , այլ ’ի մեղաց
սրբեմ՝ և վերստին մաքրեմ · Դու շիթ մի
յարտասուաց հեղ ’ի կոնքս , և ես քան
զհոսանսն յորդանանու յորդագոյն հե-
ղում ’ի քեզ զշնորհս , և քան զառաջին
մկրտութեն պայծառագոյն լուսաւորեցից :

Մ՛վ մեղաւոր՝ յանձն մեղար, զազրա-
ցայր, երկեայր ՚ի քննողէս. մի կապեր զխոս
տովանութիւն, և ես արձակեմ զիմ բարե-
բարութիւն. որպէս պետրոսին սահմանեցի
զշաւիղն, դարձեալ քեզ սահմանեմ: Կամին
որ հաշտիմ ընդ քեզ. դու մեկնեաց ՚ի քո
չար սովորութենէդ, և ես մեկնիմ յիմ
սրտմտութենէս:

Դու հա՛յրց վ͞ մեղաց քոց զեօթն ան-
գամ թողութիւնն, և ես պատասխանեցից
քեզ զեօթանասնեկին եօթն՝ զոր քեզ
շնորհեմ թողութի. զի զոր ինչ եղանէ ընդ
շրթունս իմ՝ զայն ոչ սուտեցից. քննեա
զշաւիղ, իմացիր զթիւդ և ...
տրտնջեր զա...
թողիս ...
ըն...

եակ իմ ողորմելի՝ զի ոչ բարկանամ և ոչ մեղադրեմ. վ̃ զի իմ ես արարած, իմ ես պատկեր, իմ նմանութի̃, անարատ ձեռաց իմոց ստեղծուած. և նորին աղագաւ խնայեմ՝ և ոչ եղծանեմ զպատկերդ, ոչ խանգարեմ զստեղծուածդ, ոչ ապականեմ զնմանութիւնդ. վասն զի ողորմած եմ և գթած, երկայնամիտ և բազումողորմ. Ո՛չ դժուարին ինչ խնդրեմ ՚ի քէն, և դու զի՞ տարակուսիս. միայն դարձ առնիս, և ես դարձայց առ քեզ. միայն յապաշխարութի̃ փութա՛. միա̃ն խոստովանեա՛ց ըզ-

[illegible] նկանելով ա-

[illegible] ղ զքեզ։

Ո՞չ մարդն էր՝ որ ոչ ասաց մեղայ. և ես զԷլի էլին 'ի խաչին առ հայր գոչեցի։ Ո՞չ մարդն էր՝ որ մահու դատապարտեցաւ. և ես 'ի խաչին զմահ յանձն առի։ Եւ դուք մեղաւորք՝ 'ի յայսքան բարերար արարչէս ձերմէ երեսս դարձուցանէք. որ քաղցրութեամբ աղաչեմ զձեզ գալ 'ի զղջումն և յապաշխարութիւն՝ և առնուլ զթողութիւն։

9 Ո՜վ մեղաւոր՝ տամ զդատաստան իմ 'ի ձեռս քո, և դու արա ինձ իրաւունս. եթէ ես ոչ սիրեցի զքեզ՝ ապա և դու յիրաւի ատես զիս. և եթէ սիրեցի, դու ընդէ՞ր յինէն 'ի բաց փախչիս։

Իսկ եթէ ասիցես ընդ միտս, եթէ ո՞չ կատարեալ սիրեցեր զիս։ Ո՞րանիր զի ոչ է ճշմարիտ կարծիք. զի ես զաշխարհս բոլոր լրիւ իւրով վասն քո ստեղծի. զդրախտն վասն քո յօրինեցի. զերկնից արքայութիւն վասն քո պատրաստեցի. զտեղի անկելոց հրեշտակացն քեզ թողի ժառանգել. միայն դու դարձիր 'ի մեղաց քոց, և ես բերից զքեզ՝ զի տեսցես և վայելեսցես ընդ հրեշտակս իմ։

Տէ՛ր՝ զի վասն քո յերկնից ՚ի յերկիր խոնարհեցայ, Ա՟ծս մարդ եղէ՝ և տէրս ծառայ։ Վ՟ն քո յատենի կացի իբր զչարագործ. ՚ի հրէից դատապարտեցայ. ՚ի պիղատոսէ գանահարեցայ. ՚ի հերովդէէ կատակեալ արհամարհեցայ։ Վասն քո ՚ի զինուորացն ձաղեցայ. ՚ի ծառայիցն ապտակեցայ. ՚ի քահանայիցն Թուք յերեսս ընկալայ. ՚ի ժողովրդենէն նախատեցայ։ Վ՟ն քո զխաչն իմ ուսովս բարձի՝ և հանի ՚ի գողգոթա. վասն սիրոյ քո հայհոյեցայ, Թշնամանեցայ, և խաչեցայ։ Վ՟ն քո բևեռօք պնդեցայ. տիգաւ խոցեցայ. պսակ ՚ի փշոց ընկալայ. քացախ և լեղի արբի. քղամիդ նախատանաց զգեցայ. զա՟ծային գլուխս խոնարհեցուցի, զհոգիս ՚ի ձեռն հօր աւանդեցի։ Վ՟ն քո ՚ի մարդկանէ պատեցայ. մարմնով ՚ի գերեզման իջի, հոգւով ՚ի դժոխս դնացի՝ և զարգելեալ հոգիսն ազատեցի. ՚ի յերրորդ աւուր յարեայ՝ և զքեզ յարուցի ՚ի մեռելու՟է մեղաց։

10 Ո՛վ մեղաւոր՝ տե՛ս թէ որչափ սիրով սիրեցի զքեզ. զի յորժամ վասն քո զմահն կրեցի յետ ՚ի խաչին, հայր իմ

սարջանայր, և հոգին ո՛ր տրտմէր վասն ստեղծանելոյ զմարդն։ Զի՞նչ ասացից զզաստուց հրեշտակաց, թէ ո՛րպիսի սուգ անհնարին եղև 'ի միջի նոցա. քանզի կիջէր 'ի կակծոյն երկինքն երկնաւորօքն, յորժամ տեսին զատեղծիչս իւրեանց 'ի խաչին մահացեալ։ Իսկ թէ ո՛րչ արարածք ամենայն սուգ առեալ ողբային անմխիթեր, յորժամ տեսին զարարիչս իւրեանց մերկացեալ 'ի խաչին, և զմահ յանձն առեալ։ Զի արեգակն և լուսինն հանդերձ ամ աստեղօք մերկանային զլոյս իւրեանց, և զխաւար զգենուին. և երկիրս 'ի հիմանց սասանէր և դողայր. վէմք պատառէին. և վարագոյր տաճարին 'ի յերկուս ծուէնս ցելոյր. Իսկ մեռեալքն մարմնով ո՛չ կարացին հանդուրժել, այլ 'ի գերեզմանացն յարուցեալ ողբային ընդ արարածոց՝ և վկայէին վասն յարութեան իմոյ։

11 Գիտեմ արդեօք, թէ 'ի գիշերին յորում ըմբռնեցայ, ո՞րքան սուգ և տրտմութի կայր 'ի մէջ սիրեցեալ աշակերտաց իմոց. և տես զսաստկութի տրտմութն սուրբ առաքելոցն։ Զի մինչդեռ ո՛չ էին

կալեալ զինուորքն զվարդապետս իւր-
եանց, նոքա ոչ կարէին 'ի բաց ունել
զայս, այլ 'ի խստութենէ տխրութեանցն
անկանէին 'ի քուն որպ՟ զթմբրեալս. իսկ
ես մեկնէի 'ի նոցանէ իբրև քարընկեց
մի, և առ հայր աղօթէի։

Ապաքէն մարդ յորժամ մահու երկիւղ
լինի, քրտունքն ջուր է որ հոսի. իսկ ես
վ՟ սիրոյ քոյ այնքան թոյլ ետու երկիւղին
'ի յածացեալ մարմինս իմ, որ քրտունքն
իմ արիւնախառն կայլակնացեալ՝ և վտակ
վտակ իջանէին ընդ ճակատս իմ. և մարմին
իմ յահագին երկիւղէն սասանէր և դո-
ղայր յոտից մինչև ցգլուխս. և կայի ան-
կեալ երես 'ի գետին՝ և ուժգին գոչմամբ
առ հայր աղօթէի, եթէ հնա՛ր է անցցէ
բաժակս այս յինէն։

12 Ո՛վ մեղաւոր՝ իմացիր թէ որչափ սի-
րեցի զքեզ. զի յորժամ հրեայքն
պաշարեցին զիս սուսերօք և բրօք՝ ջահիւք
և լապտերօք, ոչ կարէին ճանաչել զիս։
Վասն զի այնքան ծարաւիք էին արեան
իմոյ, զի որք անծանօթ էին զինէն՝ և ոչ
էին տեսեալ զսքանչելիքն իմ, զնոսա առա-

քեցին • զի մի՛ գուցէ ողորմեսցին և փա-
խուսցեն , և ոչ ըմբռնիցեն •

Իսկ ես հարցի քաղցր ձայնիւ՝ զո՞
խնդրէք • և նոքա ասեն՝ զՅս̅ • ասացի՝ ե՛ս
եմ • և նոքա յահէ իմմէ զգետնի հարան •
և ես գթացեալ յարուցի զնս̅ • իսկ նոքա
ոչ ողորմեցան ինձ ։ Եհար պետրոս սրով՝
և՚ի բաց եհան զունկն ծառայի քահա-
նայապետին • իսկ ես զսուրն պետրոսի ար-
գելեալ յետս դարձուցի • և զհատեալ
ունկն առեալ եդի ՚ի տեղին , և բժշկեցի •
և ոչ այսու գթացան յիս ։

13 Եւ զի՞նչ ասացից զանողորմ բարուց
նց̅ • զի թէ անդամալուծն՝ որ ան-
կեալ կայր ՚ի սրահին բեթհեզդայ զերե-
սուն և ութ ամ • որ այնքան տէր ոչ ունէր՝
զի երբ ջուրքն յուզէին , մուծանէին զնա
յաւազանն զի բժշկեսցի • մինչ այլքն
վաղվաղակի ընդ յուզել ջրոյն իջանէին ,
և բժշկեալ գնային ։ Իսկ տեսեալ իմ ըզ-
տառապանս անդամալուծին՝ գթացայ նմա
և ողորմեցայ , և բժշկեալ ողջացուցի •
դարձեալ տեսի ՚ի տաճարին՝ և պատուի-
րեցի ասելով , այլ մի՛ ևս մեղանչեր , զի

մի՛ և ս չար ինչ լինիցի քեզ·

Իսկ 'ի գիշերին յայնմիկ մինչդեռ զին- ուորքն կային 'ի բացեայ՝ և ոչ էին մեր- ձեցեալ յիս, անդամալուծն այն՝ վասն այն զի ճանաչէր զիս յորմէհետէ բժշկեալ էի, իսկոյն փութացեալ 'ի թռիչս՝ եհաս առա- ջի իմ· և զառաջին ապտակն նա եհար յերեսս իմ· և ես ինչ ոչ արարի նմա, վ՜ն զի մարդասէր եմ· այլ և 'ի զղջմանն նորա՝ արքայութե՜ իմոյ արժանացուցի զնա։

Արդ՝ եթէ դա՛ զայս գործեաց առիս· ապա անծանօթ հրեայքն և զինուորքն զինչ արարին ինձ 'ի գիշերին յայնմիկ· և վ՜ն սիրոյ մեղաւորիդ համբերեցի այսքան- եացս· և դու յայսպիսի բարի արարչէս երես դարձուցանես, և զիս 'ի սուգ դառ- նութեան պահես·

14 Ո՛վ մեղաւոր՝ տե՛ս զսէր իմ 'ի վերայ քո· զի յորժամ ըմբռնեցին զիս, թողին զիս միայն աշակերտքն իմ՝ և ինք- եանք փախեան· գառնս մի էր՝ և գայլքն բազումք· ոչխարս մի էր՝ և գազանքն յո- լովք· որոջս մի էր՝ և արեանարբուքն յա- ձախ· անմեղս յանապատի մի էր՝ և շնա-

բարդ որսօղքն յոքունք. եղնս պարարակ մի էր՝ և զենօղքն շատք. արդար աղաւնիս մի էր՝ և վայրենի թռչունքն բազումք. ողջախոհ տատրակս մի էր՝ և սևաթորմն ագռաւքն բազմերամք:

Իսկ թէ զինչ գործեցին յայնժամ ըն-դիս՝ ասացից և զայն. Նախ մերկացուցին զանկար պատմուճանն իմ, և ապա հանին զպարեգօտն իմ. բացին զգլուխ իմ, և կապեցին զձեռս իմ 'ի թիկանց կուսէ. արկին չուան 'ի պարանոցս իմ, և սկսան տանել. և թէ որպէս, լուր և զայն:

Նոքա որք յառաջմէ էին՝ քարշէին 'ի վերայ երեսացս, և որք զկնի՝ ձաղէին ըղ թիկունս. որք 'ի յաջմէ՝ ապտակէին զծընօտս, և որք 'ի ձախմէ՝ թքալից առնէին զերեսս. որք 'ի բացեայ՝ հող արկանէին զգլխովս, և որք 'ի հեռուստ՝ ձայն բարձեալ հայհոյէին և անարգէին. որք սակաւ մերձ՝ այպանէին և կատակեալ ծաղր առնէին նախատանօք. կէսք փութով արշաւէին աւետատու յապարանս քահանայապետին. և ապա զինչ: Իբրև լուան յաւետաւորացն, փութանակի ձայն ար-

ձակեցին առ միմեանս՝ եթէ կապեալ են զՅս̃՝ և բերեն կապանօք, եկայք փութասցուք ընդ առաջ նորա։

Իսկ ո՛վ ոք էր յառաջ եկելոց բազմութենէն՝ որ ո՛չ եհար զիս. ո՛վ ոք էր՝ որ ո՛չ ապտակեաց զիս. ո՛վ ոք էր՝ որ ո՛չ ձաղեաց զիս. ո՛վ ոք էր՝ որ ո՛չ եթուք յերեսս իմ. ո՛վ ոք էր՝ որ ո՛չ կուփահարեաց զգլուխս իմ. ո՛վ ոք էր՝ որ ո՛չ բռնցի եհար զպարանոց իմ. ո՛վ ոք էր՝ որ ո՛չ բրօք հարկանէր զթիկունս իմ։ Ո՛վ ոք էր՝ որ ո՛չ թշնամանեաց զիս բանիւ, կամ ո՛չ անարգեաց, կամ ո՛չ նախատեաց, կամ ո՛չ արհամարհեաց, կամ ո՛չ կատակեաց, կամ ո՛չ ծաղր արար, մինչև հասուցին յապարանս կայիափայ և աննայի. և ես վասն սիրոյ քո զայս ամ̃ կրեցի. և դու ատես զիս, և զմեղս սիրես։

15 Արդ եթէ ասեմ զոր ինչ արարին ընդ իս, յորժամ տարան մուծին կայիափայ և աննային, զարհուրիս 'ի լսելն։ Ասացին՝ ո՛չ անխրատաբար դատեմք մեք զՅս̃, այլ օրինօք և դատաստանաւ. եդին ատեան, և նստան քահանայապետքն

հանդերձ ծերովք. կացուցին սուտ վկայք, թէ հակառակ ա̃յ է. թէ խափանիչ օրինաց է. թէ լուծիչ շաբաթու է. թէ քակիչ տաճարի է. թէ հայհոյիչ ա̃յ է. թէ զաւանդս ծերոց արհամարհէ. և այլ ևս բազում։ Իսկ այնուհետև սկսան աղաղակ բառնալ և ասել՝ ոմանք թէ մահապարտ է, ոմանք թէ ՚ի խաչ հանել արժան է. այլք պատառէին զհանդերձս՝ թէ հայհոյեաց զա̃ծ, այլք թէ չարագործ է. և ես տարեալ համբերէի ա̃մի վ̃ն մեղաւորիդ.

Իսկ անտի հանեալ տարան ՚ի տունն Աննայի, անտի կապարանան պիղատոսի, անտի կիջևանս հերովդէի, անտի դարձեալ կապարանան պիղատոսի. և զգիշերն ա̃մ ոչ ետուն հանգիստ ական թօթափել մի, այլ շրջեցուցանէին կապարանից կապարանս։ Իսկ թէ որչափ ծաղր և նախատինս և անարգանս և չարչարանս անցուցանէին ՚ի գլուխս իմ զգիշերն ա̃մ ՚ի տարուբեր առնելն՝ զայնոսիկ թողում, զի ոչ կարես տանել։

16 Իսկ զիա՞րդ լիցի քան զայն առաւել սէր՝ որ զքեզ սիրեցի, զի և ոչ

մօր իմոյ մարիամու ողորմեցայ · յորժամ տեսանէր մայր իմ զմիածին որդի իւր զարարիչս երկնի և երկրի 'ի վերայ խաչին մերկացեալ՝ և զմարմին իմ արիւնըռուշտ ներկեալ · թևեռօք անդեալ · զկողս հերձեալ · զերեսս իմ այլագունեալ · զգլուխս խոնարհեցուցեալ · զոգիս աւանդեալ ։

Արդ՝ կարէ՞ ոք 'ի մարդկանէ կամ 'ի հրեշտակաց իմանալ, թէ ո՞րքան սուգ ունէր նա · ո՞րքան կսկծեր · ո՞րքան այրեր սրտիւ · ո՞րքան մորմոքեր · ո՞րքան խարշատեր · ո՞րքան վառեր · ո՞րքան սգայր · ո՞րքան հեծեծեր · ո՞րքան հառաչեր · ո՞րքան տխրեր · ո՞րքան խռովեր · ո՞րքան տագնապեր · ո՞րքան յոգւոց հանէր ։ Ո՞րպիսի ողբայր · ո՞րպիսի արտասուս հեղոյր · ո՞րպիսի երգս եղանակեր · ո՞րպիսի ձայնս արձակեր · ո՞րպիսի բանս բարբառեր ։ Օ իա՞րդ գիրկս խաչին արկանէր · զիա՞րդ զբազուկն իւր ձգեր առ իս, և ո՛չ հասանէր · զիա՞րդ յերկիր անկանէր · զիա՞րդ հող զգլխովն տայր · զիա՞րդ կականէր · զիա՞րդ թախանձէր · զիա՞րդ խանդաղատեր ընդդէմ միածնիս իւրոյ մահացելոյ · զիա՞րդ զերկնային զօրսն

'ի յողբս խոնարհեցուցանէր · զիա՞րդ զըղջալի արարածս յարտասուս շարժէր · զիա՞րդ զուղաբէր կանայսն ընդ ինքեան յերկիր ընկենոյր ։

Արդ 'ի ժամուն յայնմիկ՝ մայրն իմ որ զայսպիսի կսկիծս կրէր, մեռեա՞լ էր, եթէ կենդանի · յարթնութեան էր, եթէ յերազի · 'ի զգաստութեան էր, եթէ 'ի թմբրութեան · և այսքան աղէտից մօր իմոյ ես ոչ ողորմեցայ վասն քո, և դու երբեաս շրջես յինէն՝ և 'ի թշնամւոյն կողմն դառնաս ։

17 Ո՛վ մեղաւոր իմ՝ որ այժմ քաղցրութբ̃ կոչեմ զքեզ յապաշխարութի̃, և դու ոչ լսես ինձ · եթէ յանզղջութեանդ մեռանիցիս, մի՛ այնքան երկնչիր 'ի բազմութե̃ մեղաց քոց՝ որքան յիմ երախտեացս և 'ի չարչարանաց · զի քան ըզ մեղաց քոց հատուցումն՝ հազարապատիկ տանջելոց եմ զքեզ 'ի հնոցի հրոյն որ արհամարհեցեր զչարչարանս իմ, և ունայնացուցեր զմարդեղութիւնս իմ, և 'ի զո՜ւր հաներ զիջումն իմ յերկնից յերկիր որ վասն քո ։

Զարչարանքն իմ զոր կրեցի վասն մեղաւորաց, այն պարտք է ՚ի վե՛ր մեղաւորաց. զի թէ ապաշխարութե՛ն ոչ վճարեսցեն ըզպարտս չարչարանաց իմոց և տացեն թողութիւն, ՚ի դատաստանին իմում զմեղաց իւրեանց հատուցումն այն չափո՛վն եմ տալոց՝ որքան գործեցին. իսկ զպարտս չարչարանաց իմոց հարիւրապատիկ՝ զի արհամարհեցին.

18 Ո՛վ մեղաւոր ասա՛ ինձ՝ զի՛նչ վնաս տեսեր յարարչէս քո քո՛է, որ այսքան ատես զիս. կամ զի՛նչ բարութի՛ւն տեսեր ՚ի սատանայէ, որ այդքան սիրես, և զկամս նո՛ր կատարես քո զազիր գործովդ: Եթէ ունկն մատուցանես ինձ, ահա՛ այժմ ըզ սատանայի բարութի՛ւն ցուցանեմ քեզ զոր արար: Սա սատանայ էր՝ որ զմայր քո խաբեաց օձիւն, և նովաւ զհայր քո ադամ: Սա սատանայ էր՝ որ ետ ուտել հօր քում զպտուղն: Սա սատանայ էր՝ որ մերկացոյց ՚ի լուսեղէն պատմուճանացն: Սա սատանայ էր՝ որ փախոյց յերեսաց ա՛յ, և թաքոյց ՚ի ներքոյ թզենւոյն: Սա սատանայ էր՝ որ ՚ի ներքոյ անիծիցն ա՛յ մատնեաց զհայր քո

և զմայր ։ Ո՞չ սատանայ էր՝ որ ետ արտաք-
սել յամենավայելուչ դրախտէն անմահութե՛ ,
և գրաւեաց ՚ի ներքոյ մահու ։ Ո՞չ սատանայ
էր՝ որ զամս ինն հարիւր կսկծեցոյց ընդ-
դէմ անմահական դրախտին սատակագին
արտասուօք ։ Ո՞չ սատանայ էր՝ որ զպայ-
ծառութիւն լուսեղէն պատմուճանին հօր
քո՝ ՚ի մաշկեղէն հանդերձ փոխարկեաց ։
Ո՞չ սատանայ էր՝ որ զանաշխատ վայելումն
՚ի պտղոց դրախտին՝ ՚ի քրտունս երեսաց
դարձոյց վարել ։ Ո՞չ սատանայ էր՝ որ
զրկեաց ՚ի հրեշտակական աճմանէն՝ և ար-
ժանացոյց անասնական աճման , և այն՝
ցաւօք և տրտմութբ ։ Ո՞չ սատանայ էր՝ որ
զհոգիս հօր քո ծննդովք իւրովք զամս
հինգ հազար ՚ի դժոխս արգելեալ պահ-
եաց , մինչև ես գթացեալ ողորմեցայ , և
եկեալ խաչիւն ազատեցի ։ Արդ՝ եթէ
ընդ նախնի հայրն քո ադամ զայս արար ,
ընդ քեզ ապա զի՞նչ կամի առնել՝ որ այդ-
քան սիրես զսատանայ ․ և դու մի՛ տիր
զի և զքոյն ասացից ։

19 Ո՛վ մեղաւոր՝ կամի զքեզ սատանայ
ջնջել ՚ի հօր այ որդեգրութենէ ։

Կամի որոշել ՚ի հոգւոյն իմոյ բնակութիւն ։ Կամի բաժանել զքեզ յորդւոյս իմ եղբայրութենէ ․ Կամի զքաղցր սէրն իմ հօր՝ որ զմխածինս ես վասն քո ՚ի մահ, ՚ի յատելութիւն փոխել ․ Կամի զերթեւեկութիւն հոգւոյն իմոյ ՚ի քէն արգելուլ ։ Կամի յաստուածային անձառ շնորհաց վայելչութենէն զրկել ։ Կամի զտիրական տաճարդ հիմնայատակ քակել ։ Կամի զարարչին իմաստութեամբն յօրինուած պատկերդ՝ ՚ի յերկիր կոխել ։ Կամի զցանկալի տիպդ երրորդութեանն՝ չարաչար մեղօքդ եղծանել ․ և այն ՚ի կարգին ։

20 Ո՜վ մեղաւոր՝ որ սիրեսդ զսատանայ, տես զցանկութիւն դորա վասն քո ։ Ցանկայ սատանայ զաւազանին շնորհն զոր ընկալար ՚ի հոգւոյն իմոյ՝ ՚ի քէն եղծանել ։ Ցանկայ զմկրտութեան լուսապայծառ պատմուճանն զոր զգեցար՝ մերկացուցանել ։ Ցանկայ ՚ի կենարար մարմնոյ և յարենէ իմմէ սովամահ զքեզ սատակել ։ Ցանկայ զերկնային հարսանեաց հանդերձդ աղտեղացուցանել ։ Ցանկայ զլապտեր կուսութեան քո շիջուցանել ։ Ցանկայ զբացեալ դրունս

առագաստի երկնաւոր փեսայիս ընդդէմ քո փակել ։ Յանկայ զվայելուչ տունկդ-ադենական դրախտին յարմարոց խլել ։ Յանկայ զուռնդ գեղեցիկ՝ որ հաստատեալ ես 'ի ճշմարիտ որթս յն՝ սրով հատանել ։ Յանկայ զանթառամ ծաղիկդ արարչին՝ խորշակաւ մեղաց թառամել ․ և այլն

'ի կարգին ։

21 Ո՛վ մեղաւոր՝ փորձեա՛ և զչարիսն սատանայի՝ որ սիրեսդ զնա ։ Ո՛ չարի սատանայ՝ եթէ 'ի մեղացդ քոց զղջացիս ։ Ո՛ չարի՝ յորժամ զգործեցեալ յանցանքդ խոստովանեսցիս ․ Ո՛ չարի՝ յորժամ մեղայ ասելով առ տէր քո դարձցիս ։ Ո՛ չարի՝ յորժամ անկեալ յերկիր՝ առիս արտասուօք պաղատիս ։

Վիրաւորի դառնայցես՝ յորժամ յինէն զթողութիւն մեղաց քոց ընկալցիս ։ Նախանձի բորբոքմամբ հրոյ՝ յորժամ ըզ տէրս քո ապաշխարութբ վերստին 'ի հոգիդ քո ընդունիցիս ։ Տոչորի կսկծմամբ՝ յորժամ յարարչէս քո պատուօք մեծարիցիս ։ Տագնապի մեծաւ տանջանօք՝ յորժամ անթարշամ բրաբիոնօք պայծա-

ռասցիս ։ Կատաղի բարկութեամբ չարա-
չար՝ յորժամ երկնային փառօքս իմ պսա-
կեսցիս ։ Սահանայ չարութե՛ յորժամ
անվախճան կենօք ընդ հրեշտակս իմ պար-
տուեալ՝ յաղթութես երկնից բերկրու-
թեամբ հրճուեսցիս ։

22 Տես ո՛վ մեղաւոր, որ սիրես զսատա-
նայ՝ և կատարես զկամս նորա, եթէ
զինչ խոստանայ քեզ ։ Խոստանայ քեզ
սատանայ բարութի՝ զանդունդս անդնդոց ։
Խոստանայ քեզ վայելչութիւն՝ զգողեց-
եալ և շարաւալից զտաղտկալի և զազրալի
տեսութի կերպարանաց իւրոց, որ դառ-
նագոյն է քան զհուր դեհենին ։ Խոստա-
նայ քեզ զպարտակցութի ժանտատեսիլ և
գարշատեսիլ դասուցն դիւաց ։ Խոստա-
նայ քեզ հանգիստ՝ զկաթսայս անդնդայ-
ին եռանդիցն, և զգոգս հրաբորբոք տա-
պականն ։ Խոստանայ քեզ պատմուճան՝
զխաւարն արտաքին, որ է թանձր և շօշա-
փելի ․ ուր լալ աչաց է՝ և կրճել ատամանց ։
Խոստանայ քեզ սեղան՝ զծոցս լայնութե
յատակացն դժոխոց ։ Խոստանայ քեզ
զէնլիք՝ զորդունքն անքուն և զվիշապքն

բ

ահագին հրեղէն ծովուն։ Խոստանայ քեզ կերակուր՝ զհաց քրոյից հալոցացն սարսռելի իջելոցն։ Խոստանայ քեզ ըմպելի՝ զսարսափելի հոսանս հրեղէն գետոցն։ Խոստանայ քեզ լապտերք՝ զցոլմունս շանթից հրաբորբոք փայլատակման կայծականցն։ Թող զտարտարոսն և զայլսն ամ՝ զոր խոստանայ սատանայ իւրոց սիրողացն և կամարարաց։

23 Ո՛վ մեղաւոր՝ ընդէ՞ր զերախտիս արարչիս քո ոչ իմանաս. զի սատանայ յիմ աւուր մահուանդ սպասէ, զի 'ի մեղս մեռցիս. և ես աներևոյթ զօրութե իմով կիզեմ միշտ որդ հրով. և հրեշտակք իմ հարկանեն զնա հրեղէն սրով՝ և'ի բաց փախուցանեն 'ի քէն, զի մի մահու մատնեսցէ քեզ։ Գիտէ չարն զի ես մարդասէր եմ. և երկնչի՝ եթէ մարդ մեղաւոր կենդանի մնալով յանկարծակի զղջասցի, և ողորմութիւն գտցէ 'ի ձեռս իմ, և ելանիցէ յինքենէ։

Արդ ընդէ՞ր 'ի բաց փախչիս 'ի քաղցր քնէս քումմէ, որ հրեշտակք անդադար տեսանելով՝ ոչ յագենան 'ի քաղցրութե-

ինմէ . զինչ չար կամիմ քեզ, որ այդպէս հրաժարիս յինէն։ Վասն այն՝ զի զմոլորեալդ խնդրեմ. զի զկորուսեալդ գտանեմ. զի զվիրաւորեալդ սփոփեմ. զի զհարուածեալդ բժշկեմ. զի զընկղմեալդ վերաբերեմ. զի զտարաբերեալդ 'ի հողմոց հանդուցանեմ. զի զծփեալդ 'ի յալեաց խռովութեանց՝ 'ի նաւահանգիստն ածեմ.

24 Ո՛վ մեղաւոր՝ 'ի միտ առ թէ զինչ կամիմ քեզ առնել. և սիրեմ զխս՝ որ սիրեցի զքեզ, և սիրեմ զքեզ, և սիրելոց եմ զքեզ։ Կամիմ 'ի հիւանդութենէդ բժշկել զքեզ. կամիմ 'ի մեռելութենէ մեղացդ յարուցանել. Կամիմ յանփարատելի սգոյդ հանել. կամիմ 'ի դառն տրտմութենէդ մխիթարել. Կամիմ 'ի սաստիկ վիրացդ բժշկել. կամիմ 'ի չար տառապանացդ զերծուցանել։ Կամիմ 'ի տոռանց կապանաց մեղացդ արձակել. կամիմ 'ի ծառայութենէ չարեացդ ազատել։

Ո՛վ մեղաւոր՝ ծանիր եթէ անյիշաչար տէրս քո զինչ խորհիմ քեզ։ Խորհիմ զի անձամբ իմով եկեալ զանբուժելի խոցուածս հոգւոյդ քո տեսից։ Խորհիմ զի

զգարշութիս դորա ձեօք իմովք լուացից։ Խորհիմ զի զաղտեղութի դորա դաստառակաւ իմով սրբեցից։ Խորհիմ զի զնեխեալ փտութի դորա կտրեցից։ Խորհիմ զի զթարախն 'ի հոգիդ քո բունեալ քամեցից։ Խորհիմ զի զարտասուս իմ ածային՝ 'ի վր աղտեղութե հոգւոյդ աղբիւրաբար հեղից։ Խորհիմ զի զբազմութի իմ չարեաց դորա ընջեալ մաքրեցից, և յառաջին փառսն հաստուցից. միայն զղջասցի 'ի չարեաց քոց և դադարեսցէ։ Խոստովանեա՛ ըզ յանցանս քո՝ և ասա՛ մեղայ. և ես ընջեմ զբազմութի մեղաց քոց, թէպէտ և կարի սաստիկ ես մեղուցեալ։

25 Մեղաք որդւոց հաւատարիմ ծառայք իմ, մի՛ զարմանայք ընդ անուխակալ փրկիչս ձեր, եթէ զխո՛րդ այսքան խանդաղատիս տէրդ մեր և արարիչդ 'ի վր մեղաւորաց։ Արդ՝ մի՛տ դի՛ք, զի ասեմ ձեզ զսէր իմ՝ զոր ունիմ 'ի վերայ մեղաւորաց։ Նրանք ինունց դասուց հրեշտակացն՝ որոց թիւ բազմութեն անթուելիք են 'ի մարդկանէ և անգիտելիք, այնքան հրաբուն էութիւն և լուսապայծառ բազմու-

Թ՟քն , յորժամ տեսանեն զպաստիկ սուգ-
իմ՝ զոր սգամ ՚ի վ՟ր միոյ անդարձ մեղա-
ւորի , ամենեքեան առ հասարակ մեծաւ
զուարթութ՟բ ջանան մխիթարել զիս . եւ ոչ
կարեն սակաւ մի հանդարտեցուցանել զղ
սուգ իմ . զի վասն այնորիկ զմահ խաչի
յանձն առի , զի մի՛ ոք երբէք կորիցէ ։
Եւ դունդք ա՟մ արդարոցն՝ որք կան
առ իս յարքայութ՟ս խնուլ, դողան ողբա-
լով առաջի իմ. եւ ոչ բաւեն փոքր մի փա-
րատել զտրտմութ՟իս իմ ։

26 Լո՛ւր եւ զայլ ահաւորս որ պատմեմ
քեզ . զի մայրս իմ ա՟ծածին յորժամ
տեսանէ զիս ՚ի յայսքան տարակուսանս , ՚ի
ծունկս անկանի առաջի իմ . եւ զստինսն
բացեալ որով դիեցի , ողբալով աղաղակէ՝
եւ զմատունսն տատանէ՝ ասելով . Որդեակ
իմ միածին , մի՞թէ ոչ էր բաւական վիշտն
այն եւ տրտմութ՟ին՝ զոր կրեցեր յաշխարհի
՚ի հրէից եւ ՚ի խաչահանողացն , եւ դեռ եւս
տրտմի՞ս . ընդէ՞ր ոչ ողորմիս մօրս քո լա-
լագին , եւ ոչ հանդարտիս սակաւ մի ՚ի
տխրութ՟էդ ։ Ո՞չ էր բաւական մօրս տա-
ռապելոյ կսկիծն այն եւ մորմոքումն , յոր-

ժամ տեսի զմիածինդ իմ 'ի խաչին , ար-
իւնաներկ մարմնով մահացեալ . և դեռևս
հրով կիզես զսիրտս իմ սուգ ունելովդ ։
Եւ այսու ամ̃բ ընաւ ոչ գայ 'ի սիրտ
իմ ուրախութիւն , որքան տեսանեմ զան-
դարձ մեղաւորըն արտաքս ելեալ 'ի դաւ-
թէ , և հեռացեալ 'ի հօտէ իմմէ , և ան-
կեալ 'ի ձեռս սատանայի ։

Վասն զի այնքան կսկծի սիրտ իմ՝ և
տրտմի հոգի իմ 'ի վս̃ միոյ անդարձ մեղա-
ւորի , որ երկինս երկնաւորօք , և երկիրդ
երկրաւորօք , և ծով ամ̃ լրիւ իւրով իբրև
յոչ ինչ համարին յաչս իմ ։

27 Դու մի՛ զարմանար ընդ այսքան աղէ-
կիզելս իմ 'ի վս̃ մեղաւորաց . ծանի՛ր ով
մարդ , զի յորժամ տնկես զբարունակ մի ,
և յետ. երրորդ ամի աշխատութե̃ քո՝ եթէ
ոչ տացէ պտուղ քեզ՝ վիրաւորիս դու
ընդ այն . իսկ եթէ չորասցի , սգաս մեծա-
տրամութեամբ , թէ 'ի զուր աշխատեցայ
զերիս ամս , և ջանն իմ կորեաւ ։

Ապա զիա՞րդ ես ոչ տրտմեցայց 'ի վերայ
մեղաւորին , որ վս̃ նորա յերկնից 'ի յեր-
կիր իջի . 'ի կուսէ մարմին առի . ծնա

մարդ եղէ, և տ՟րս ծառայ․ զամս երեսուն և երեք 'ի յերկրի շրջեցայ․ կենարար վարդապետութ՟եամբ 'ի լսելիս մեղաւորաց միշտ քարոզեցի․ ա՟ծային նշանօքս զբազումս բժշկեցի․ ազգի ազգի չարչարանս և նախատինս կրեցի․ 'ի խաչին բարձրացայ․ զարիւնս իմ գին ետու, և 'ի գերողէն առեալ փրկեցի։

Արդ այս ա՟մ չարչարանացս իմոց պտուղ՝ փրկութ՟ի մեղաւորին է։ Իսկ եթէ մեղաւորն 'ի մեղս մեռանիցի, պտուղ չարչարանաց իմոց կորնչի․ և ես 'ի խո՛ր խոցոտիմ և վիրաւորիմ․ զի ունայն եղև տնօրէնութ՟ի իմ վասն նորա։ Իսկ յորժամ մեղաւորն զղջանայ 'ի մեղաց իւրոց և գայ յուղղութ՟ի, ուրախանամ ես և ցնծամ․ յայնժամ ցնծայ ընդ իս Հայրն իմ և Հոգին ս՟բ։ Ուրախանան և ա՟մ հրեշտակք իմ․ հրճուին ա՟մ գունդք արդարոց, և ցնծացեալ երկիր մայր իմ թագուհի․ և 'ի միասին պար առեալ տօնախմբութիւն մեծ կատարեն յերկինս առաջի իմ․ վասն զի պտուղ չարչարանաց իմոց ո՛չ կորեաւ։

28 Ով մեղաւոր՝ սիրեա՛ զիս որ սիրեմս զքեզ․ հրաւիրեա՛ զիս առ քեզ ըդ-

բաղձալիս հրեշտակաց և հրեշտակապետաց, և զցանկալիս արդարոց · ո՛չ գարշիմ 'ի հողեղէն յարկացդ · չտաղտկամ յաղքատութենէդ · չխոտեմ զանմաքրութիւնդ ։

Մաքրեա՛ զաւազանս սրտիդ · ջանա՛ բուրել հոտ անուշունս զաղօթս · պատրաստեա՛ սեղան ողջարդ · պարգեւեա՛ գինի զողորմութիւնդ · սփռեա՛ պաստառակալ ըզխոստովանութիւնդ · փթթեա՛ վարդ զսէրդ · ա՛րկ բազմակալ զապաշխարութիւնդ · լարեա՛ զտասնաղի մատանցդ առաջի իմ 'ի քնարահարութիւն · կոչեա՛ զսուրբս քեզ 'ի բարեխօսութիւն՝ և ինձ հիւրամեծար · բաւական է ձայնդ · տուն է սեղանդ · պայծառ է կոչումնդ ։

Դու եթէ ախորժես, զհայր իմ ընդ իս ածեմ · ես և հայր իմ եկեսցուք, և օթեւանս առ քեզ արասցուք ։ Օ՜ այս այսպէս արասցես, և զիս երախտաւոր առաջի հօր իմոյ կացուսցես · զի խորհուրդ գալստեան իմոյ յաշխարհ ոչ ունայն երեւեսցի · այլ ծանիցի մարդկայինն բնութիւն առաւել քան զհրեշտակաց և զհրեշտակապետաց ։ Դու խրախացեալ հայր իմ՝ օրհ-

նեսցէ զքեզ բերանոյն իւրով յօրհնու-
թեանս՝ որ ոչ անցանէ. և պատրաստեսցէ
քեզ զտեղի ՚ի վեր քան զբնակութիս հրեշ-
տակաց. ուր եսն եմ՝ անդ և պաշտօնեայն
իմ եղիցի. և կեանքն ձեր ծածկեալ են
ընդ. առ ա՟ծ ։ Յուս ՚ի միւսանգամ գա-
լստեան իմոյ՝ զօրհնեալսն ՚ի հօրէ իմմէ
մերձեցուցից առ հայրն իմ, և ասացից՝
Ահաւասիկ ես և մանկունք իմ զորս ե-
տուր ցիս ։

26 Ո՛վ մեղաւոր՝ ընդէ՞ր ոչ երկնչիս յա-
հեղ զօրութենէ իմմէ, որ ոչ գաս
յուղղութի, մինչ սիրով և քաղցրութբ
կոչեմ զքեզ յապաշխարութի ։ Ծանիր
զի ՚ի հայելն իմ՝ երկիր ՚ի հիմանէ դողայ,
և լերինք որպ զմոմ հալին, և ծովք իբրև
զխուխ չորանան, և դժոխք յես խորագոյն
անդունդս ընկղմի ։ Իսկ զիա՞րդ ոչ զար-
հուրիս, զի զօրութի իմ զհողմ և զհուր
հատանէ ։ Կամ թէ ո՞րպ ոչ սոսկաս, զի
անձառ բնութիք ահեղակերպից հաշեալ
տապակին ՚ի հրակիզմանէ փայլատականց
ահաւորութե իմոյ. Կամ զիա՞րդ ոչ սար-
սափիս, զի սերովբէք և քերովբէք ծած-

կեն զդէմս խուրեանց բոցանիւթ թեւօք յաշտարկութէ̄ իմմէ։ Եւ զիա՞րդ ոչ դողաս, զի թէ կայր հնար փախստեան, ոչ կարէր կալ երկինք առաջի իմ. նա՝ և ա̄մ տարրական տեսակք, և երկիր լրիւ խուրով հանդերձ անդնդային հաստատութեամբն հեղձոյր յայլևս անհուն խորութիւն յերկիւղէ իմմէ. Եւ կամ որո՞վ ոչ սասանիս, զի թէ երկինք երկնից ունէր ևս տեղի թաքստեան, ոչ հանդուրժէր կալ ’ի ներքոյ պատուանդանի ոտից իմոց ’ի յահէ իմմէ։ Եւ կամ զիա՞րդ ոչ պակնուս, զի եթէ գոյր հնար ծածկութե̄, ա̄մ բանակք անմահից դիմեալ անկանէին ’ի նա, և թաքչէին յերկիւղալի արփիափայլ ճառագայթից իմոց։ Եւ վասն այն ներեմ քեզ, զի մի՛ կորիցես զյաւիտենական կորուստն. այլ ’ի զղջումն եկեալ՝ փրկեսցիս ’ի հրոյ գեհենին. և դու արհամարհես զարարիչս քո, և ոչ երկնչիս և դողաս ’ի յահեղ զօրութենէ իմմէ.

30 Ո՛վ մեղաւոր՝ մինչդեռ ես քաղցրութ̄ խօսիմ ընդ քեզ, երկնչիր յինէն, ողորմեա՛ց քեզ. զի եթէ ’ի հրեշտակս իմ

ոչ խնայեցի որ ընդդէմ իմ հպարտացան . այլ 'ի յերկնից 'ի յանդունդս իջուցի զարկութ̃բ իմով ։ Եւ առ նոյնս՝ որ յաճախեցան 'ի պոռնկութիս , զայնքան բազմութ̃ մարդկան առ հասարակ ջրհեղեղաւն հեղձուցի ։ Զսոդոմ և զգոմոր՝ որ արտաքոյ բնութ̃ե զչարիսն գործէին , երկնատեղաց բոցո̃վ կիզեալ մաշեցի ։ Զդոռոզն փարաւոն՝ որ խստացաւ ընդդէմ իմ , բազմութեամբ զօրաց իւրոց 'ի ծո̃վ կարմիր ընկղմեցի ։ Զկորխեանսն և զաբիրոնեանսն՝ որ զքահանայութ̃ին իմ բռնութ̃բ յափշտակել կամէին , զերկու հարիւր և յիսուն 'ի հրոյ բուրվառացն այրեցի . և զբանակն աբիրոնի՝ զերկիր պատառեալ յանդունդս ընկղմեցի ։ Զերիքով՝ որ ընդդէմ իմ թշնամի դարձաւ , զպարիսպս նորա որո̃վ զջուր հեղի . և զբնակիչս նո̃ր 'ի սուր սուսերի մաշեցի ձեռամբ ծառային իմոյ յեսուայ ։ Զզօրսն սենեքարիմայ արքային ասորեստանեայց՝ որ հայհոյեաց զանուն իմ ս̃բ , զհարիւր և ութսուն և հինգ հազարսն՝ 'ի դուռն քաղաքին իմոյ երուսաղէմի 'ի յական թօթափելն 'ի մէջ

գիշերին՝ ետու հրաման հրեշտակի իմոյ , զի սատակեսցէ զնոսա հրեղէն սրով ։

Իսկ արդ՝ ո՞վ է որ հակառակ կամաց իմոց գործէ , և ո՛չ չարաչար պատուհասի · նոյն ա՟ծն եմ, եթէ 'ի բազումս ո՛չ խնայեցի , նոյնպէս և 'ի մինդ ։ Եթէ քաղցրութե՟ ձայնի իմոյ ո՛չ լուիցես , և զզջասցիս 'ի մեղաց և դարձցիս , հարիւրապատիկ ես զքեզ առաւել տանջելոց եմ քան զնոսա 'ի գեհեան հրոյն · որպէս ասացի , թէ դիւրագո՛յն լիցի յաւուրն դատաստանի սոդոմայեցւոց և գոմորացւոց քան քաղաքիս այսմիկ ։

31 Ապա եթէ ասիցես ընդ իս , տէ՛ր իմ՝ այսուհետև և ես սարսիմ և դողամ մեծաւ երկիւղիւ յահեղ զօրութէ՟ քումմէ , որպ՟ և ա՟մ արարածք · բայց զինչ արարից , քանզի տարակուսիմ 'ի բազմութէ՟ մեղաց իմոց , եթէ զիարդ ողորմեսցիս և թողուցուս ինձ ։ Իսկ արդ՝ 'ի մի՛տ առ զանուանս իմ, և ուրա՛խ լեր · և մի՛ տարակուսիր ընդ բազմութի՟ մեղաց քոց ։

Անուն իմ ողորմած է · անուն իմ երկայնամիտ է · անուն իմ բազումողորմ է ·

անուն իմ անոխակալ է. անուն իմ անյի-
շաչար է. անուն իմ քաղցր է. անուն իմ
ամենաբարի է. անուն իմ մարդասէր է։
Անուն իմ բժիշկ հիւանդաց է. անուն իմ
յարութիւն անկելոց է. անուն իմ կեանք
մահացելոց է. անուն իմ լոյս խաւարելոց է։
Անուն իմ փրկիչ գերելոց է. անուն իմ
նորոգիչ հնացելոց է. անուն իմ գտիչ մո-
լորելոց է, և այլն 'ի կարգին. և դու ընդէ՞ր
տարակուսիս 'ի բազմութ̅է մեղաց քոց։

32 Բայց որովհետև խոստացար ինձ, թէ
այսուհետև և ես երկնչիմ 'ի քնէդ
իմմէ, և տարակոյսդ քո վասն շատութեան
մեղացդ էր. նմանապէս և ես այսուհետև
յաւելում զսէրն իմ, զգութն իմ և զողոր-
մութ̅ին իմ 'ի վ̅ր քո. և խրատ տամ քեզ՝
եթէ զի՛նչ արասցես դու։

Ո՛վ մեղաւոր՝ միայն զայս արասցես, զի
հրաժարեսցիս 'ի հնազանդութ̅է չար կա-
մացն սատանայի, և հեռասցիս 'ի պիղծ
գործոցդ սովորութ̅է. եկեսջի՛ր 'ի զղջումն
ո՛չ զղջմամբ. ասա՝ աւ հայր քո մեղայ, ո՛չ
զանուանալ որդին. խոստովանեա՛ զբազմութ̅ի
մեղաց քոց, որպէս զմարգարէն Դաւիթ.

ապաշխարեա՛ զանօրէնութիւնս քո, որպէս զՄա-
նասէ . աղօթեա՛ առ տէր, ասելով՝ ա՛ծ
քաւեա՛ զիս զմեղաւորս, որպէս զմաքսաւորն .
արտասուեա՛ զյանցանս քո, որպէս զպետրոս .
դադարեա՛ց 'ի չար գործոց քոց, որպէս զկինն
պոռնիկ . ասա՛ յիշեա՛ զիս յարքայութեան
քում, որպէս աւազակն . և տես եթէ զի՛նչ
արարից ամենայօր տէրս քո զբազմու-
թիւն մեղաց քոց ։

33 Ո՛վ մեղաւոր՝ եթէ 'ի տուր և յառ շնոր-
հացդ՝ զեօթանասնեկին եօթն ես մե-
ղուցեալ . և թէ անթիւ են չարիք քո քան
զաստեղս երկնից . կամ անհամար է անօ-
րէնութի՛ւն քո քան զաւազ ծովու . և կամ
շատ է քան զաւազ՝ որ ընդ ոլորտս տիե-
զերաց . և թէ յաճախ քան զշիթս անձ-
րևաց . կամ բազում քան զմանրամազ փո-
շիս՝ որք տարուբերին ընդ օդս համատա-
րած ։ Նաև թէ մեծ և ծանր իցէ չարիք քո
քան զա̄մ լերինս՝ որ յերեսս երկրի ։ Նաև
թէ անօրէնութիւնդ քո բարձրացեալ իցէ
քան զերկինս, կամ խոնարհեալ դատանիցի
քան զանդունդս, և կամ լայնացեալ քան
զոլորտս ծագաց երկրի, կամ տարածեալ

անդր քան զշրջանս եթերական օդոց ։

Որդ՝ եթէ մեղք քո և չարիք ըստ այսմ չափոյս իցէ որ ասացի, 'ի զղջմանալդ քո՝ քան զթարթել աչացդ, և քան զառուրևա-ութի շնչոյդ, քան զարագութի նշուլից արեգական, և քան զերևումն կայծական որ 'ի յօդդ, և քան զմտացդ ընթացումն, առաւել ևս բիւրապատիկ քան զարագութի սոցա քաղցրութի շնորհեմ ամ բազմութե մեղաց քոց. քանզի ամենակարօղ արարիչ եմ. և ոչ կարօտիմ ժամանակաց 'ի քաւու-թիւն մեղաց ։ Նա որպէս պղպջակ ջրոյ՝ 'ի յառնելն այնքան խստագին հողմոյ՝ մինչ զի զծառս 'ի յարմատոց խլիցէ, և զաշտա-րակս քակիցէ, որքան կարիցէ զդէմ ու-նել. այսպէս և մեղք ամ աշխարհաց՝ 'ի զղջմանալն իւրեանց, բիւրապատիկ առա-ւել ոչ կարեն զդէմ ունել իմոյ ամենա-կարող զօրութեանս ։

34 Ով մեղաւոր՝ իմա՛ զի դու մարդ ես չափաւոր. և մեղքդ քո թէպէտ բա-զում թուին քեզ, սակայն և այն է չափա-ւոր ըստ նմանութեան քո. այսպէս իմա՛, զի ես Ած եմ անչափ. նմանապէս ըստ

խմում անչափութեան՝ և ողորմութեան իմէ անչափ ։ Որդ՝ դու գործեալ զչափաւոր մեղս քո՝ 'ի ձեռն խոստովանութեան 'ի մէջ իմ անչափ ծովացեալ ողորմութեանս ձգիցես . այնպէս շիջանի դիւրաւ, որպէս փոքր մի կայծ առեալ 'ի մէջ համատարած ծովուն ձգիցես ։

Որդ՝ որպէս ազգի ազգի են ճանապարհք մեղացն . նոյնպէս և զանազանք են դեղք ապաշխարութեան ։ Քանզի ոմանք խորգով և մոխրով արդարացան . ոմանք լալով և արտասուօք զտէրն հաշտեցուցին . ոմանք միայն պահօք և աղօթիւք ապրեցան . ոմանք ողորմութեամբ զողորմութիւն գտին յինէն ։ Ոմանք մարդասիրութեամբ՝ և տկարագունիցն ծառայելով, ոմանք գետնախշտութեամբ, ոմանք խոնարհութեամբ և հնազանդութեամբ դողութիւն մեղաց ընկալան ։

Եւ դու 'ի սոցանէ առ զմինն որ հեշտ թուի քեզ և թեթև . և այնու կարող ես բժշկել զամենայն հիւանդութիւնս մեղաց քոց ։ Ոչ թուով ամաց և կամ բազում ժամանակաց, այլ միայն ուղիղ դարձիւ և ճշմարիտ սրտիւ 'ի չարեաց հեռացեալ, կարող ես արդարանալ ։

35 Վասն որոյ և դու փութա՛, զի յա-
ռաջ քան զելն քո յաշխարհէ զինչ
և կարողասցիս առաքեսցես յերկինս ։
Եթէ աղօթս հանդերձ արտասուօք․ եթէ
ողջմտութիւն մաքուր․ եթէ սաղմոսերգութիւն
ապաշխարանաց․ եթէ ժուժկալութիւն հան-
դերձ խոնարհութեամբ․ եթէ հրաժարումն
յերկրայնոց իրացս․ եթէ սէր անկեղծա-
ւոր․ եթէ փափաքումն քո․ եթէ պահք
կամ ողորմութիւն ։ Եթէ յառաջագոյն 'ի
սոցանէ առաքեսցես, վստահացիր՝ զի 'ի
հանգիստ ես գալոց և վայելելոց․ ապա
թէ ոչ՝ երկիւղ կայ 'ի մէջն․

36 Ո այս ամ լսելով և իմանալով զինչ
կամիք պատրաստել պատասխանի
աստուծոյ․ յորժամ զաղերս ողբանաց և
զգութ անյիշաչարութեան առաջի արկեալ,
միշտ զնոքին գտնէ պատրաստական պարտեաց
մերոց․ 'ի գութ և 'ի գորով մնեալ՝ դար-
ձեալ փարի զմեօք՝ աղաչէ, պաղատի,
խնամարկէ, խանդաղատի, պարգևս խոս-
տանայ, որպէս հայր 'ի վերայ մեր աղեխարշի ։
Նա առաւել քան զչարիսն անցուցանէ
զխնամսն, որպէս 'ի սաստուցեալ որդիսն է

տեսանել . զի 'ի գիրկս առեալ գգուեն , համբուրեն , զերեսն 'ի վերայ դնեն , խանդաղատական ձայնիւ գորովեն , զբարբառն եղանակեն , զծափս հարկանեն . ամիւ հնարին զհաշտութիւն մանկանն , զի զլալն և զհեկեկալն խափանեսցեն ։ Նոյնպէս և նոքա խաղաղեալ զերեսն այսր անդր դարձուցանեն , ընդունայարեն , զերեսն մագլեն . սակայն և ոչ ինչ լայնցանէ ցասուցանեն զծնողսն . այլև պարգևս տան մանկանն զախորժականս իւր , խաղալիկս , անօթս պատուականս . եթէ ընկանէ՝ չցաւեն , եթէ կորուսանէ՝ չտրտմին . միայն թէ 'ի հաշտութիւն տեսանիցեն զիջեալ զմանուկն ։

Զայս և առաւել քան զայն ցուցանեն մեզ գութք մայրին խնամոցն . զորոյ և զփորձ առեալ հոգերգողին դաւթի ըզսաստիկ սիրոյն այ առ մարդիկ՝ ասէ . Որպ գթայ հայր 'ի վր որդւոց իւրոց , գթայ և տէր յերկիւղածս իւր ։

37 Առ ես առաւել զանչափական և զանեղրական սիրոյն իւրոյ զանպատմելի և զանիմանալի գորգանս՝ ինքնապատուամ արարեալ 'ի ձեռն ղուկաս աւետարանչին՝

աւանդէ մեզ ասելով․ Ո՞ ՚ի ձէնջ որդի՛ որ խնդրեսցէ ՚ի հօրէ իւրմէ հաց, մի թէ քա՞ր տացէ նմա․ կամ թէ խնդրեսցէ ձուկն, մի թէ օ՞ձ տացէ նմա․ իսկ եթէ դուք որ չա՛րքդ էք, գիտէք զպարգևս բարիս տալ որդւոց ձերոց․ ո՞րչափ առաւել ևս Հայրն ձեր երկնաւոր տացէ ձեզ զանձառ և զան-
բաւ ուրախութիւնն։

38 Տեսէ՛ք՝ որպիսի գեղեցիկ են պարգևք սիրոյ նորա առ իւր արարածս․ եթէ ախորժէք և դուք՝ լինիք որդիք սիրոյ նր, որ կայ համապազ յողոքել և՚ի թողել ըզ գազանացեալ բնութիւնս մարդկային։ Արդ՝ մի թէ քան զվէմս ապառա՞ժ ի- ցեմք, որ դեղօք քըքրեալ թուլանան, և սրով տաշին ՚ի պէտս գործոց․ Եւ եթէ երկաթ, և զայն ևս հուր հալէ․ և անօթս պիտանացուս ՚ի ճարտարացն գործին․ Եւ եթէ գազան, և այն ձեռնընտել եղ- եալ՝ և հարկադրեալ պապանձեալ կան ՚ի դրունս թագաւորաց, առ ՚ի պատրաստ ՚ի ծառայութի և ՚ի հնազանդութի նոցա։ Զչարամտութիւն վիշապաց՝ և զցասկոտ բարս թինաւոր օձից ՚ի հնազանդութե

ածեն բանք ողոքական Թովչի ճարտարի. և ընդելական ընդանութբ առ միմեանս ճարտակեն:

Դու արդ՝ տեսուն և խօսուն և իմացական բնութի մարդկան զխ՟րդ ոչ գեթ նմանի նշ՟՝ Թողուլ զանզգամութիւնն և կեալ: Դու այն՝ զի պատգամք սաղմոսերգողին կշտամբեալ յանդիմանէ, և տարեալ մերձ առ օձսն և քարբս և կարիճս կացուցանէ ասելով. Սրտմտութի նշ՟ ըստ նմանութե՟ օձի, որպէս իժի քարբի զի խցեալ է զականջս իւր. զի մի՛ լուիցէ նա զձայն Թովչի ճարտարի, և մի՛ առցէ զդեղ ՚ի դեղատուէ իմաստնոյ.

39 Բայց դու ով մեղաւոր, նմանեա՛ մարդարէին դաւթի. որպ՟ ասէ գիր, Մի Թէ որ անկանիցի՝ ոչ յառնիցէ. ոչ՟ և աստ տեսաք՝ զի կատարեաց մարգարէն. Անկաւ ՚ի ձեռն ցանկութե՟, և յարեաւ ՚ի ձեռն ապաշխարութեան. աչօքն մեղաւ, շնաց և սպան. լեզուաւն քաւեաց, զի խոստովանեցաւ և ապրեցաւ: Խոստովանութիւնն Թեթևացուցանէ զծանրութի մեղաց: Խոստովանութիւն զդէղս մեղ՟ց

Հանէ իբրեւ զփոշի. Խոստովանութիւն ըղ-
բաղձս փշոց մեղաց այրէ իբրեւ զհուր։
Խոստովանութիւն ուստի ելանէ՝ զանօթն
ժանկակիր իբրեւ զոսկի. պայծառագոյն
գործէ. եւ որ անդերջ մնացէ՝ ոչ սրբեսցի։
Խոստովանութիւն է՝ որ նովաւ ապաշխա-
րութիւն զօրանայ. եւ առանց նորա որչափ
եւ գործի՝ տկարանայ յաւիտեան։ Խոստո-
վանութիւն՝ զղջման դուռն. ապաշխարութե՟
սկիզբն. գլուխ արիութե՟ առաքինութե՟.
զէն յաղթողին. մեղաց վահան։ Խոստո-
վանութիւն՝ ապաշխարութե՟ առիթ. ա-
պաշխարելոց պարիսպ. գլորելոց կանգ-
նումն. դրդուեցելոց գաւազան. շլացելոցն
ցուպ։ Խոստովանութիւն՝ աղտեղութեան
մեղաց սրբօղ. անմաքրից մաքրօղ. 'ի տան-
ջանացն ազատօղ. գեհենի ահուն փարա-
տօղ։ Խոստովանութիւն՝ երկնից բացօղ.
առաջի տեառն մուծանօղ. ապաշխարողաց
հաւաքօղ. մեղաւորաց յապաշխարութիւն
հրաւիրօղ. մոլորելոց կոչօղ. 'ի քաղաքն
երկնաւոր առաջնորդօղ։ Խոստովանութին՝
խաւարելոց լոյս. որք աչս ունին՝ ճառա-
գայթ. մանկանց դաստիարակ. անյուսից

օրինակ յուսոյ։ Խոստովանութ՟իւն՝ եկե-
ղեցւոյ դուռն. քահանայից քարոզ. գործո-
ղաց պսակ. մանկանց աստուածատուր զգեստ.
և հարսանեաց մտին բացօղ։ Խոստովա-
նութ՟իւն՝ ի դրանց մահու փրկօղ. ա՟ծային
սեղանոյն հրաւիրօղ. մարմնոյ տ՟ն ջամբե-
ցօղ. պատուական արեանն արբուցանօղ. և
տրտմեցելոցն ուրախացուցանօղ։ Խոստովա-
նութ՟իւն՝ ապաշխարութ՟ե դուռն. յանցա-
նաց քաւիչ. ընդունողաց. զնա մաքրիչ.
թագաւորաց պսակի. աղքատաց ընդու-
նելի։ Խոստովանութ՟իւն՝ մեծամեծաց և
անանկաց պատսպարան. պոռնկաց քաւա-
րան. աւազակաց պաշտպանարան։ Խոստո
վանութ՟իւն՝ բանաւոր մեղուաց հաւաքօղ.
քաղցր գործոց վաստակօղ. դառնութեան
քաղցրացուցանօղ. և ա՟մ առաքինութ՟եց
զարդարօղ։ Եւ արդ՝ որ՟ք կարացեն գո-
վել զխոստովանութ՟իւն. զի ուր յանցանք
իցէ՝ առանց սորա թէ բիւրապատիկ ա-
ռաքինութ՟իս գործիցեն, ոչինչ օգտին.
եթէ պահես, եթէ աղօթես, եթէ ձգնիս,
եթէ ողորմութ՟ի առնես, եթէ զա՟մ առա-
քինութ՟իս գործես, չէ հնար քեզ առանց

սորա զկանցանս քաւել՝ և թողութիւն գտանել:

40 Դու ով մեղաւոր՝ որչափ կարողութի՟ է քո մարմնի ընդդէմ սովորական մեղացն քոց մեծաւ աղօթիւք. և կոչեա՛ քեզ 'ի բարեխօսութի՟ զդասս ս՟րց հրեշտակաց, և զամ՟ ս՟բս և զարդարս, մանաւանդ զս՟բ ա՟ծածինն, ևս առաւել զք՟ի ս՟բ չարչարանսն. և աղաղակեա՛ առ հայր անդադար՝ զի ողորմեսցի քեզ. և'ի ձեռն հոգւոյն սրբոյ տացէ քեզ կարողութիւն ընդդիմանալ մեղացն.

Եւ եթէ պատահեսցի՝ զի յաղթիցիս որ՟պ զմարդ տկար, դու 'ի նոյն դարձեալ կանգնեա՛. և որչափ անկանիս, այնչափ արագապէս փութա՛ կանգնիլ. և ա՟ծ այնպէս ընկալցի զքեզ, իբրև թէ բնաւ չիցես անկեալ: Զի թէ հանդերձ ինչ 'ի ցեխս անկանիցի՝ աղտեղանայ. և յորժամ օճառօք մաքրի՝ ոչ թուի խոտան յաչս ըզգեցողին. որչափ ևս առաւել հոգին՝ որ անկեալ է 'ի մեղս՝ և յառնէ անդրէն, խոտան ոչ երևեսցի առաջի ա՟յ. զի նա կարէ առաւել սիրել զաղգս մարդկան՝

քան այր ոք զհանդերձս իւր։ Նու տես զանչափ սէր նորա՝ որ վասն մեր մարդացաւ, և մեռաւ մարմնով անմահն ա̃ծ. և ոչ թէ սիրէ միայն՝ այլև բառնայ ՚ի վե̃ ուսոց իւրոց խնդալով։

Արդ՝ որ ոք ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ, և իմանայցէ, և վայելեսցէ ՚ի բարութեանցն պարգևաց ՚ի ձեռն խոստովանութեան և ապաշխարութե̃, որ փառօք պսակէ, և ՚ի գահոյս հանգուցանէ ՚ի ք̃ս յ̃ս ՚ի տէր մեր։ Որում ընդ հօր և ընդ հոգւոյն սրբոյ վայելէ փառք իշխանութի̃ և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աղօթք ապաշխարութեան նորին սրբոյն Եփրեմի։

Տէր երկնի և երկրի յ̃ս ք̃ս՝ իշխան կենաց և մահու, դատաւոր կենդանեաց և մեռելոց, լոյս և ապաւէն հոգւոյ իմոյ. քեզ մատուցանեմ զերկրպագութի̃ և զմաղթանս աղօթից իմոց։ Լո՛ւր ինձ՝ և քաւեա՛ զմեղս իմ՝ որ միայնդ ես առանց մեղաց. որ միայնդ ես ո̃ղ՝ և ՚ի ո̃ղս հանգու-

ցեալ․ որ միայնդ ես գթած և ողորմած․
Ողորմեա՛ ինձ ստեղծիչ իմ և օրհնեա՛ զիս․
Հաշտեա՛ց ընդ իս ապրեցուցիչ իմ, և յիշեա՛
զիս որպէս զաւազակն յարքայութեան քում․
Դա՛րձ առ իս ած փրկիչ իմ, և դարձո՛
զսրտմտութիւնս քո յինէն։ Մի՛ բարկութեամբ
քով խրատեր զիս, և մի՛ սրտմտութեամբ քով
յանդիմաներ։

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ, և մի՛
յիշեր զչարիս իմ, և մի՛ պարտաւորեր զիս
ըստ իմում անօրէնութեանս։ Մի՛ ըստ մե-
ղաց իմոց արասցես, և մի՛ ըստ անօրէնութեան
իմում հատուսցես ինձ։ Մի՛ ընկեներ
զիս յերեսաց քոց, և մի՛ դատապարտեր զիս․
զի ես ինձէն գիտեմ զի յանցաւոր եմ․ ՚ի
մանկութենէ իմմէ, և անպատասխանի եմ
առաջի քո։

Ով դու Թագաւոր հզօր և անոխա-
կալ՝ որ զյանցանս թողեր կնոջն մեղաւո-
րի, թող և ինձ զպարտիս մեղուցեալ և
անօրինեալ քո ծառայիս։ Քանզի քո
առատ բարերարութիւնդ յայնժամ երևի,
յորժամ ինձ ողորմիս՝ որ չեմ արժանի
ողորմութեան քում․ յորժամ ինձ ցուցանես

զգթութիդ՝ որ արժանի եմ բիւրոց տան-ջանաց · զի զա՟մ աւուրս իմ անցուցի ’ի չարիս, և ոչ կացի ’ի հրամանի քում։

Արդ քաղցրացի՛ր ինձ բարի և քաղցր Թագաւոր, և հաշտեա՛ց ընդ բազմամեղիս, և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, և մի՛ խոտորիր բարկութեամբ ’ի ծառայէ քումմէ։ Մի՛ անարգեր զիս և մի՛ թողուր զիս ա՟ծ փրկիչ իմ · զի թէպէտ ես զտա-ճար հոգւոյդ սրբոյ ապականեցի անառակ գնացիւք, այլ դու գթա՛ յիս ստեղծիչ իմ՝ ողորմած և անյիշաչար, և մի՛ ապակա-ներ զհոգի իմ յաւիտենական այրմամբ ’ի գեհեան հրոյն։ Երկայնամի՛տ լեր առ իս մա՛րդասէր, և շնորհեա՛ ինձ ժամանակ ա-պաշխարութե՟ և զղջման արտասուաց · և զօրացո՛ զսիրտ իմ խորհիլ իմաստութեամբ զօրէնս քո ’ի տուէ և ’ի գիշերի, գործել զբարի՝ և առնել զարդարութի՟ առաջի քո։

Համբառնամ առ քեզ զաչս իմ, և բո-լորով սրտիւ իմով կարդամ առ քեզ տէ՛ր քս՟՝ միածին որդի այ՟, որ յաղթեալ ’ի մարդասիրութէ՟ քումմէ կամաւ խոնար-հեցար յանձառ փառացդ և առեր զծա-

ռայի կերպարան, և չարչարանաց խաչի և մահու համբերեցեր վասն փրկութեան ստեղծուածոց քոց.

Արդ որ այսպիսի սէր ունիս առ ազգս մարդկան, և կամիս զի ամ̃ մարդ կեցցէ, և'ի գիտութի̃ ճշմարտութե̃ եկեսցէ, գթա՛ և յիս 'ի բազմամեղս մարդասէր տէր, և կամեցո՛ց ընդ իմ փրկութի̃ն, և արա՛ ինձ ողորմութի̃, որ առաւել եմ ողորմելի քան զա̃մ մարդիկ. Ոչ ի ո՛չ սիրեցի զքեզ 'ի բոլոր սրտէ իմմէ, և ո՛չ պահեցի զպատուիրանս քո յա̃մ զօրութե̃ իմմէ. այլ ունայնութե̃ անցուցի զաւուրս իմ, և կատարեցի զկամս սրտի իմոյ. Աւուրք իմ պակասեցան՝ և անօրէնութի̃ք իմ առաւելան, և ո՛չ գոյ ինձ յոյս փրկութե̃՝ և տեղի ապաւինի բաց 'ի քէն. զի միայն 'ի քո բարերարութիւնդ յուսացեալ եմ, և 'ի քո առատ ողորմութիդ ապաւինեալ.

Եւ արդ բղխմամբ արտասուաց աղաչեմ զքեզ, մինչչև է ժամանակ դարձի իմոյ հասեալ, և մինչչև եմ իսպառ կորուսեալ, շնորհեա՛ ինձ ապաշխարութի̃. և յառաջ քան զվախճանն իմ արձակեա՛ զիս 'ի կա-

պանաց մեղաց իմոց, և անուա՛մբ սուրբ զանթիւ անօրէնութիւնս իմ։

Որ տէր բարութեանց ես տէր, և իշխան ես թողուլ զմեղս, ծածկեա՛ զամ յանցանս իմ քո՛վ բարեգթութեամբդ. և մխիթարեա՛ զվշտացեալ և զտարակուսեալ հոգի իմ. և առաջնորդեա՛ ինձ յայսմհետէ ըստ կամաց քո, քաղաքավարիլ զայլ ևս պանդըխտութեան իմոյ ժամանակս. և մի՛ թողուր զիս 'ի կամս անձին իմոյ, մինչև տարեալ հանգուցես յօթևանս արքայութեանդ երկնից։

Լուր տէր աղօթից անարժան ծառայիս քո, և խոնարհեցո՛ զունկն քո 'ի պաղատանս իմ, որ ասացեր՝ Հայցեցէ՛ք և գտջի՛ք, բախեցէ՛ք և բացցի ձեզ։ Եւ այժմ բա՛ց ինձ տէր զդուռն ողորմութեան քո, որ ողբալով կարդամ առ քեզ, և մի՛ անտես առներ զաղաչանս մեղուցեալ անձին իմոյ. որ ոչ եկիր կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն։

Եւ արդ խոնարհեալ անձամբ, բեկեալ սրտիւ, և ամօթալից երեսօք պաղատիմ անոխակալ տէրութեանդ քո. և յառաջ քան զդնիլ ատենին աղաչեմ, և նախ քան զփա-

կիլ դրանն և հատանիլ անդարձ վճռոյն զարտասուս իմ արկանեմ առաջի քո՝ ողորմած տէր, քաղցր և անյիշաչար և երկայնամիտ առ արարածս քո։

Մի՛ ընդ յիմար կուսանսն դատապարտեր զիս, փակելով զդուռն ողորմութե՜ քո. և մի՛ ընդ չար և վատ ծառային առաքեր զիս ՚ի խաւարն արտաքին, ուր լալ աչաց է և կրճել ատամանց։ Մի՛ մերժեր զիս ՚ի դասուց սիրելեաց քոց, և մի՛ տարագիր առներ յերանաւէտ կենացն յաւիտենից։ Մի՛ անբաժին համեր զիս ՚ի հայրենի ժառանգութենէն, զոր պատրաստեալ ես ՚ի սկզբանէ աշխարհի որդւոց քոց. և մի՛ զրկեր զիս յերկնաւոր հարսնարանէն։

Այլ վն մեծ և փառաւորեալ Թագաւորութեդ քո՝ մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայիս քո, և մի՛ հատուցաներ ինձ ըստ բազում անօրէնութե իմում։ Այլ շնորհեա՛ ինձ ընդ արժանաւորսն և ընդ կատարեալ հոգիսն աջակողմեան դասուն վերանալ լուսեղէն ամպօք ընդ առաջ քո յօդս. և ընդ սիրելիս և ընդ կամարարս քո ՚ի յարագուարձ ուրախութեն ուրախացո՛,

և առատապարգև փառօք փառաւորեմ զիս յերամս որդւոց, ընդ նոսին հան-գուցանելով 'ի վերինն երուսաղէմ յար-քայութեն քում յերկինս. Ո՛ւ ընդ նո-սին համաձայնեալ փառաւորեցից զՔեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Աղօթք ապաշխարութ Մանասէի թագաւորին:

Տէր ամենակալ Ա̃ծ աբրահամու՝ իսահակայ յակոբայ և զաւակի ն̃ց արդարոց. ամենակալ տէր թող զմեղս իմ.

Որ արարեր զերկինս և զերկիր՝ և զա̃մ զարդ նոցա. ամենա:

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո, փակեցեր զխորս, կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով. ամե:

Որ ա̃մ ինչ սարսի և դողայ յերեսաց ահի զօրութեան քո. ամենա:

Անբաւ է մեծվայելչութիւն փառաց սրբութե̃ քո, սաստիկ է բարկուե̃ սպառ-նալեաց քոց 'ի վ̃ր մեղաւորաց, անչափ և

անքննին են ողորմութիւնք աւետեաց քոց · ա ։

Դու տէր բարձրեալ գթած երկայնամիտ բազումողորմ, և զղջանաս 'ի վերայ չարեաց մարդկան · ամէն ։

Դու ա̅ծ ոչ եդեր ապաշխարութիւն վ̅ս արդարոցն՝ աբրահամու, իսահակայ և յակոբայ, որք ոչ մեղան քեզ · ամէն ։

Այլ եդեր ապաշխարութիւն վ̅ս իմ մեղաւորիս, զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, և բազմացան անօրէնութիւնք իմ · ամէ ։

Չեմ արժանի հայիլ և տեսանել ըզ բարձրութիւն երկնից՝ 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ · ամէն ։

Կորացեալ եմ ես 'ի բռնութենէ կապանաց երկաթից, և ոչ գոյ ինձ հանգիստ · ամէ ։

Բարկացուցի զսրտմութիւն և չար առաջի քո արարի, կանգնեցի պատկեր և բազմացուցի զցասումն · ամէն ։

Եւ արդ տէր՝ խոնարհեցուցանեմ ըզ ծունր սրտի իմոյ, և հայցեմ 'ի քաղցրութենէ քումմէ · ամէն ։

Մեղայ տէր մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ · ամէն ։

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն թող ինձ

տէր Թող ինձ, և մի՛ կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ. ամէն։

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ տէր, և մի՛ յիշեր զչարիսն իմ, և մի՛ պարտաւորեր զիս ընդ իջելոյն ՚ի ներքոյ երկրի չարեօք. ա։

Զի դու ած ած ապաշխարողաց ես, և յիս ցոյց զբարերարութիւնդ քո որ անարժան եմ. ամէն։

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութե֊ քում, և ես օրհնեցից զքեզ զամ աւուրս կենաց իմոց. ամէն։

Զքեզ տր օրհնեն ամ զօրութիւնք երկ֊ նից. և քո են փառք յաւիտեանս, ամէն։

Փառք հօր և որդ. Այժմ և միշտ և.

Աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն տէր, Թող ինձ զմեղս իմ.

Բազումողորմ տէր՝ ողորմեա ինձ։

Ած՝ քաւեա զիս զմեղաւորս ՚ի մեղաց և կեցո։

Արարիչ իմ և յոյս ած՝ գթա ՚ի մեղու֊ ցեալ ծառայս, և ողորմեա ինձ բազմամեղիս։

Ամենօրհնեալ սրբուհի և միշտ կոյս ածածին մարիամ, բարեխօսեա առ տէր վասն իմ մեղաւորիս։

Ամենայն ս՟րք ա՟յ բարեխօսեցէք առ հայր ՚ի յերկինս վ՟ն մեր մեղաւորացս:

Ո՟վ որդի ա՟յ անոխակալ՝ ընկալ զաղաչանս մեր, զի ՚ի քեզ են ապաւինեալ անձինք մեր:

Յաղթօղ զօրութ՟բ սուրբ և կենդանարար և պատուական խաչիւ քո տէր՝ պահպանեա զմեզ:

Առաքեա տէր զհրեշտակ խաղաղութե՟ քո, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով ՚ի տուէ և ՚ի գիշերի:

Եւ մարդասիրութ՟բ քո յիշեա զմեզ տէր յիշեա զմեզ, յորժամ գաս արքայութ՟բ քով, և ողորմեա մեզ:

Աղօթք հանգստեան ժամուն:

Առաքեա տ՟ր զլոյս քո և զճշմարտութի՟ քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ՚ի լեառն ս՟բ և ՚ի յարկս քո:

Մտից առաջի սեղանոյ ա՟յ առ ա՟ծ, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ աստուած աստուած իմ:

Արդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ած̅, խոստովանեա՛ նմա՝ փրկիչ երեսաց իմոց աստուած է։

Փառք Հօր և Որդւոյ և։

Եւ ևս խաղաղութե̅ զտէր աղա։

Օրհնութի̅ և փառք Հօր և Որդւոյ և։

Սաղմոս. 118։

Եկեսցէ ՚ի վ̅ր իմ ողորմութի̅ քո տ̅ր, և փրկութի̅ քո ըստ բանի քում։

Տաց պատասխանի որք նախատեն զիս բանիւք, զի ես ՚ի բանս քո յուսացայ։

Մի՛ ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութե̅ մինչև յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ։

Պահեցի զօրէնս քո յա̅մ ժամ, յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։

Գնայի ես յանդորրու, զի զպատուիրանս քո խնդրեցի։

Խօսէի զվկայութի̅ս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի։

Խորհէի ՚ի պ̅տուիրանս քո զոր սիրեցի։

Համբարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս

ե

քո զոր սիրեցի , և խորհէի յարդարութեան քում.

Յիշեա՛ զբան ծառայի քո՝ յոր և յուսացուցեր զիս :

Այս մխիթարեսցէ զիս 'ի խոնարհութեան իմում , զի բան քո կեցոյց զիս.

Ամբարտաւանք անիրաւեցան յոյժ , այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ :

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տէր , և մխիթարեցայ .

Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւորաց , և որք թողին զօրէնս քո .

Գովելի են ինձ իրաւունք քո՝ 'ի տեղւոջ պանդխտութեան իմոյ .

Յիշեցի 'ի գիշերի զանուն քո Տէր , և պահեցի զօրէնս քո :

Այս եղև ինձ ճանապարհ 'ի կեանս , զի զարդարութիւնս քո խնդրեցի .

Զանօրէնս ատեցի , և զօրէնս քո սիրեցի .

Օգնական և փրկիչ իմ ես դու , և ես 'ի բանս քո յուսացայ :

'Ի բա՛ց եղերուք յինէն չարք , և քննեցից զպատուիրանս Այ իմոյ :

Օգնեա՛ ինձ ըստ բանի քում և կեցո՛ զիս, և մի՛ յամօթ առներ զիս ՚ի յուսոյ իմմէ։

Օգնեա՛ ինձ և ապրեցո՛ զիս, և խորհեցայց յիրաւունս քո յամ ժամ։

Անարգեցեր զամենեսեան որք ապստամբք եղեն յարդարութենէ քոյ, զի անիրաւութիւն էին խորհուրդք նոցա։

Յանցաւորս համարեցայ զամ մեղաւորս երկրի, վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բևեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի ՚ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր, ըստ բանի քում իմաստունս արա զիս։

Մտցեն տօթք իմ առաջի քո տէր, և բանիւ քո փրկեա՛ զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամ պատուիրանք քո արդարութիւն են։

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։

Յանկացայ փրկութեան քում տէր, և օրէնք քո խօսք իմ են.

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ.

Մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ, խնդրեա զծառայս քո զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ.

Մի՛ եկեսցեն 'ի վերայ մեր ոտք ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ.

Անդ անկցին ամենեքեան որք գործեն զանօրէնութիւն, մերժեսցին և այլ մի՛ կարասցեն հաստատիլ.

Ես 'ի տէր յուսացայ, ցնծացայց և ուրախ եղէց յա͞ծ փրկիչ իմ.

Տէր տէր ետ ինձ զօրութի՟ և կացոյց զոտս իմ 'ի հաստատութե՟, 'ի վերայ պարտ նոցի թշնամւոյն կացոյց զիս, և հանգոյց զիս երագ երագ.

Որ բնակեալն է յօգնութի՟ բարձրելոյն, ընդ հովանեաւ ա͞յ յերկինս հանգիցէ.

Ասացէ տ͞ն ընդունող իմ ես, ապաւէն իմ ա͞ծ և ես յուսամ 'ի նա.

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսո-

զիս , և 'ի բանից 'ի խռովութենէ .

'Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ , 'ի հովանի թևոց նորա յուսասցիս ։

Որպէս զէն շուրջ եղիցի զքև ճշմարտութիւն նորա .

Մի՛ երկիցես դու յերկիւղէ գիշերի , և ոչ 'ի նետէ որ թռչի 'ի տուէ .

Յիրէ որ շրջի 'ի խաւարի , 'ի գայթակղութէ դիւին 'ի հասարակ աւուր ։

Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք և բիւրք ընդ աջմէ քումմէ , և առ քեզ ինչ ոչ մերձեսցին .

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու և զհատուցումն մեղաւորաց տեսցես , զի դու տէր յոյս իմ ես .

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն , զի ոչ հասցեն առ քեզ չարք , և տանջանք մի՛ մերձեսցին 'ի յարկս քո .

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վ՟ն քո , 'ի պահել զքեզ յա՟մ ճանապարհս քո ։

'Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ , զի մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո ։

'Ի վ՟ր իժից և քարբից գնասցես դու , և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն ։

Քանզի յիս յուսացաւ և փրկեցից զնա, հովանի եղէց նմա զի ծանեաւ զանուն իմ։

Կարդասցէ առ իս և ես լուայց նմա, և առ նմա եղէց 'ի նեղութեան.

Փրկեցից և փառաւոր արարից զնա, երկայն աւուրբք լցուցից և ցուցից նմա զփրկութիւն իմ.

Առ քեզ տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես 'ի յերկինս.

Ոպ̃ աչք ծառայի 'ի ձեռն տն̃ իւրոյ, և ոպ̃ աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ։

Այնպէս են աչք մեր առ քեզ տ̃ր ա̃ծ մեր, մինչև ողորմեսցիս 'ի վերայ մեր.

Ողորմեա մեզ տէր ողորմեա մեզ, զի բազում լցաք արհամարհանօք։

Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ արհամարհանօք ամբարտաւանից.

Ա̃ծ յանուան քում կեցո զիս, և 'ի զօրութեան քում իրաւ արա ինձ.

Ա̃ծ լուր աղօթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ իմոյ.

Օտարք յարեան 'ի վերայ իմ և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան

զքեզ աստուած առաջի իւրեանց։

Ահա ա̄ծ օգնական իմ, և տէր ընդու-նօղ հոգւոյ իմոյ.

՚Ի դարձուցանել զչարն ՚ի թշնամիս իմ, ճշմարտութ̃բ քով սատակեա՛ ղնոսա։

Ես կամօք իմովք պատարագս մատու-ցից քեզ, և խոստովան եղէց անուան քում տէր զի բարի է.

Զա̄մ նեղութ̃է իմմէ փրկեցեր զիս, և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ.

Օրհնեալ ես դու տէր ա̄ծ հարցն մե-րոց, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց, գովեալ և առաւել բարձ։

Օրհնեալ ես ՚ի տաճարի փառաց սըր-բութեան քո, գովեալ և առա.

Օրհնեալ ես ՚ի վերայ աթոռոյ արքայ-ութեան քո, գովեալ և առա.

Օրհնեալ ես որ նստիս ՚ի քրովբէս և հայիս յանդունդս, գովեալ և առա.

Օրհնեալ ես ՚ի վերայ հաստատութեան երկնից, գովեալ և առա։

Օրհնեցէ՛ք զա̄ծ ՚ի սրբութեան նորա,

օրհնեցէք զնա 'ի հաստատութեան 'ի զօրութեան նորա։

Օրհնեցէք զնա 'ի զօրութ՟ն ն՟ր, օրհնեցէք զնա 'ի բազում մեծութ՟ն նորա։

Օրհնեցէք զնա 'ի ձայն օրհնութեան, օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութ՟բ։

Օրհնեցէք զնա ցնծութ՟բ, գովեցէք զնա ուրախութեամբ։

Օրհնեցէք զնա 'ի բանս քաղցր, գովեցէք զնա 'ի բարբառ լսելի։

Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհութեան, ա՟մ հոգիք օրհնեցէք զտէր։

Արդ արձակեա՛ զծառայս քո տէր ըստ բանի քում 'ի խաղաղութ՟ի, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո զոր պատրաստեցեր առաջի ա՟մ ժողովրդոց։

Լոյս յայտնեցար հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում Իսրայելի։

Ձգեցեր զձեռն քո և փրկեաց զիս աջ քո, և տէր հատուսցէ ընդ իմ։

Տէր ողորմութ՟ի քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

Տէր հա՛ն 'ի բանտէ զանձն իմ, գոհանամ զանուանէ քումմէ։

Նու քեզ սպասեն արդարք՝ մինչև հատուսցես.

Մեծացուսցէ անձն իմ զտէր, և ցնծասցէ հոգի իմ աստուծով փրկչաւ իմով:

Այց արար 'ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ, այսուհետև երանիցեն ինձ ամ̄ ազգք.

Արար ընդ իս մեծամեծս հզօրն, և սբ̄ է անուն նորա.

Ողորմութի̄ արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց, արար զօրութի̄ բազկաւ իւրով:

Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտից, և քակեաց զհզօրս յաթոռոց.

Զխոնարհս բարձրացոյց՝ զկարօտս ելից բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց իսրայէլի ծառայի իւրոյ, յիշելով զողորմութիւն իւր:

Ոպ̄ խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ աբրահամու և զաւակի նր̄ յաւիտեան:

Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո՛ զորդի աղախնոյ քո, և արա՛ առ իս նշան բարութեան:

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի

դու տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս ։

### Փառք Հօր և Որդւոյ և ։

### Մաղթանք ·

Անձն իմ 'ի ձեռս քո է յամ ժամ, և 'ի սուրբ խաչ քո յուսացեալ եմ Թագաւոր երկնաւոր, զբազմութի̃ ո̃ղց քոց բարերարս ունիմք առ քեզ ։ Որ երկայնամիտդ ես առ ամենեսեան, մի՛ անտես առներ զապաւինեալս 'ի քեզ · այլ պահեա՛ պատուական և սուրբ խաչիւ քով 'ի խաղաղութեան ։

### Քարոզ ·

Աղաչեսցուք զամենակալն ա̃ծ և խնդրեսցուք 'ի նմանէ, զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան՝ որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս 'ի դիւական խռովութ̃է, ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր՝ մինչև 'ի կատարումն ժամանակի ամաց մերոց ։ Ամենակալ տէր ա̃ծ մեր կեցո՛ և ողորմեա՛ ։ Կեցո՛ տէր ։

Զ Հանգիստ գիշերիս խաղաղութեամբ անցուցանել հաւատով 'ի տեառնէ խնդ-

րեսցուք։ Շնորհեա՛ տէր։

Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց ՚ի տ՟նէ խնդրեսցուք։

Զքաւութի՟ և զթողութի՟ յանցանաց մերոց ՚ի տեառնէ խնդրեսցուք։

Զսուրբ խաչին մեծ և կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց մերոց ՚ի տեառնէ խնդրեսցուք։

Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ զտէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա՛։

Զանձինս մեր և զմիմեանս տեառն ա՟յ ամենակալին յանձն արասցուք։

Քեզ տեառնդ յանձն եղիցուք։

Ողորմեաց մեզ տէր ա՟ծ մեր՝ ըստ մեծի ողորմութե՟ քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա՛. տ՟ր ողորմեա՛. տ՟ր ողորմեա՛։

Աղօթք.

Տէ՛ր ա՟ծ մեր դու պահեա՛ զմեզ խաղաղութե՟ ՚ի գիշերիս յայսմիկ և յա՟մ ժամանակի. Ընդ սուրբ երկիւղ քո բևեռեալ պահեա՛ զմիտս և զխորհուրդս մեր։

Որպէս զի յամենայնժամ քեւ պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն. Եւ քեզ համբարձուք զօրհնութիւն եւ զփառս հօր եւ որդւոյ եւ հոգւոյդ սրբոյ. այժմ եւ միշտ:

Խաղաղութիւն ամենեցուն.

Հրեշտակի խաղաղութեամբ յանձն առ զանձինս մեր տէ՛ր զօրութեանց, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս 'ի տուէ եւ 'ի գիշերի, յարթնութեան եւ 'ի հանգստեան մերում. զի դու ես արարիչ լուսոյ, եւ հաստիչ գիշերի: Եւ այժմ աղաչեմք զքեզ տէ՛ր ած մեր, զհանգիստ գիշերիս շնորհեա՛ խաղաղութեամբ անցուցանել, եւ հասանիլ 'ի պաշտօն առաւօտու յերկրպագութիւն եւ 'ի փառաբանութիւն ամենասուրբ երրորդութեանդ. այժմ եւ:

Աղօթք. 4:

Խաղաղութեամբ յայս եւ 'ի սոյն ննջեսցուք եւ զարթիցուք, զի դու տէր միայն առանձին յուսով քո բնակեցուցեր զմեզ: 'Ի կարդալ իմում լուար ինձ ած ըստ արդարութեան, 'ի նեղութեան ինձ անդորր տարեր. ողորմեա՛ ինձ եւ լուր աղօթից իմոց:

Որդիք մարդկան մինչև յե՞րբ էք խըս-
տասիրտք, ընդէ՞ր սիրէք զունայնութիւն և խնդրէք զստութիւն։

Ծաներո՛ւք զի սքանչելիս արար տէր սրբոյ իւրում, և տէր լուիցէ ինձ ՚ի կարդալ իմում առ նա։

Բարկացայք և մի՛ մեղանչէք, զոր ինչ ասէք ՚ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք։

Մատուցէ՛ք պատարագս արդարութե՛, և յուսացարո՛ւք ՚ի տէր։

Բազումք ասեն թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութիւն տեառն. նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութի՛ սրտից մերոց։

Ի պտղոյ ցորենոյ գինոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա։

Խաղաղութե՛ յայս և՚ի սոյն ննջեսցուք և զարթիցուք, զի դու տէր միայն առանձին յուսով քո բնակեցուցեր զմեզ։

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն։

Եւ ընդ հոգւոյդ քում։

Երկիւղածութեամբ լուարուք։

Սրբոյ աւետարանիս՝ որ ըստ յովհաննու։

Փառք քեզ տէր աստուած մեր։
Պռօսխումէ։
Ասէ աստուած։

Տէրն մեր յս̃ քս̃ ասէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ։ Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ՚ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա հայրն իմ։

Փառք քեզ տէր ա̃ծ մեր։

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զտէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց՝ և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ տէր աստուած մեր. կեցó և ողորմեá։

Պահպանեա՛ զմեզ ք՟ս ա՟ծ մեր՝ ընդ հովանեաւ ս՟բ և պատուական խաչիւդ քով 'ի խաղաղութե՟ն, փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա՛ գոհութե՟բ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և.

Օրհնեալ տէր մեր յ՟ս ք՟ս, ամէն։

Հայր մեր որ յերկինս.

Անկանիմք առաջի քոյ ա՟ծ ածային և աղաչեմք զանսպառ գթոյդ, բարեխօսեա՛ վասն անձանց մերոց, և աղաչեա՛ զմիածինն որդիդ փրկել զմեզ 'ի փորձութենէ և յա՟մ վտանգից մերոց։

Մաղթանք զօրաւորք՝ արհաւրաց գիշերայնոյ, ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ. Ժ.Բ

Ընկա՛լ քաղցրութե՟բ տէր ա՟ծ հզօր՝ զդառնացողիս զաղաչանս. մատի՛ր գթութեամբ առ պատկառեալս դիմօք. փարատեա՛ ամենապարգև՝ զամօթալից տխրութիւնս. բարձ յինէն ողորմած՝ զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա՛ հնարս

ւոր՝ զմահացու կրթութիւնս • ուսարեալ միշտ յաղթօղ՝ զխաւարողին հաճութիւն • բա-ցադրեալ վեհնայքին՝ զմոլեղյն միաւախուղ· կնքեալ կենցուցիչ՝ զկերպուսչին ընթաց-մունս • ցրուեալ ծածկաւոեւ՝ զըմբռնողին չար գտմունս • խորտակեալ անքննին՝ զմարտողին դիմեցմունս ։ Ներանադրեալ քո անուամբդ զլուսանցոյց երդ յարկիս • պարփակեալ քո ձեռամբդ զառասաստաղ տաճարիս • գծադրեալ քո արեամբդ զմուտ սեմոյց սենեկիս • կերպացո՛ զքո նշանդ ՚ի հետս ելից մաղթողիս • ամրացո՛ քո աջովդ զհանդստեանս խշտի • մաքրեսցես ՚ի հաղ-բից զծածկարան անկողնոյս • պահեսցես քո կամօքդ զտառապեալ անձն ոգւոյս • անխտրդամխ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս • կացուսցես շրջափակ զպար զօ-րուդ երկնայնոյ • կարգեսցես ՚ի դիմի ընդ-դէմ դիւացն դասու • Նուր հանդիս բերկրութեան մահահանդոյնս նիրհման ՚ի խորութե՟ գիշերիս, բարեխօսութե՟ հայց-ուածոց սրբոյ ա՟ծածնիդ՝ և ա՟մ ընտրելոց․ Ամփոփեալ պարուրեալ զպատուհան տե-սութեանց զդայարանացս իմաստից ան-

ե

զարհուրելի զեռեղմամբ՝ ՚ի ծփական խռո-
վութեց, կենցաղական զբաղմանց, անրջա-
կան երազոց, խօլականաց ցնորից, յիշա-
տակաւ քո յուսոյդ անփոխանելի պաշտ-
պանեալ։ Եւ սթափեալ վերստին ՚ի ննջ-
մանէ ծանրութեան, ամենազգաստ արթ-
նութեամբ՝ հոգենորոգ զուարթութբ ՚ի
քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց՝
բուրմամբ հաստոց քեզ ամենօրհնեալ
Թագաւոր փառաց անճառից, փառաբա-
նողաց երկնագումար խմբից երգակցեալ՝
յերկինս առաքել։ Ով դու փառաւոր-
եալ ես յամենայն արարածոց յաւիտեանս
յաւիտենից, ամէն։

Աղօթք նորին սրբոյն Գրիգորի նարեկացւոյ։ ԽԱ

Որդի այ կենդանւոյ օրհնեալ յամենից՝
հօրդ աչաւորի անքննին ծնունդ,
որ անկարանայ առ ՚ի քէն և ոչ ինչ։ Որ ՚ի
ծագել անստուեր նշուլից ողորմութեան
քո փառաց, հալին մեղք․ հալածին դևք․
ջնջին յանցանք․ խզին կապանք․ խորտակին
շղթայք․ կենդանանան մահացեալք․
բժշկին հարուածք․ ողջանան վէրք․ բառ-

նին ապականութիւնք • տեղի տան տխրութիւնք • նախանձին հեծութիւնք • փախնուխաւարին • մեկնի մէգն • մերժի մառախուղն • փարատի մռայլն • սպառի աղջամուղջն • վերանայ մութն • գնայ գիշերն • տարագրի տագնապն • չքանան չարիքն • հալածին յուսահատութիւնքն • և թագաւորէ ձեռն քո ամենակալ՝ քաւիչդ տէր • Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս՝ այլ կեցուցանել, թող ինձ զանթիւ չարիսն իմ բազումողորմութեդ: Ո՜վ դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզննին • ՚ի տարր գոյի, և յեզրս ծագաց աշխարհի • սկիզբն տէր, և յետ • ամենայն լրմամբ օրհնեալ ՚ի բարձունս • և քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս, ամէն •

Աղօթք նորին տեառն Գրիգորի Նարեկացւոյ: ՁԹ

Ո՜վ և տէր • կեանք և արարիչ • ողորմած • գթած • լոյս • երկայնամիտ • անոխակալ • մարդասէր • ամենագութ • պարգևատու • փրկիչ • օրհնեալ • գովեալ • բարեբանեալ • Դրան ամրութե • պատա-

պարան վստահութե՟․ առանց նենգութե՟ բարի․ առանց խաւարի ճառագայթ․ քաւիչ մեղաց․ ողջացուցիչ վիրաց․ անհատանելեաց հնարք․ անմատչելեաց հպաւոր․ անյուսութե՟ ելք․ անուն քո խոստովանեալ՝ ո՛վ որդի․ և հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի, և հոգւոյդ ամենակալի և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք և պաշտօն գոհաբանութե՟ յաւիտեանս, ամէն։

Աղօթք նորին սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ․ ՂԳ․

Ո՜վ յաւիտենական․ բարերար և ամենակալ․ ստեղծիչ լուսոյ և յօրինիչ գիշերոյ․ կեանք ՚ի մահու և լոյս ՚ի խաւարի․ յոյս անյուսողաց և երկայնմտութի՟ տարակուսելոց։ Որ ամենարուեստ իմաստութե՟ քո դարձուցանես յայգ զստուերս մահու, աննուաղ ծագումն և անմուտ արեգակն, քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութե՟ քո խաւար գիշերոյ․ որում կրկնի ծունր երկրպագութե՟ ամ՟ եղելոց՝ երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց։

Որ լսես զհեծութի՟ կարդելոց, և հայիս ժողովս խոնարհից, և ընդունիս զխնդրս

ուածս նոցա , աստուած իմ և Թագաւոր իմ , կեանք իմ և ապաւէն իմ , յոյս իմ և վստահութիւն իմ , յիսուս քս ած մի , սուրբդ հանգուցեալ ՚ի հոգիս մերց մխիթարութիւն վշտաց , և քաւարան մեղուցելոց , որ գիտես զմզ յառաջ քան զլինել նոցա : Նուաքեա՛ զպահպանողական զօրութիւն աջոյ քո , և փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի և ՚ի դիւէ չարէ . որք զի զյիշատակ սահմանի և սուրբ քո անուանդ՝ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ ըղձութե շնչոյ , կեցից պահպանեալ ընդ այնոսիկ որ կարդան զքեզ ՚ի բոլոր սրտէ :

Եւ ՚ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ , զոր ածային արեամբ քո ներկեալ նորոգեցեր , և ՚ի նոյն շնորհ որդեգրութե զմեզ մկրտեցեր , և ՚ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր , այսու պարգևօք ածականօք՝ ամաչեսցէ սատանայ . քակտեսցին մեքենայքն . բարձցին որոգայթքն . պարտեսցին մարտուցեալքն . պակասեսցին զէնքն սայրասուրք . մերժեսցին մեղքն . փարատեսցին խաւարքն . մեկնեսցին մառախուղքն : Բազուկ քո հովանասցի , և աջ քո կնքեսցէ , վասն զի

գթած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է 'ի վր ծառայից քոց. Եւ քեզ ընդ Հօր՝ Հոգւոյդ սբ՝ փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Աղօթք հարկաւոր իւրաքանչիւր անձանց հաւատացելոց 'ի քս. Արարեալ սրբոյն Ներսեսի շնորհալւոյ հայոց կաթուղիկոսի.

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ Հայր և Որդի և սբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամ եղելոց. ողորմեա քո արարածոցս:

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն և մի ածութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութե, և լուսաւորեա զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ 'ի հաճոյս, և ընդունել 'ի քէն զխնդրուածս իմ. ողորմեա ինձ բազմամեղիս:

Հայր երկնաւոր ած ճշմարիտ՝ որ առաքեցեր զՈրդի քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս և առաջի

քո · ընկա՛լ զիս որպէս զանառակ որդին , և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին զոր մերկացայ մեղօք · ողորմեա՛ քո արա։

Որդի՛ այ̄ ած̄ ճշմարիտ՝ որ խոնարհեցար ՚ի հայրական ծոցոյ՝ և առեր մարմին ՚ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան , խաչեցար և թաղեցար և յարեար ՚ի մեռելոց՝ և համբարձար փառօք առ Հայր , մեղայ յերկինս և առաջի քո · յիշեա՛ զիս որպէս զաւազակն՝ յորժամ գաս արքայութբ̄ քով · ողորմեա՛։

Հոգի՛ այ̄ ած̄ ճշմարիտ՝ որ իջեր ՚ի Յորդանան և ՚ի վերնատունն , և լուսաւորեցեր զիս մկրտութբ̄ սուրբ աւազանին , մեղայ յերկինս և առաջի քո · մաքրեա՛ զիս վերստին ած̄ային հրով քո՝ որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն · ողորմեա՛։

Անեղ բնութիւն՝ մեղայ քեզ մտօք իմովք , հոգւով և մարմնով իմով · մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վն̄ անուանդ քում սրբոյ · ողորմեա՛։

Տեսօղ ամի̄՝ մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով · ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց , և գրեա՛ զանուն իմ ՚ի դպրու-

թեան կենաց ․ ողորմեա ։

Քննօղ գաղտնեաց՝ մեղայ քեզ կամաւ եւ ակամայ , գիտութբ̄ եւ անգիտութբ̄ ․ թողութիւն շնորհեա մեղաւորիս , զի ՚ի ծննդենէ սբ̄ աւազանին մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի ա̄ծութեանդ քո զգայարանօք իմովք , եւ ա̄մ անդամօք մարմնոյս ․ ողորմեա ։

Ամենախնամ տէր՝ դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո որ ոչ եւս հայիլ յարատ , եւ ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութե̄ , եւ բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զստութիւն , եւ սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութիւն , եւ ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութի̄ , եւ ոտից իմոց՝ ոչ գնալ ՚ի ճանապարհս անօրէնութեան ․ այլ ուղղեա զշարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յա̄մի ․ ողորմեա ։

Հուր կենդանի ք̄ս՝ զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր , բորբոքեա յանձն իմ․ զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ , եւ սրբեսցէ զխիղճ մտաց իմոց , եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ , եւ վառեսցէ զլոյս գիտութե̄ քո ՚ի սրտի իմում ․ ողորմեա ։

Իմաստութի՛ւն Հօր Յիսուս՝ տո՛ւր ինձ իմաստութի՛ւն, զբարիս խորհիլ և խօսիլ և գործել առաջի քո յամենայն ժամ. ՚ի չար խորհրդոց՝ ՚ի բանից և ՚ի գործոց փրկեա՛ զիս. ողորմեա՛։

Կամեցօղ բարեաց տէր կամարար՝ մի՛ թողուր զիս ՚ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա՛ ինձ լինիլ միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. ողորմեա՛։

Արքայ երկնաւոր՝ տո՛ւր ինձ զարքայութիւն քո զոր խոստացար սիրելեաց քոց. և զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս, և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. ողորմեա՛.

Խնամո՛ղ արարածոց՝ պահեա՛ նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ ՚ի պատրանաց մեղաց՝ ՚ի փորձութեանց դիւաց, և ՚ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. ողորմեա՛։

Պահապան ամենեցուն Քրիստոս՝ աջ քո հովանի լիցի ՚ի վերայ իմ ՚ի տուէ և ՚ի գիշերի. ՚ի նստիլ ՚ի տան, ՚ի գնալ ՚ի ճանապարհ, ՚ի ննջել և ՚ի յառնել՝ զի մի՛ երբէք սասանեցայց. ողորմեա՛։

Տէ՛ր իմ՝ որ բանաս զձեռն քո, և լնուս զամ արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա՛ և պատրաստեա՛ զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան. ողորմեա՛։

Դարձուցի՛չ մոլորելոց՝ դարձո՛ զիս ՚ի չար սովորութեանց իմոց ՚ի բարի սովորութիւն. և բևեռեա՛ ՚ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենոյն, և զսէր արքայութեանն, զի զղջացայց ՚ի մեղաց, և գործեցից զարդարութիւն. ողորմեա՛։

Աղբիւր անմահութեան՝ աղբերացո՛ ՚ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութե՛ որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխար-հէս. ողորմեա՛։

Պարգևի՛չ ողորմութե՛՝ պարգևեա՛ ինձ ուղղափառ հաւատով, և բարի գործով, և սբ մարմնոյ և արեան քո հաղորդութե՛ գալ առ քեզ. ողորմեա՛։

Բարերա՛ր Տէ՛ր՝ հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ

չարութիւն այսոցն որ են 'ի ներքոյ երկ-նից • ողորմեա՛ ։

Լոյս Ճշմարիտ Քս՟ արժանաւորեա՛ ըզ-հոգի իմ ուրախութբ՟ տեսանել զլոյս փա-ռաց քոց 'ի կոչման աւուրն, և հանգչել յուսով բարեաց յօթևանս արդարոց մինչև յօր մեծի գալստեան քո • ողորմեա՛ ։

Դատաւո՛ր արդար՝ յորժամ գաս փա-ռօք Հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում • այլ փրկեա՛ զիս 'ի յաւիտենական հրոյն, և լսել՛ տուր ինձ զերանաւէտ կո-չումն արդարոց յերկնից արքայութիւն • ողորմեա՛ ։

Ամենողո՛րմ Տէր՝ ողորմեա՛ ամ՟ հաւա-տացելոց 'ի քեզ, իմոց և օտարաց, ծանօ-թից և անծանօթից, կենդանեաց և մե-ռելոց • շնորհեա՛ և թշնամեաց իմոց և ատել-եաց զթողութի՟ որ առ իս յանցանաց, և դարձո՛ զնոսա 'ի չարեացն զոր ունին վս՟ իմ, զի ողորմութեան քում արժանի եղի-ցին • ողորմեա՛ ։

Փառաւորեա՛լ Տէր՝ ընկա՛լ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա՛ 'ի բարի զխնդ-

դրուածս իմ՝ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, և յովհաննու մկրտչին, և սրբոյն Ստեփաննոսի նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, և սրբոց առաքելոց՝ մարգարէից՝ վարդապետաց՝ մարտիրոսաց, հայրապետաց՝ ճգնաւորաց՝ կուսանաց, և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Վասն սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեանն՝ Տէր ընկալ զաղաչանս մեր, և կեցո՛ զմեզ։

Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ՚ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի՝ և գթացեալ կեցուսցէ զարարած իւր։ Ամենակալ Տէր։

Ընկա՛լ Տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին՝ անարատ ծնողի միածնի Որդւոյ քոյ, և աղաչանօք ամենայն սրբոց քոց։ Տո՛ւր մեզ Տէր և ողորմեա՛, ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս

մեր։ Արժանաւորեա՛ զոհութի̃ փառա-ւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ ս̃բյ հոգ-ւոյդ, այժմ և։

Օրհնեալ տէր մեր Յս̃ Ք̃ս, ամէն։

Հայր մեր որ յերկինս։

Օ հանգստեան զաղօթս և զաղաչանս ընկա՛լ մարդասէր ա̃ծ ՚ի հաճոյս բարերար կամաց քոց. և մեր մեղաց և բազում յանցանացն թողութի՛ւն շնորհեա՛. և քեզ փառք յաւիտեանս, ամէն։

Փառք քեզ տ̃ր ա̃ծ մեր, որ պարգևե-ցեր զօրս զայս բարեաւ և խաղա-ղութեամբ անցուցանել։

Մարդասէր ա̃ծ՝ զաւաջակայ գիշերս որ ՚ի վերայ մեր գալոց է, ՚ի մեղաց փրկեա՛, ՚ի չարեաց պահպանեա՛, և ՚ի գործս բարիս առաջնորդեա՛։

Առաւօտու օրհնութեանցն և փառա-բանութեանցն արժանի՛ արա զմ̃ հաւա-տացեալս անուանդ քում սրբոյ, և պահեա՛ ՚ի խաղաղութեան։

Տէր ա̃ծ մեր՝ տո՛ւր զքո խաղաղութի̃դ ա̃մ աշխարհի, բա՛րձ զցասումն և զպա-

տուհասն ՚ի յարարածոցս ։

Ողորմեա՛ հարց և եղբարց մերոց՝ կենդանեաց և հանգուցելոց ։

Ողորմեա՛ զեկեղեցի շինողաց, երախտաւորաց, և այնոցիկ որք տան պտուղս ողորմութեան դպրատանց, և ջանան միշտ հաստատուն պահել ։

Տէր ա̃ծ՝ օգնեա՛ թագաւորացն քրիստոնէից, և իշխանացն բարեպաշտից, զօրաց և զաւակաց նոցին՝ պահելով ՚ի խաղաղութեան ։

Տէր ա̃ծ մեր՝ պահեա՛ զմեզ ամենայն պարագայիւք՝ ամբողջ և անխռով ՚ի կամս ողորմութեան քո ։

*Նշանաւ սուրբ և պատուական խաչիւ քո՝ հալածեա՛ զերևելի և զաներևոյթ թշնամիս ՚ի սահմանաց մերոց և ՚ի բնակութենէս մերմէ ․ փրկեա՛ զմեզ ՚ի հրոյն յաւիտենից, և արժանի՛ արա երանաւէտ կենացն անվախճանից, և քեզ փառք յաւիտեանս, ամէն ։

Աղօթք սրբոյն Ներսեսի լամբրոնացւոյ առ խաչելեալն քրիստոս ։

Առ քեզ ակնարկեմ աղբիւր ջրոյ կենդանւոյ, և աղաղակեմ՝ թէ ընդէ՞ր է ինձ սրբութեան ծարաւել, երբ դու ես իմ սրբութիւն ․ կամ ընդէ՞ր փափաքեմ մաքրութե̄, մինչ դու ես իմ մաքրութիւն ։ Նայուհետև ուսեալ՝ եթէ դու ես իմաստութիւն մեզ յոյժ տուեալ արդարութի̄ և սրբութիւն, քեզ փափագեմ, քեզ տռփամ ․ տուր իմ ծարաւեալ ոգւոյս զքեզ զովացումն՝ աղբիւր ջրոյ կենդանւոյ խաղացելոյ 'ի կեանսն յաւիտենից ։

Ծարաւիմ ըմպել 'ի կրկին վտակաց կողիդ, որով և սրբեալ սիրով քո զմայլեմ ։ Քաղցնում ուտել զմարմինդ, որով կենդանացեալ անմահ ես լինիմ ։ Փափագեմ ողջագուրել զխոցուած ձեռացդ, որով հատեալ առ քեզ պսակիմ ։ Տռփամ ակնարկել զոտսդ, որոյ ապտակաւն 'ի մեղաց իմոց բժշկիմ ։ Ապաղաղակի ընդ

ինձ տէր՝ զի նուաղեաց յինէն հոգի իմ.

Նուաղեցաւ հոգի իմ 'ի քո անձաւագ-սիրոյ։ Տոչորեցայ յառ քեզ տռփանացդ՝ ով վասն իմ խաչեալ։ Թալկացայ, յորժամ առ քեզ անկանիցիմ՝ ով վս՟ իմ ապտակեալ։ Ես աղաղակեմ՝ ցոյց ինձ զդէմս քո, զի ձայն քո քաղցր է, և դէմք քո գեղեցիկ. երբ եկից երևեցայց քեզ։

Արդ լո՛ւր ինձ, և արբեցո՛ զիս վառղխաղակի քո գթութեամբդ և սիրով, զի և յինէն՝ որ հաւատամ 'ի քեզ, բղխեսցեն աղբիւրք ջրոյ կենդանութեան։

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Յորում առաջի դնին պէսպէս բանք աղօթից՝ զօրաւորք 'ի բժշկութիւն հոգւոր հիւանդութեանց՝ բաժանեալք ըստ եօթնեակ աւուրց շաբաթուն, առ մտադիւր ընթերցանութիւն իւրաքանչիւր հոգեսիրաց։

---

Ի վերջոյ յաւելան խնդրուածք հաւատացուցիչք ի՟դ՝ յաղօթամատոյց դրոց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, և յայլոց երանելի Սրբազանեաց։



Երրորդութիւն սուրբ սրբեա՛ զիս ·
լուա զմարմինս և զհո գիս ։

# Աղօթք առաւօտեան:

Փառք քեզ ա̃ծ արթուն բնութիւն, որ ոչ երբէք ննջես պահապանդ իսրայելի: Որ յանմահ պաշտօնէից քոց՝ իմացական ձայնիւ անդադար օրհնաբանիս: Որ և զիս զհողեղէն ծառայս քո յանձնեցեր ՚ի պահպանութիւն նց̃· և կարգեցեր քնածու բնութեամբ՝ զարթուն ծառայոդ-՚ի խնամակալութիւն: Ո՛րս և շնորհեցեր թմբրեցելոյս ձայնատու և զարթուցիչ երգն զգիշերային խօսնակս, կանխել ՚ի փառաբանութիւն անուան քո տ̃ր, զի և ՚ի հողեղինացս հաճեցար առնուլ զօրհնութիւն·

Գոհանամ զքեն անմատչելի լոյս սուրբերրորդութիւն, որ զիս ազատեցեր ՚ի խաւարագնաց դիւաց՝ ՚ի թշնամեաց փրկութեան իմոյ· և ընդ արթուն բնութիւն հրեշտակացդ՝ օրհնաբանակից քեզ արարեր: Ո՛ինչ տաց քեզ տրիտուր և փոխանակ բարերարութեանդ տէ՛ր իմ, կեա՛նք իմ, լո՛յս իմ, և

աղբիւր ա՟մ բարեաց , եթէ ոչ զկեանս՝ իմ՝ զոր ետուր և շնորհեցեր ինձ 'ի գիշերիս յայսմիկ , քեզ նուիրեցից 'ի մշտնջենաւոր և յանդադար փառաբանութի՟ն · թէպէտ չեմ բաւական ըստ արժանեաց փառաց քոց օրհնել զքեզ :

Արդ՝ ո՟պ հրեշտակաց քոց տաս նոր 'ի նորոյ զզանազան կերպ զքեզ օրհնելոյ՝ և երեքսրբենիւ փառաբանելոյ , տո՛ւր և ինձ աղաչեմ զքեզ՝ արթնութիւն մտաց , նոր օրհնութե՟ զնորոգիչդ կենաց իմոց բարեբանել : Դու տէր՝ և զառաւօտս խաղաղութեան մինչև ցերեկոյ շնորհեա՛ ինձ առանց փորձանաց անցուցանել , որ խընդրեմ զարքայութիւն քո 'ի սկզբան ա՟մ խնդրուածաց իմոց :

Տէր երկնի և երկրի , և հրամայօղ ծովու և ցամաքի , դու և զայլ բարիս բնութե՟՝ շնորհաց և փառաց ողորմութե՟ քով պարգևեա՛ ինձ , և արդար վաստակոց յաւուրս [illegible]կ արժանի արա · որով և կարեք իմ և իմոցս լցցին , և աղքատք 'ի փշրանաց սեղանոյ ա[illegible]-աստանդ յագեսցին · և օրհնեսցեն զքեզ այժմ և յաւիտեանս , ամէն :

## Հանգանակ հաւատոյ։

Հաւատամք 'ի մի ա՟ծ 'ի Հայր ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից։ Հաւատամք և 'ի մի տէր յ՟ս ք՟ս՝ յորդին ա՟յ, ծնեալն յա՟յ հօրէ միածին, այսինքն յէութենէ հօր։ Ա՟ծ յա՟յ, լոյս 'ի լուսոյ, ա՟ծ ճշմարիտ յա՟յ ճշմարտէ, ծնունդ՝ և ոչ արարած։ Նոյն ինքն 'ի բնութենէ հօր․ որով ամ՟ն ինչ եղև յերկինս և յերկրի՝ երևելիք և աներևոյթք։

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի մարիամայ սրբոյ կուսէն՝ հոգւով սրբով։ Որով էառ զմարմին զհոգի և զմիտ և զամ՟ն որ ինչ է 'ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կա[illegible]ծեօք․ Չարչարեալ, խաչեալ, թաղեա[illegible] յերրորդ աւուր յարուցեալ․ ելեալ [illegible]կինս նովին մարմնովն նստաւ ըն[illegible]է հօր։ Գալոց է նովին մարմնովն և [illegible]ք հօր դատել զկենդանիս և զմեռեա[illegible] որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և՚ի ս̃բ Հոգին յանեղն և՚ի կատարեալն․ որ խօսեցաւ յօրէնս և՚ի մարգարէս և յաւետարանս․ Որ էջն ՚ի յորդանան․ քարոզեաց յառաքեալսն․ և բնակեցաւ ՚ի սուրբսն։

Հաւատամք և՚ի մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի․

Հաւատամք ՚ի մի մկրտութիւն, յապաշխարութի՝ ՚ի քաւութի և՚ի թողութի մեղաց։ ՚Ի յարութի մեռելոց․ ՚ի դատաստանն յաւիտենական՝ հոգւոց և մարմնոց, յարքայութիւն երկնից և՚ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասենն, էր երբեմն յորժամ ոչ էր որդի, կամ էր երբեմն յորժամ ոչ էր ս̃բ հոգին․ կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ կամ ՚ի գոյութենէ ասեն լինել զանեղ որդին ա̃յ, կամ զս̃բ հոգին․ և թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք․ զայնպիսի սասացողսն նզովէ կաթողիկէ և առաքելական եկեղեցի․

Ի ս̃րյ Լուսաւորչէն մերմէ ասացեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով սրբոյ երրորդութեն և մի ա̃ծութեն

## Աղօթք առաւօտեան իւրաքանչիւր աւուր։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ամէն։

Հայր մեր որ յերկինս • սուրբ եղիցի անուն քո • եկեսցէ՛ արքայութ̃ի քո • եղիցին կամք քո որպ̃ յերկինս և յերկրի • զհաց մեր հանապազորդ՝ տո՛ւր մեզ այսօր • թո՛ղ մեզ զպարտիս մեր՝ որպ̃ և մեք թողումք մերոց պարտապանաց • և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն • այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ • զի քո՛ է արքայութ̃ի և զօրութ̃ի և փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

—

Տէր՝ եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Տէր՝ եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութ̃իս քո։

Օրհնեալ համագոյ և միասնական անբաժանելի որք Երրորդութիւն՝ Հայր և Որդի և Հոգի որք․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Տէր՝ զի բազում եղեն նեղիչք իմ, և բազումք յարեան ՚ի վերայ իմ։
Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ ոչ փրկութիւն սորա առ Աստուծոյ իւր։
Այլ դու Տէր օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։
Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի, և լուաւ ինձ ՚ի լեռնէ սրբոյ իւրմէ։
Ես ննջեցի և ՚ի քուն եղէ, զարթեայ և Տէր ընդունելի իմ է։
Ոչ երկեայց ես ՚ի բիւրաւոր զօրաց նց, որք շուրջանակի պատեալ պաշարեալ պահէին զիս։
Արի Տէր և փրկեա զիս Աստուած իմ, զի դու հարեր զամենեսեան որք էին ընդ իս թշնամութեամբ ՚ի տարապարտուց, և զատամունս մեղաւորաց փշրեցես։
Տեառն է փրկութիւն, ՚ի վերայ ժողովրդեան քո օրհնութիւն քո։

Տէր ա͞ծ փրկութե͞ իմոյ, ՚ի տուէ կար-
դացի և գիշերի առաջի քո։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր,
խոնարհեցո զունկն քո ՚ի խնդրուածս իմ։

Զի լցաւ չարչարանօք անձն իմ, և
կեանք իմ ՚ի դժոխս մերձեցան, և համարե-
ցայ ես ընդ այնոսիկ որք իջանեն ՚ի գուբ։

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի,
և ՚ի մեռեալս ազատ։

Որպէս զվիրաւորս, որք ննջեն ՚ի գե-
րեզմանս։

Զորս դու ոչ յիշեցեր, նոքա ՚ի ձե-
ռանէ քումմէ մերժեցան։

Եդին զիս ՚ի գբի ներքնումն, ՚ի խա-
և ՚ի ստուերս մահու։

հաստատեցաւ սրտմտութիւն քո,
ալիս քո ածեր ՚ի վերայ իմ։
արարեր յինէն զծանօթս իմ, և
նշաւակ իւրեանց։

Մատնեցայ և ոչ ելանէի, աչք իմ
տկարացան յաղքատութենէ։

Աղաղակեցի առ տէր զօրհանապազ, և
համբարձի առ քեզ զձեռս իմ։

Մի թէ մեռելոց առնիցես զսքանչելիս

քո, կամ բժիշկք յարուցեալ՝ խոստովան առնիցին առ քեզ.

Ո՞ւր թէ պատմեսցէ՞ք երբէք ՚ի գերեզմանի զողորմութիւս քո, կամ զճշմարտութիւս քո ՚ի կորստեան.

Ո՞ւր թէ ճանաչիցին ՚ի խաւարի սքանչելիք քո, կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ.

Ես առ քեզ Տէր աղաղակեցի, առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։

Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ, կամ դարձուցանես զերեսս քո յինէն.

Տնանկ և վաստակաւոր եմ ես ՚ի մա[նկ]ութենէ իմմէ, ՚ի բարձրութենէ խոնարհ[…] և ապշեցայ.

Յիս հաստատեցաւ բարկութի[…] [զա]րհուիրք քո խռովեցուցին զի[ս]

Շրջեցան զինև որպէս ջ[…] պաշարեցին զիս ՚ի միասին։

Հեռի արարեր յինէն զբարեկ[…] և զծանօթս իմ՝ վա՛ թշուառութեան ի[…]

Օրհնեա՛ անձն իմ զՏէր, և ամ ոսկերք իմ զանուն սուրբ նորա.

Օրհնեա՛ անձն իմ զՏէր, և մի՛ մոռա-

նար զիմ աւուրս նորա ։

Ո քաւէ զմեղս քո , բժշկէ զիմ հիւանդութիւնս քո ։

Ո փրկէ յապականութենէ զկեանս քո , պսակէ զքեզ ողորմութբ և գթութբ ։

Ո լնու ՚ի բարութենէ զցանկութի քո , նորոգեսցի որպ արծուոյ մանկութի քո ։

Առնէ ողորմութիս տէր , և իրաւունս ամ զրկելոց ։

Ցոյց տր զճանապարհս իւր Մովսէսի , և որդւոցն Իսրայէլի զկամս իւր ։

Գթած ողորմած է տէր , երկայնամիտ և բազումողորմ ։

Ո՛չ իսպառ բարկանայ մեզ տէր , և ո՛չ յաւիտեան պահէ ոխս ։

Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ տէր , և ո՛չ ըստ անօրէնութե մերում հատոյց մեզ ։

Զի որպ բարձր են երկինք յերկրէ , այնպէս զօրացոյց տէր զողորմութիւն իւր ՚ի վերայ երկիւղածաց իւրոց ։

Որչափ հեռի են արևելք յարևմտից , այնչափ հեռի արար ՚ի մէնջ զանօրէնութիւնս մեր ։

Որպ գթայ հայր ՚ի վր որդւոց իւրոց ,

այնպէս գթասցի տէր յերկիւղածս իւր։

Զի նա գիտաց զստեղծուածս մեր, և յիշեաց թէ հող եմք։

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկի։

Շնչէ ՚ի նմա հողմ և ոչ է, և ոչ ևս երևի տեղի նորա։

Բայց ողորմութիւն տ՟ն մնայ յաւիտեանս յաւիտենից ՚ի վ՟ր երկիւղածաց իւրոց, և արդարութիւն ն՟ր յորդւոց մինչև յորդիս։

Որք պահեն զուխտս ն՟ր, յիշեն զպատուիրանս նորա և առնեն զնա։

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր, արքայութիւն ն՟ր ամենեցուն տիրէ։

Օրհնեցէք զտէր ա՟մ հրեշտակք նորա, հզօրք զօրութ՟բ որք առնէք զբան նորա՝ ՚ի լսել ձայնի պատգամաց նորա։

Օրհնեցէք զտէր ա՟մ զօրութիւնք ն՟ր, պաշտօնեայք և արարողք կամաց նորա։

Օրհնեցէք զտէր ա՟մ գործք նորա, զի ընդ ա՟մ տեղիս է տէրութիւն նորա. օրհնեա անձն իմ զտէր։

Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեա՟բ քով։

Լուր ինձ արդարութեբ քով, և մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամ կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ, և նստոյց զիս 'ի խաւարի որպ մեռեալ յաւիտենից։

Ձանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրս զառաջինս, խորհեցայ յամ գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ տէր զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ որք իջանեն 'ի գուբ։

Լսելի՛ արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի ես 'ի քեզ տէր յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ յոր և գնացից, զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու

ես աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր կեցուսցես զիս արդարութեամբ քով, հանցես ՚ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ, և կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

# Կիրակի առաւօտ։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ամէն։

Հայր մեր որ յերկինս. սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր. թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն. այլ փրկեա զմեզ ՚ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

Սաղմոս ապաշխարութեան։

Տէր՝ մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։

Ողորմեա ինձ տէր զի հիւանդ եմ ես, բժշկեա զանձն իմ զի խռովեցան ոսկերք իմ։

Անձն իմ յոյժ խռովեցաւ , և դու Տէր մինչև յե՞րբ ։

Դարձի՛ր Տէր և փրկեա՛ զանձն իմ, կեցո՛ զիս Տէր ըստ ողորմութեան քում։

Զի ո՛չ ոք է որ ՚ի մահու յիշէ զքեզ , կամ ՚ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ։

Վաստակեցայ ես ՚ի հեծութեան իմում, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի ։

Խռովեցաւ ՚ի սրտմտութենէ ակն իմ , և մաշեցայ ես ՚ի վերայ ամենայն թշնամեաց իմոց ։

Ի բա՛ց կացէք յինէն ամենեքեան , որք գործէք զանօրէնութիւն ։

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ , լուաւ Տէր աղօթից իմոց , և Տէր զխնդրուածս իմ ընկալաւ ։

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ, դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին ։

Շարական ապաշխարութեան ։

Ո՛վ բազումողորմ՝ խնայեա՛ յարարածս քո հա՛յր ամենակալ , և ո-

ողորմեա՛ ։ Ա՛րեգակն արդարութեան՝ ծագեա 'ի հոգիս մեր զլոյս ճշմարտութեան, և ողորմեա՛ ։ Տո՛ւր մեզ տէր զխաղաղութիւն, և փրկեա՛ 'ի նեղչաց մերոց հոգիդ ճշմարտութեան, և ողորմեա՛ ։

'Ի նեղութեան խնամ օգնեա՛ ինձ տէ՛ր, որպէս երբեմն յովնանու, և ողորմեա՛ ։ 'Ի յանցանաց իմոց մաքրեա՛ զիս տէ՛ր, որպէս երբեմն զմաքսաւորն, և ողորմեա՛ ։ 'Ի նենգաւոր շրթանց փրկեա՛ զիս տէ՛ր, և յարենէ ապրեցո՛, և ողորմեա՛ ։

Վտանգիմ 'ի բազմութեան մեղաց իմոց, Ա՛ծ խաղաղութեան օգնեա՛ ինձ ։ Ալեկոծիմ հողմով անօրէնութեան իմոյ, Թագաւոր խաղաղութեան օգնեա՛ ինձ ։ 'Ի խոր մեղաց ծովու տարաբերեալ ծփիմ, նաւապետ բարի փրկեա՛ զիս ։

Ծո՛վ կենցաղոյս հանապազ զիս ալէկոծէ ։ Սրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ ։ Նա՛ւապետ բարի լե՛ր անձին իմոյ ապաւէն ։

Մերձ եմ յընկղմիլ օգնեա՛ ինձ նաւապետ բարի ։ Քանզի ծանրացան 'ի վերայ իմ բեռինք մեղաց ։ Ա՛ծ յօգնել

ինձ փութա՛, քանզի խորք հարեալ ընկղ-
մեն զիս յանդունդս. այլ դու նաւապետ՝
լե՛ր և ինձ ձեռնտու: Փրկեա՛ 'ի վտանգէ
զնաւաբեկս 'ի յալեաց ծովուս, քանզի
կորնչիմ 'ի մեղաց անօրէնութե՟ իմոյ: Աղաչեմ զքեզ տէ՛ր՝ պարգևեա՛ ինձ
ապաշխարութե՟ լուանալ զմեղս իմ
և ողորմեա՛: Զարտասուս իմ և զհառա-
չանս սրտի իմոյ՝ մարդասիրութեամբդ քո
ընկա՛լ տէ՛ր և ողորմեա՛: Մերձեցելոյն խնդ-
րուածք իմ առաջի քո տէր. բարերա-
րութե՟դ քո խնայեա՛ յիս և ողորմեա՛:

Աղօթք առ Հայրն երկնաւոր 'ի բանից երանելւոյն Յովհաննու գառնեցւոյ:

Յաւիտենից ա՟ծ և արարիչ բոլորից, որ ամենակարող զօրութե՟ քով 'ի
սկզբանէ արարեր զերկինս և զերկիր,
յայսմ աւուր գոյացուցեր զլոյս հրամա-
նաւ քով, և որոշեցեր զլոյսն 'ի խաւարէն:
Հա՛ս խաւարեալս ազգի ազգի անօրէնու-
թե՟, աղաչեմ զքեզ տէր իմ և ա՟ծ իմ՝
բարերար և բազումողորմ, ծագեա՛ առ իս

զողորմութեան զլոյս քո, և մերժեա՛ յինէն զխաւարային խորհուրդս չարին, որով անկեալ կործանեցայ յանդունդս կորստեան, և կամ ՚ի տարակուսի ։

Որ յաւէժ կարողես և հզօր, լոյս անստուեր, աղբիւր անսպառ բարեաց, կենդանութեան պարգևատու, ցոլացո՛ յիս զփայլումն սրբարար շնորհաց հոգւոյդ քո սրբոյ, և մաքրեա՛ զսիրտ իմ և զհոգի ՚ի մթութենէ մեղաց իմոց և յամենայն աղտեղութենէ, որով շլացեալ ոչ կարեմ հայել ՚ի լոյս աստուածային պատուիրանաց քոց, և գնալ ՚ի ճանապարհս արդարութեան ։

Ամենահայեաց ակն և աննիրհելի պահապան նորոյս իսրայելի, որ նստիս ՚ի քրովբէս և հայիս յանդունդս, նայեա՛ց աչօք քաղցրութեան յապիկար ծառայս քո, որ խորտակեալ յանդունդս մեղաց՝ չունիմ կար և զօրութիւն ելանել ինքնին, և չի՛ք իմ ձեռնտու և օգնական ազատել զիս յանհնարին տարակուսանաց. այլ դու անարգամեծար տէր՝ լե՛ր ինձ այցելու և պաշտպան, և զերծո՛ զիս ՚ի խորոց սատի չարեացս ամբաւից աննահանջելի հրաման-

նաւ քով. զի չէք ինչ որ արգելուլ կարիցէ զամենակարող զօրութիւն քո ։

Աղաչեմ զքեզ ողորմած՝ առաքեա՛ առ իս զհոգի իմաստութեան քո , որ շրջելով ՚ի մէջ ջուրց կենդանագործեր զարարածս քո , զի ծննդաբեր արասցէ զամլութիւն մտաց իմոց ՚ի հանճարական բանից մաղթանս յընդունելութիւն կամաց բարձրելոյդ . զի ես ինձէն առանց նպաստից նորին զոր ինչ արժան է հայցել՝ ոչ գիտեմ.

Օ՛ն նա որ քննէ զսիրտ և զխորս ոյ , գիտէ նա և զպէտս մեր և զկարիս առաւել քան զոր խնդրեմք և իմանամք , և գթացեալ ՚ի տկարութիւն մեր ուսուցանէ մեզ զնոսին հայցել հաւատով , և գտանել առ ՚ի քէն հանդերձ թողութեամբ մեղաց մերոց ։

Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց բարեբանեալ՝ որ ոչ կացի յուխտին իմում զոր ուխտեցի քեզ յաւուրն փրկութեան , և ոչ զգուշացայ կալ ՚ի ճանապարհս օրինաց քոց . այլ իշխանին մոլորութեան անսացեալ խրատու՝ զառածեցայ յերկնագնաց պողոտայէդ ՚ի փշայեղց մացառս մեղաց և մա-

հու. այլ դու խնամակալ՝ որ ոչ ձանձրանաս 'ի բարերարելդ, և ոչ յագիս յողորմածութենէ, հոգւով պետութեան քո հաստատեա՛ զիս 'ի պատուիրանս քո անդրդուելի՝ ուղղել վերստին զգնացս ոտից իմոց առ տուիչդ կենաց:

Որ դու կարող և մարդասէր, որ յառաջ քան զլինելութիւն երկնի և երկրի պատրաստեցեր՝ զարքայութիւնդ 'ի ժառանգութիւն սրբոց քոց, սրբեա՛ և զիս յամենայն անօրէնութենէ իմմէ, և արժանաւորեա՛ ընդ նոսին յարքայութեան քում յերկինս գոհութեամբ փառաւորել զամենազօր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Նորին երանելւոյ Յովհաննու Գառնեցւոյ աղօթք առ աստուած:

Տէր տէր հայր՝ և աստուած ամենայն կենաց իմոց՝ անկանիմ առաջի քո, և աղաչեմ զքեզ՝ հայեա՛ 'ի տառապանս ծառայիս քո, և խնայեա՛ 'ի մոլորեալ մեղօք անձն իմ: Բժշկեա՛ զբեկեալս, և կանգնեա՛ զգլորեալս. Դի՛ր սպեղանի խոց-

եալ ոգւոյս, և պատեալ զվէրս վիրաւորելոյս: Վերականգնեալ զիս, քանզի կորեայ և կործանեցայ բազում անօրէնութեամբս. և չարիք իմ բարձրացան քան զգլուխ իմ: Տոռունք մեղաց պատեցան զինև եօթնպատիկ, և սղալանք իմ պաշարեցին զիս. և ոչ գոյ թիւ անզգամութեան իմոյ: Քեզ մեղայ փրկութիւն յաւիտենից. ոչ ունիմ վստահութիւն կոչել զանուն ահաւորիդ 'ի վերայ վսերիս: Հարան յիս փուշք մեղաց իմոց. և ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս:

Իսկ արդ՝ տէ՛ր իմ տէր՝ առ ո՞ ապաւինեցայց, և կամ զո՞ արարից ինձ յոյս և ապաւէն փրկութեան: Բայց թէպէտ և բազում անգամ բարկացուցի զբարձրեալդ, սակայն առ քեզ կարդացից: Մի՛ մատներ 'ի դատաստան ընդ ծառայիս քո տէ՛ր իմ, և մի՛ հատուցաներ ըստ գործոց իմոց ա̃ծ իմ: Մի՛ սրտմտութեամբ և սպառնալեօք սաստեր ինձ տէ՛ր իմ, և մի՛ բարկութեամբ ահաբեկեսցես զեղկելիս ա̃ծ իմ. Մի՛ մատներ զմեղուցեալս 'ի մորմոքումն յաւիտենից կայծականցն տէ՛ր իմ, և մի՛ յուղարկեր զողորմելիս յանողորմ տանջանսն ա̃ծ իմ:

Մի՛ առաքեր զիս 'ի խաւարին արտաքին տէր իմ, և մի՛ արկաներ աշխարելիս 'ի գուբն ապականութե՟ ա՟ծ իմ։ Մի՛ որոշեցես զիս յերամէ երանելեացն տէր իմ, և մի՛ զրկեցես զյանցաւորս 'ի հաղորդութենէ ընտրելոցն ա՟ծ իմ։ Մի՛ զահագին ձայնն ձայնեցես առիս տէր իմ, և մի՛ անտես առներ զտարակուսեալս 'ի յաւիտենից օրհնութեանց ա՟ծ իմ։ Այլ ողորմութե՟ քո յաւէտ ողորմեա՛ ինձ, և անհաս մարդասիրութե՟ քո գթա՛ յիս։

Աղաչեմ զքեզ տէր՝ սրբարար զօրութե՟ քո սրբեա՛ զիս զաղտեղեալս մեղօք, և ազատարար իշխանութե՟ քո ազատեա՛ զիս 'ի դառն վշտաց գեհենոյն։ Տո՛ւր ինձ տեղի 'ի լուսափայլ առագաստին, և դասեա՛ ըզտարակուսեալս 'ի դասս իմաստուն կուսանացն։ Տո՛ւր տէր աղաչեմ զքեզ՝ զխոստացեալ բարիսն ընդ ա՟մ ընտրեալսն․ զի ընդ նոսին փառաւորեցից զամենասուրբ երրորդութիդ զհայր և զորդի և զսուրբ հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

# Երկուշաբաթի աւուր:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ամէն:

Հայր մեր որ յերկինս:

---

Սաղմոս ապաշխարութեան:

Երանի՜ ում թողութիւն եղև մեղաց, և ծածկեցան ամ̃ յանցանք նորա:
Երանի՜ առն որում ոչ համարի տէր զմեղս նորա, և ոչ գոյ նենգութիւն ՚ի բերան նորա:

Լռեցի ես և մաշեցան ամ̃ ոսկերք իմ, առ աղաղակել ինձ առ տէր զօրհանապազ ՚ի տուէ և ՚ի գիշերի:

Ծանրացաւ ձեռն քո ՚ի վերայ իմ, դարձայ ՚ի թշուառութիւն զի հարան յիս փուշք:

Զմեղս իմ ցուցից քեզ, և զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցից ՚ի քէն:

Ասացի թէ պատմեցից ինձ․
և դու թողեր զամենայն ամբա…
մեղաց իմոց։

Վ̃ն այսորիկ յաղօթս կացցեն առ քեզ ա̃մ սուրբք ՚ի ժամ ընդունելի։

Բայց միայն ՚ի ջուրցն հեղեղաց բազմաց, որք առ նոսա ինչ ոչ մերձեսցին։

Դու ես ապաւէն իմ ՚ի նեղութենէ յայսմանէ, որ շուրջ եղեն զինև։

Ցնծութի̃ իմ փրկեա՛ զիս յայնցանէ, ո̃ք պաշարեցին զիս։

Իմաստուն արարից զքեզ և խելամուտ ՚ի ճանապարհ յոր և գնասցես, և հաստատեցից ՚ի վերայ քո զաչս իմ։

Մի՛ լինիք որպէս զձի և զջորի զի ոչ գոյ ՚ի նոսա իմաստութիւն, ՚ի սանձս և ՚ի դանդանաւանդս ձմլեսցես զկզակս նոցա, որք առ քեզ ինչ ոչ մերձեսցին։

Բազում տանջանք են մեղաւորաց, բայց ո̃ք յուսան ՚ի տէր ողորմութի̃ տ̃ն շուրջ եղիցի զնոքօք։

Ուրա՛խ եղերուք և ցնծացէ՛ք արդարք, ՚ի տէր պարծեցարո՛ւք ամենեքեան ո̃ք ուղիղ էք սրտիւ։

այր բազումողորմ խոստովանիմ առ քեզ որպէս զանառակ որդին , Թող ինձ զմեղս իմ և ողորմեա՛ ։ Տէ՛ր որ գթացար 'ի կինն քանանացի , գթա՛ և յիս 'ի մեղաւորս և ողորմեա՛ ։ Տէ՛ր որ դարձուցեր զմաքսաւորն 'ի գիտութիւն ճըշմարտութեան , դարձո՛ և զիս զմոլորեալս և ողորմեա՛ ։

Աղաչեմ զքեզ Հա՛յր երկնաւոր՝ մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն , զի նեղեալ եմ ես վաղվաղակի լո՛ւր ինձ տէ՛ր ։ Մոլորեալ անձն իմ անօրէնութեամբ՝ մի՛ կորուսաներ զիս տէ՛ր ըստ անօրէնութեան իմոյ՝ որ խնդրողդ ես մոլորեալ ոչխարին ։ Ծանրացեալ մեղօք ընկղմի անձն իմ , ըն- կա՛լ զիս որպէս երբեմն զպետրոս՝ որ ծփիմս ալեկոծեալ յանցանօք ։

Մեղաք մինչև յերկինս , և զարդար զցասումն քո շարժեցաք 'ի մեզ . տէ՛ր ըստ մեծի քում ողորմութեանդ ողորմեա՛ մեզ ։ Իջաք մինչ 'ի դժոխս՝ ընկղմեալք յանօրէնութեան մերում . տէ՛ր յիշեա՛ [illegible]

արեան որդւոց քո և ողորմեա՛ ։ Հալածեա՛ ՚ի մէնջ տէ՛ր նշանաւ խաչի քո զընդդիմամարտ և զաներևոյթ գազանն, և մի՛ տար յապականութի՛ զքո ժառանգութիւն ։

Յոյս իմ ես դու տէ՛ր քաւիչ յանցանաց իմոց, մի՛ անտես առներ զեղխումըն արտասուաց իմոց. ողորմեա՛ ինձ տ՛ծ ։ Առ քեզ ապաւինեցայ որ՛պ զանառակ որդին, հայր մեղայ յերկինս և առաջի քո. ողորմեա՛ ինձ տ՛ծ ։ Փրկեա՛ զիս տ՛ծ ՚ի բազում մեղաց իմոց, արա՛ արժանի քոյին ու̃բ-արքայութեդ. ողորմեա՛ ինձ տ՛ծ ։

Ծով մեղաց իմոց զիս ալէկոծէ. որ ես նաւապետ բարի՝ շնորհեա՛ ինձ նաւահանգիստ, հայր ամենակալ ։ Խորք պատրանաց զիս կորուսանեն. այլ դու նա՛ւապետ բարի՝ շնորհեա՛ ինձ նաւահանգիստ, հայր ամենակալ ։ Որ միայն իշխանդ ես թողուլ զմեղս. և ես աղաչեմ զքեզ տէ՛ր՝ թո՛ղ ինձ զմեղս իմ, հայր ամենակալ ։

Վիրաւորեալ յանցանօք անձն իմ առ քեզ տէ՛ր համբառնի ձայն իմ. թո՛ղ ինձ զմեղս իմ միայն բարեգութ, և ողորմեա՛ ինձ տ՛ծ ըստ մեծի ողորմութե̃

քում։ Կործանեաց զիս չարագործ թըշնամին, և կամի իսպառ զիս որսալ. Հայր բարեգութ բժշկեա զվիրաւորեալս, և ողորմեա ինձ Տ՛Ծ ըստ մեծի ողորմութե՟ քում։ Անդունդք մեղաց պաշարեցին զիս, զի բազում են քան զաւազ ծովու. առ քեզ տէր պաղատիմ փրկեա ՚ի վտանգէս, և ողորմեա ինձ Տ՛Ծ՝ ըստ մեծի ողորմութեան քում։

Մաքսաւորին հառաչանօք ՚ի տաճարին եառ զքաւութի՟. նովին ձայնիւն և ես գոչեմ, ողորմեա ինձ Տ՛Ծ։ Աւազակին աղաղակէր ՚ի խաչին՝ յիշեա զիս տէր. նովին ձայնիւն և ես գոչեմ, ողորմեա ինձ Տ՛Ծ։ Անառակ որդին աղերսանօք աղաչէր զքեզ՝ հայր մեղայ յերկինս և առաջի քո. նովին ձայնիւն և ես գոչեմ, ողորմեա ինձ աստուած։

Անկանիմ առաջի քո և խնդրեմ զթողութի՟ յանցանաց իմոց. մի՛ անտես առներ հայր զաղաչանս իմ։ Աղաղակեմ որպ՟ մաքսաւորն, և հեղում զարտասուս իմ առաջի քո որպ՟ պոռնիկն. մի՛ անտես առներ հայր զաղաչանս իմ։ Յաներևոյթ

թշնամւոյն պարտեցայ, և 'ի գաղտնի նետից բանսարկուին վիրաւորեցայ. մի' անտես առներ Հա՛յր զաղաչանս իմ:

Մեղուցեալ անձամբ կարդամ առ քեզ Հա՛յր երկնաւոր, օգնեա' ինձ 'ի նեղութեան. որ մեղօք եմ մեռեալ օգնեա' ինձ. Վիրաւորեցայ ես յաներևոյթ թըշնամւոյն, բժի՛շկ հիւանդաց բժշկեա' զիմ զհիւանդութիւնս. որ մեղօք եմ մեռեալ օգնեա' ինձ: Մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ, խնդրո՛ղ գերելոց խնդրեա' զիս զմոլորեալս. որ մեղօք եմ մեռեալ օգնեա' ինձ:

Աղօթք առ Երրորդութիւնն 'ի բանից երանելւոյն Յովհաննու Գառնեցւոյ:

Բարերար և ամենակալ՝ լոյս ապաւինի ա̃մ տարակուսելոց տէր իմ և ա̃ծ իմ, արարիչ էից յանէից և նախախնամօղ բոլորից. որ յայսմ աւուր հրամանաւ քով բաժանեցեր զբազմութիւն ջուրց, զքաղցունսն ամբարձեր 'ի վեր յամպս տեղալ 'ի վերայ երկրի, 'ի բղխել զաղբիւրս

և խաղաղացուցանել զգետս, և զաղտաղտինս թողել յերկիր սորին անսահման իմաստութեամբ. և արկեր անջրպետ 'ի մէջ նոցա լոյծ և հոսանուտ զհաստատութիւն օդոյ, զի փոխադարձ տուրևառութեամբ ջուրց մշտնջենապէս հաղորդիլ կարեսցեն ընդ միմեանս վերինքն և ստորինք յօգուտ համօրէն տիեզերաց, և'ի պէտս ազգի մարդկան՝ զոր հանդերձեալ էիր արարչագործել 'ի վայելումն երանաւէտ փառաց աստուածութեանդ քո։

Արդ՝ ես որ կամ իբրև զջուր ստորին աղտեղեալ 'ի ձահիճս զանազան մեղաց գարշութեամբ, և ապականեալ բազմօրինակ անօրէնութեամբ, առ քեզ պաղատիմ արարիչ իմ և յոյս, բարեգութ կամօքդ վերառեալ զմիտս իմ 'ի ստորէ՝ մաքրագործեա՛ որպէս զջուրսն ամպոց յամենայն աղտեղութեանց քոյովդ սրբութեամբ. և զդառնութիւն նեխութեան իմոյ 'ի բաց արա յինէն քոյովդ քաղցրութեամբ, լինել հաճոյ աստուածութեան քո կամաց՝ 'ի գովեստ փառաց անբաւ շնորհաց քոց։

Մի՛ հայիր 'ի բազմութիւն անօրէնութեան իմոյ որ անարժան եմ գթոյ, և մի՛ դարձիր

յինէն վասն զազրութե յանցանաց իմոց յորում կամ շաղախեալ. այլ մատի՛ր առ իս անճառելի գթութեամբդ, և ողորմեա՛ ինձ ըստ բազում ողորմութե քում, զի քաղցր ես առ ամենեսին որք կարդան առ քեզ, և ապաւինին 'ի քո մարդասիրութիւնդ։

Դու տէր՝ զանձրև գթութեան կամաց քոց՝ և զառատաշեղ ողորմութե քո զցօղ անձրևեա՛ 'ի սիրտ իմ, որ 'ի սաստիկ ցամկութէ չորեաց և 'ի տապոյ անօրէնութե երաշտացեալ՝ չունի ինչ բերս պտղոց բարութե. և ոռոգեալ պարարտացո՛ շնորհօք մարդասիրութե քո՝ բերել զարդիւնս անեղծանելիս 'ի պաշար մշտնջենաւոր և անեզրական կենաց։

Լո՛ւր ինձ բարերար, քաւեա՛ անյիշաչար, և արա՛ զծառայս քո արժանի վերին օթևանացդ ընդ սիրելիս անուան քո տէր, ընդ կամարարս հաճոյից աստուածութեդ քո որ յերկինս և որ յերկրի. զի ընդ նոսին փառաւորեցից անլռելի օրհնաբանութեամբ զհայր և զորդի և զսուրբ հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աղօթք նորին Յովհաննու գառնեցւոյ։

Արարիչ բոլորից ա̃մ՝ գթած 'ի վշտացելոյս • ողորմեա անկելոյս առաջի քո • պատեա զմեղս իմ • բժշկեա զհիւանդութիւն իմ • սրբեա զաղտեղութիւնս իմ • նորոգեա զհնացեալս • լուսաւորեա զխաւարեալս • Ամենազօրութ և ողորմած, քաղցր և բարերար, մարդասէր և ամենախնամ, երկայնամիտ և անյիշաչար՝ գիտեմ ամենևին զի անօթալից եմ, և չիք համար մեղացս որ շուրջ պատեցան զինև, զոր զգայութիւն վարակելով 'ի հոգս և 'ի ծուփս՝ 'ի զբաղմանս և 'ի դատարկութիւնս՝ և յոր ազգի ազգի մեղս ։

Այլ ապաւինիմ 'ի քո անճառ գթութիւնդ և աղերսեմ, և ողբերգական ձայնիւ գոչեմ, և խնդրեմ զողորմութիւն և զանյիշաչարութի̃ 'ի բարերարէդ • ով անբաւութի̃ խորոց կամաց անհասիդ՝ ներեա և մարդասիրեա, և սահմանեա ապաշխարութե̃ տեղի • Ողորմեա մարդասէր՝ կուրացեալ հոգւոյս, և շնորհեա ինձ 'ի վեր հայիլ թախանձագին ։

Քաղցր ակամբ հայեցիր ողորմած, քանզի ’ի զանազան և ’ի բազմօրինակ մեղաց անկեալ և լուծեալ կամ, և ակնարկեմ զողորմամբ սրտիս, ոչ ունելով զոք կարեկից: Ճարտար և քաղցր բժիշկ՝ հրամայեա՛ հաստատիլ անդամոց իմոց, զի անբաւ է գթութիւն ա̃ծային սիրոյդ: Ողորմեա՛ ողորմութե̃ց աղբիւր, և ներեա՛ երկայնամիտ. սրբեա՛ զվէրս և զհարուածս խոցելոյս՝ որ սրբութի̃դ ես գերակատար. Ջնջեա՛ զյանցանս իմ և զսղալանս՝ որ ամենակարողդ ես. առողջացո՛ զբազմամեղ հիւանդութի̃ հոգւոյս՝ որ իշխանդ ես կենաց և մահու: Որ ’ի բարձրութ̃իս երկնից նստիս, կանգնեա՛ զիս ’ի գլորմանէ մեղաց, որով գայթակղեցայ ընդ անոտի կենցաղս:

Արտասուագոչ ողբերգութ̃բ և կորացեալ պարանոցաւ հեղում առաջի անոխակալ բարերարիդ զթշուառացեալ մարմինս, որով ոչ զանգիտեցի ’ի հրամանաց քոց՝ և’ի մեղս թաւալեցայ: Աղաչեմ՝ արա՛ առիս ըստ ողորմութ̃եդ՝ ’ի նեղիլ սրտիս և ’ի հեղձամղձուկ լինիլ մտացս, զի ոչ կարեմ ժուժել վշտացս: Խնդրեմ՝ պաղատիմ՝ հայցեմ՝

առաջի անկանիմ՝ աղերսեմ՝ ողողանիմ, Թող տէր. գթա տէր. խնդրեա տէր. Ներեա տէր. քաւեա տէր. փրկեա տէր. օգնեա տէր. պահեա տէր. ամրացո տէր։ Կարողացո աղաչեմ. զօրացո յոյս իմ. ապրեցո մ̃տ իմ. արժանացո տէր իմ. զերծո ՚ի պատժոց դատաւոր իմ. հաստատեա տ̃ր յերկիւղ քո և ՚ի սէր, և առաջնորդեա ինձ ՚ի պատուիրանս քո։

Տարակուսեցայ ՚ի ցնորմանց. դայթակղեցայ ՚ի սնոտիս. մոլորեցայ ՚ի Ճանապարհէ. խոտորեցայ ՚ի սուրբ շաւղաց, անկայ չարաչար և գլորեցայ։ Արդ հաւատով և յուսով առ արարիչդ ապաւինեցայ, ողորմեա տ̃ր, յարո մարդասիրութե̃դ քով և կոչեա առ քեզ։ Առ քեզ փառք ընդ որդւոյ և ընդ սուրբ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն։

# Երեքշաբաթի աւուր։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ամէն։

## Հայր մեր որ յերկինս։

---

### Սաղմոս ապաշխարութեան։

Տէ՛ր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։

Զի նետք քո հարան յիս, և յիս հաստատեցաւ ձեռն քո։

Ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ, յերեսաց բարկութեան քո։

Ո՛չ է խաղաղութիւն ոսկերաց իմոց, յերեսաց մեղաց իմոց։

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, որպէս բեռն ծանր ծանրացան ՚ի վերայ իմ։

Նեխեցան և փտեցան վէրք իմ, յերե-

սաց անզգամութեան իմոյ ։

Տառապեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ ․ զօրհանապազ տրտում գնայի ․ զի անձն իմ լի՛ եղև չարչարանօք ․ և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ ։

Չարչարեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ , մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ ։

Տէ՛ր առաջի քո է ա͞մ ցանկութի͞ իմ , և հեծութի͞ իմ 'ի քէն ոչ ծածկեցաւ ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս և եթող զիս զօրութիւն իմ , լոյս աչաց իմոց և այս ոչ եղև ընդ իս ։

Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կացին , և մերձաւորք իմ հեռի եղեն յինէն ։

Բռնադատէին զիս և խնդրէին զանձն իմ դ․ք խորհէին չար 'ի վերայ իմ , խորհեցան զանօրէնութիւն և զնենգութիւն՝ զօրհանապազ խորհեցան ։

Բայց ես որպէս խուլ զի ոչ լսէ , որպէս համր որ ոչ բանայ զբերան իւր ։

Եղէ ես որպ͞ մարդ որ ոչ լսէ , և ոչ գոն խօսք 'ի բերան նորա ։

Ես 'ի քեզ տէր յուսացայ , և դու

լուիցես ինձ տէ՛ր աստուած իմ։

Ասացի թէ մի՛ ուրախ եղիցին յիս թըշնամիք իմ, 'ի սասանել ոտից իմոց 'ի վերայ իմ մեծամեծս խօսեցան։

Ես 'ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Զանօրէնութիւնս իմ պատմեցից, և հոգացայց վասն մեղաց իմոց։

Իսկ արդ թշնամիք իմ կենդանի են և զօրացեալք են քան զիս, և բազումք էին որք ատէին զիս 'ի տարապարտուց։

Որք հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ, չարախօսէին զինէն զի ես երթայի զհետ արդարութեան։

Մի՛ թողուր զիս տէ՛ր ա͞ծ իմ, և մի՛ 'ի բացեայ առնիր յինէն, հայեա՛ց յօգնել ինձ տէ՛ր փրկութեան իմոյ։

Շարական ապաշխարութեան։

Զղջման իմոյ զարտասուս արկանեմ առաջի քո քրիստոս, թո՛ղ ինձ զմեղս իմ որ͞պ երբեմն զպոռնիկին, որ միայնդ ես բազմագութ, Անկանիմ առա-

ջի քո քրիստոս, որ հովիւդ ես բանաւոր հօտի, խնդրեմ և զիս զմոլորեալս, որ միայնդ ես բազմագութ: Օ մեղս իմ ցուցից քեզ քրիստոս, որ բժիշկդ ես հոգւոց և տէր կենաց, բժշկեա և զիմ զհիւանդութիւնս, որ միայնդ ես բազմագութ:

Պարծի զցասումն քո 'ի մէնջ յաղաղակել հողեղինացս, բազմագութ տէր խնայեա և մի' կորուսաներ: Կանգնեա զանկեալս 'ի գլորմանէ զվիրաւորեալս 'ի թշնամւոյն, որ բժիշկդ ես հիւանդաց բժշկեա զիմ զհիւանդութիւնս: Ի յանցանաց իմոց թախծեալ անձն իմ գոչեմ որպէս զմաքսաւորն, աստուած քաւեա զիս զմեղաւորս:

Մեղայ տէր բազումողորմ ած, մեղայ, ողորմեա: Մեղայ տէր և անկանիմ առաջի քո, մեղայ, ողորմեա: Մեղայ տէր խոստովանիմ զյանցանս իմ, մեղայ, ողորմեա:

Ողորմեա ինձ ած իմ՝ ողորմեա ինձ, զի անպատասխանի եմ յամի՝ թող ինձ տէր: Ճանապարհք քո ուղիղ են, ես միայն մոլորեցայ, դարձո զիս և ողորմեա

ինձ տ՛ր ։ Դատաստանք քո արդար են , ես միայն եմ մեղուցեալ , քաւեա՛ զիս , և ողորմեա՛ ինձ աստուա՛ծ ։

Բազում են քո գթութիւնք բազմամեղ անձին իմոյ , ողորմեա՛ տ՛ր քաւիչ իմ ։ Ո՛ ի քեզ անյիշաչար տէր մեղայ չարին խաբմամբ , ողորմեա՛ տ՛ր քաւիչ իմ ։ Ի քո ՚ի միւսանգամ գալստեանն յորժամ գաս դատել զերկիր , ողորմեա՛ աստուա՛ծ քաւիչ իմ ։

Տէր զլուր քո միւսանգամ գալստեանդ լուայ և երկեայ ․ զի ուսայ ՚ի սրբոց պատուիրանացն եթէ գաս դու ՚ի դատել զերկիր ։ Տէր յիշեցի զչար զգործս իմ և զարհուրեցայ ․ զի ծանեայ ճշմարտութե՛ զահաւոր և զանաչառ զքո դատաստանդ ։ Տէր յիշեցի և զգութ արարչական սիրոյ քո առ քո արարածս ․ և՚ի քո գթութիւնդ ապաւինեալ աղաչեմ , ողորմեա՛ ինձ յաւուր յայնմիկ ք՛ո արդար դատաւոր ․

Մերձեալ է օր գալոյ քո տէր , լո՛ւր ձայնի աղօթից իմոց որ կարդամս առ քեզ , և ողորմեա՛ ։ Բանից իմոց ունկն դիր տէր ․ և ՚ի միտ առ զաղաչանս իմ զա-

ռաւօտուս որ կարդամն առ քեզ, և ողոր-
մեա՛։ Որ ընկղմեալս եմ 'ի խորս չարեաց,
սուրբ զհոգիդ քո առաքեա՛ առ իս որ
կարդամն առ քեզ, և ողորմեա՛։

Աղօթք առ Որդին միածին, 'ի բանից երանելւոյն Յովհաննու գառնեցւոյ։

Ա'րարչագործ ա̃ծ և ամենախնամ, որ յայսմ աւուր գթութ̃բ կամաց քոց ժողովեցեր զջուրս որ 'ի վերայ երկրի՝ 'ի խորս ծովու, և զատուցեր զցամաքն 'ի ջուրց. և զարդարեցեր զայն զանազան բանջարօք և ծաղկազեղ վայելչութ̃բ, և ազգի ազգի պտղաբեր ծառովք։ Իսկ արդ երկիրս անձնաւոր՝ փոխանակ բարեբեր սերմանց առաքինագործ արդասեաց՝ բուսուցի փուշս մեղաց խոցոտիչս հոգւոյ իմոյ, և փոխանակ բերոցն քաղցրութեան՝ պտուղս անօրէնութեան դառինս և մահաբերս ինձ գոյացուցի։

ԱՐԴ դու անոխակալ տէր՝ հայեա՛ց քաղցրութ̃բ առ իս յարարածս քո, և մի՛ անտես առներ զգործս ձեռաց քոց. խլեա՛

յինէն զփուշս չարեաց և զարգասիս անօրէնութե̄ զոր ես ինձէն պտղաբերեցի. և սերմանեալ վերստին 'ի միտս և 'ի կամս իմ զբարին, և զօգտակարն հոգւոյ իմոյ, յօժարիլ և ընտրել զայն, և առնել կամակար սիրով:

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, և տղմաշաղախ ջուրք մեղաց ծածկեցին զանձն իմ. և ահա առ քեզ առբարեգութ տէրդ իմ պաղատիմ, երևեցո՛ զիս իբրև երկիր ցամաք, և նորոգեա՛ զսիրտ իմ բերել պտուղս բարիս զկանուխն և զանագան ըստ հաճոյից քոց մարդասէր:

Երկիրս բանաւոր՝ զոր զարդարեցեր ընաբոյս առաքինութե̄, ցամաքեցայ 'ի հրատապ հրապուրանաց իշխանին օդոյս այսորիկ ոչ̄ դալարի 'ի սաստիկ տօթոյ, և թօթափեցան ծաղիկք հոգւոյս. գօսացան ոստք առաքինութե̄, և խամրացան բողբոջք բարեաց: Ու ահա կորացեալ անձամբ առ քեզ աղաղակեմ պարգևիչդ կենաց, ցօղեա՛ յիս զշօղ խնամոց մարդասիրութե̄ քո, զի չորացաւ որպ̄ խեցի զօրութի̄ իմ, և որպ̄ խոտ տանեաց ցամաքեցայ. և նո-

րոգեա՛ զիս նորոգութեամբ շնորհաց քոց ըստ առաջնումն պայծառութեան ։

Արարեր զիս այգի վայելուչ ցանկով օրհնաց պատսպարեալ՝ առ՚ի բերել ողկոյզս քաղցրութեան ՚ի հաճոյս տնկագործողին իմոյ այ̃ . իսկ ես ապստամբ կամօք արհամարհեալ զօրէնս քո , խոպանացայ չարաչար գնացիւք , և պտղաբերեցի խառն դառնութե̃ բազմօրինակ անօրէնութե̃ ։ Նու արդ մ՛րդասէր խնայեա՛ յիս գթութե̃ , և դարման տար այգւոյս այսմիկ զոր տնկեաց աջ քո . ամրացո՛ զիս վերստին օրհնօքդ կենաց , և ՚ի բա՛ց արա յինէն զբաղձանս չարեաց որք ստեղնին ՚ի կամս իմ ։ Որպէս զի վաստակեալ յարդիւնս առաքինութե̃՝ արժանի եղէց ընդունել զօրհնութիւն առ՚ի քէն և վայելել յանճառ բարիսդ ընդ սուրբս քո յերկինս , և գոհութեամբ փառաւորել զամենազօր տէրութիւն քո , յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Նորին երանելւոյ Յովհաննու դառնեցւոյ աղօթք առ Որդին միածին։

Ա՛մենակալ տէր՝ արարիչ և ստեղծիչ համայնից՝ երևելեաց և աներևութից, և իշխան մահու և կենաց. որ խոստացար արդարոց զհանգիստ յաւիտենական, և մեղաւորաց զպատիժն մշտնջենաւոր. և ես կամակցութբ չարին մոռացայ զբարի խոստումն պարգևի քո, և հետևեցայ զհետ կորստեան շաւղաց նորա. մինչ կարող էի գործելոյ զբարին, անփոյթ արարի։ Իսկ յորժամ յանկարծակի եկեսցէ հրաւիրակն՝ յանջատել զհոգիս 'ի մարմնոյս, և գտանիցէ զիս 'ի մէջ անօրէն և եղեռնական գործոց, յորժամ ոչ ունիմ հնար զերծանելոյ, և զբարիս գործելոյ. և առ այս եղկելիս ոչ գիտեմ զինչ արարից։

Երկնչիմ 'ի մահուանէ՝ զի դառն է. սոսկամ 'ի հրեշտակաց՝ զի անողորմ են. սարսիմ 'ի դատաւորէն՝ զի անաչառ է. դողամ 'ի գեհենէն՝ զի անշէջ է. սարսափիմ 'ի տարտարոսէն՝ զի ցրտագին է. ահաբեկիմ 'ի խաւարէն՝ զի ոչ ունի զճաճանչ

լուսոյ · զարհուրիմ 'ի կորդանցն՝ զի ան-քուն են ։

Վա՛յ է ինձ՝ որ զտաճարս քո ապականեցի, և զհոգի քո սուրբ տրտմեցուցի · և ահա՛ վասն առժամեայն մեղացս վայելման՝ անմահ չարչարիմ · վ՜ հեշտութե՜ մարմնոյս՝ 'ի հուրն անշէջ այրիմ · արդար դատաստանքն քո ուսուցանէին զիս, և ես ոչ հնազանդէի ։ Մարդասէր տէր՝ զգինս սուրբ արեան քո մի՛ անտես առներ · վ՜ բարեխօսութեան սուրբ ա՜ծածնի ծնողէ քոյ՝ և ա՜մ ընտրելոց քոց թո՛ղ ինձ զյանցանս իմ ։ Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն ։

## Չորեքշաբաթի աւուր:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ամ՛ն:

Հայր մեր որ յերկինս.

---

Սաղմոս ապաշխարութեան:

Ողորմեա՛ ինձ Տ՛Ծ ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ:

Առաւել լուա՛ զիս յանօրէնութենէ իմմէ, և՛ի մեղաց իմոց սուրբ արա զիս:

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յա՛մժամ:

Քեզ միայն մեղայ Տէ՛ր, և չար առաջի քո արարի:

Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո, և յաղթօղ 'ի դատել գաս:

Անօրէնութեամբ յղացայ, և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու Տէ՛ր զճշմարտութիւն սիրեցեր,

զանյայտս և զծածկեալս իմաստութեանդ քում յայտնեցեր ինձ։

Ցօղեա՛ զիս մշտկաւ և սուրբ եղէց, լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի՛ արա ինձ զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց, և զա՛մ անօրէնութիւնս իմ քաւեա՛ ջնջեն։

Սիրտ ս̃բ հաստատեա՛ յիս ա̃՛ծ, և հոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս տէ՛ր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տո՛ւր ինձ ցնծութի̃ փրկութե̃ քո, և հոգւով պետութե̃ քո հաստատեա՛ զիս։

Ուսո՛ անօրինիս զճանապարհս քո, և ամբարիշտս առ քեզ դարձայց։

Փրկեա՛ զիս յարենէ ա̃՛ծ ա̃ծ փրկութեան իմոյ, ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէ՛ր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ

ոչ հաճեցար ·

Պատարագ Այ՟ հոգի խոնարհ , զսիրտ խր՟ և զհոգի խոնարհ Ած՟ ոչ արհամարհէ ։

Բարի արա տէր կամօք քովք սիոնի , և շինեսցին պարիսպքն երուսաղէմի ։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութե՟ ,յորժամուխոց պատարագս հանցեն ՚ի սեղան քո զուարակս ։

Շարական ապաշխարութեան ։

Զանապական զհոգեւոր զգանձն յապականացու կենցաղս ծախեցի · այլ առ քեզ միայն պաղատիմ բարերար փրկիչ՝ խնայեա՛ ՚ի մեղուցեալ ծառայս ։ Զցանգ հոգւոյ իմոյ քակտեցի և եղէ անբարունակ որթ · այլ առ քեզ միայն պաղատիմ բարերար փրկիչ՝ խնայեա՛ ՚ի մեղուցեալ ծառայս ։ Աստաքանց եղէ ես ոչ զարմանենի , պտղաբերոյս որ՟պ ձիթենի · այլ անյիշաչար և անոխակալ փրկիչ՝ խնայեա՛ ՚ի մեղուցեալ ծառայս ։

Բ՟ն Ած՟ աստուածոց՝ ողորմեա՛ ։ Նորէնութե՟ ՚ի մեղս երկնեաց զիս մայր

իմ՝ աղաչեմ փրկիչ՝ ողորմեա։ Բեռնաւոր-
եալ մեղօք անկանիմ առ քեզ փրկիչ, մի՛
անտես առներ՝ ողորմեա։

Համբառնամ առ քեզ տէր զաչս իմ,
նայեա՛ց յիս գթութ՟բ քո և ողորմեա։
Դու ես յոյս և ապաւէն իմ, զերծո՛ զիս
յորոգայթէ մեղաց և ողորմեա։ Փրկե-
ցուցիչ իմ և փրկիչ իմ՝ ապրեցո՛ զիս յո-
րոգայթէ մեղաց և ողորմեա։

Մեղայ քեզ տէր, քաւեա՛ զիս։ Մե-
ղաք անօրինեցաք ամենեքեան, ոչ
պահեցաք զպատուիրանս քո. մեղայ քեզ
տէր, քաւեա՛ զիս։ Դարձի՛ր տէր 'ի բար-
կութենէ քումմէ, անցո՛ 'ի մէնջ զցասումն
քո. մեղայ քեզ տէր, քաւեա՛ զիս։

Որ զաղաղակ կնոջն այլազգւոյ ըն-
կալար փրկիչ մարդասիրապէս. և
զիմս ապաշխարութե՟ արա՛ արժանի զձայն
մեղուցելոյս ընդունօղ։ Որ հառաչմամբ
ձայնի աղախնոյն ո՛չ լռեցեր փրկիչ ըն-
դունակ մեղաւորաց. և զիմս ապաշխար-
ութեան արա՛ արժանի զձայն մեղուցելոյս
ընդունօղ։ Որ զառաջնապարգևի քո նշ-
խար ո՛չ խնայեցեր ընձեռել շանն հովուս

սիրի · և ըստ ապաշխարութեան արա՛ արժանի զձայն մեղուցելոյս ընդունող։

Անկանիմ առաջի քո, և խնդրեմ զթողութիւն յանցանաց իմոց, մի՛ անտես առներ հայր զաղաչանս իմ։ Աղաղակեմ որպէս մաքսաւորն, և հեղում զարտասուս իմ առաջի քո որպէս պոռնիկն, մի՛ անտես առներ հայր զաղաչանս իմ։ Յաներևոյթ թշնամւոյն պարտեցայ, և՛ի գաղտնի նետից բանսարկուին վիրաւորեցայ, մի՛ անտես առներ հայր զաղաչանս իմ։

Աղօթք առ Որդին միածին, 'ի բանից երանելոյն Յովհաննու գառնեցւոյ։

Հաստիչ ամբաւազօր լուսաւորացն երկնից, և Ճարտարապետ ամենիմաստ տանս աշխարհի · որ յայսմ աւուր կարգեցեր զլուսաւորսն 'ի հաստատութե երկնից՝ զարեգակն և զլուսին և զաստեղացն պարս՝ 'ի նշանս և 'ի ժամանակս և յաւուրս և 'ի տարիս։

Արդ աղաչեմ զքեզ տ՛ծ կենարար՝ հաճոյական պարգևօք հոգեձիր շնորհաց քոց

շարժեալ զմիտս և զկամս իմ սիրել զքեզ
յա̄մ սրտէ , և ուղղեալ զընթացս անձին
իմոյ անհերքելի զօրութեամբ քով՝ գնալ
անխոտոր ՚ի ճանապարհս հրամանաց քոց ։
Կապեալ կամ անզերծ շղթայիւք յանցա-
նաց իմոց , ազատեա՛ զիս ամենակալ ։
Ընկեալ դանդաչեմ ՚ի հաղբս կորստեան
գաղանի որսողին , հա՛ն զիս բարեգութ ։
՚ի բանդ անելանելի խաւարին գործոց
կաշկանդեալ տանջիմ, ծագեա՛ առ իս ըզ-
լոյս շնորհիդ , և զերծո՛ զիս խնամակալ՝
յազատութիւն կենաց անվախճանից ։
Դու ես յոյս իմ և ապաւինութիւն ․
դու իմ փրկութիւն ․ քեզ ակնկալեալ
սպասէ ամենայն անձն իմ ։ Քեզ փա-
փագի հոգի իմ մարդասէր , որպէ̄ փափագի
եղջերու յաղբերս ջուրց ։ Ծարաւի եմ
ողորմութե̄ քում՝ արբո՛ զիս ․ տանջեալ
՚ի սովէ՝ յեղջերաց խոզիցն կերակրիմ, ըզ
հացդ երկնաւոր ջամբեա՛ ինձ ։ Մրուր
դառնութե̄ մեղաց և մահու արբեալ տագ-
նապիմ չարաչար , զբաժակդ կենաց մա-
տռուակեա՛ ինձ ։ Մերկացեալ դողամ
յանագորոյն աւազակաց իշխանին մահու ,

զգեստուք խնամոց քոց ծածկեա՛ զիս ։ Վիրաւորեալ եմ ՚ի թիւնաւոր նետից աներեւոյթ թշնամւոյն , բժշկեա՛ զհարուածս իմ ։ Եւ արա՛ զիս զապաշխարող ծառայս որ կարդամ առ քեզ՝ արժանաւոր երկնային հարսնարանին և անմահական սեղանոյն՝ ընդ այնոսիկ որք սիրեցին զքեզ ՚ի բոլոր սրտէ , և պահեցին զպատուիրանս քո ․ զի ընդ նոսին փառաւորեցից զամենագութ մարդասիրութիւն քո , յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Նորին երանելւոյ Յովհաննու գառնեցւոյ աղօթք առ Որդին միածին ։

Ո՛վ որ անեղդ ես և անստեղծդ՝ և արարիչ ա͞մ արարածոց ․ որ ոչ երկինք բաւեն զքեզ գիտել , և ոչ երկիրս զորպիսութ͞ն քո ճանաչել ․ քանզի ՚ի վեր ես քան զերկինս , և անդր քան զծագս տիեզերաց ․ և ա͞մ երեւելիք և աներեւոյթք քեւ են հաստատեալ ․ և քոյին հրամանաւդ կառավարին ա͞մ արարածք ։ Դու աղքատացուցանես՝ և դու մեծացուցանես ․ հարկանես՝ և դու բժշկես , դու ես սփոփիչ

վշտացելոց 'ի սատանայէ , և ողջացուցիչ հիւանդացելոց մերոց ։

Խոնարհեցո՛ տ՛ր զունկն քո և լո՛ւր ինձ. տե՛ս տէ՛ր զտառապանս իմ՝ որ թագաւորդ ես փառաց , զի կարի վիրաւորեալ եմ մեղօք , և ցաւագնեալ անօրէնութբ . ժահահոտեալ եմ հոգւովս , և աղտեղեալ մարմնովս . զազրալի և ամօթալի երեսօք եմ առաջի ամենատես աչացդ , Դու արդ դու տէր՝ քաղցր և ողորմած վ՜ մեղաւորացս կոչեցար , որո՛վ և ասացեր՝ թէ 'ի դառնալ անօրինին ոչ ևս յիշեցից զա՜մ անօրէնութիւնս նորա զոր արար ։

Արդ՝ ահա՛ առաջի քո անկեալ աղաչեմ և խնդրեմ ժտելով , մի՛ յիշեր զմեղս իմ բազում , և մի՛ զանօրէնութիւնս իմ՝ յանդիմաներ , թէ կամայ և թէ ակամայ , թէ գիտութբ և թէ անգիտութբ , եթէ բանիւ և եթէ գործով՝ որովք մեղայ քեզ . զի դու տ՛ր՝ սովոր ես գթալ և թողուլ զմեղս բազմաց ։

Դու բարերար տէր՝ յագեցո՛ զքաղցեալս 'ի հացէդ կենաց , և լցո՛ զծարաւեալս յառատաբուղխ շնորհէդ . զի ցանկամ

մերձենալ 'ի շնորհս ողորմութեան քո, և բաղձամ հայիլ յարաժամ 'ի քեզ. մինչ շնորհաց քոց փափագիմ, և հանապազ ողորմութեանց քոց կարօտիմ։ Մի՛ ըստ պատժապարտութեան պատժեր, և մի՛ ըստ դատապարտութեան դատեր. այլ ըստ կամարարին կամաց քոց ընկալ, և ըստ պահօղին պատուիրանաց քոց պատուեա՛. Ո՞վ թէ առանց ներելոյ զյանցանս իմ քննես, ընդունայն է ինձ յարութեան խոստումն. զի հուր գեհենին է ժառանգութիւն իմ։

Այլ նայեաց տէր 'ի մաղթանս իմ և 'ի պաղատանս, և մի՛ մերժեր զիս յողորմութենէ քումմէ. լուա՛ զիս 'ի մեղաց, և մաքրեա՛ յաղտոյ անօրէնութեան իմոյ. քաւեա՛ որպէս զմաքսաւորն, և արդարացո՛ որպէս զպոռնիկն. ողորմեա՛ ինձ որպէս քանանացւոյն, և շնորհեա՛ ինձ թողութիւն որպէս աւազակին։ Եւ ըստ անձառ մարդասիրութեան քում ընկալ զդարձեալս, և մո՛յծ յառագաստն լուսոյ երկնաւոր հարսանարանին, և բնակեցո՛ զիս 'ի դաս սրբոց քոց, և 'ի խորանս սիրողաց անուան քո. և քեզ փառք և գոհութիւն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## Հինգշաբաթի աւուր։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ամէն։

Հայր մեր որ յերկինս։

—

Սաղմոս ապաշխարութեան։

Տէր լուր աղօթից իմոց աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն։

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեա առիս զունկն քո, յորում աւուր կարդամ առ քեզ վաղվաղակի լուր ինձ։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, ոսկերք իմ որպէս խախիւ չորացան։

Հարայ ես որպէս խոտ և ցամաքեցաւ սիրտ իմ, մոռացայ ուտել զհաց իմ, ձայնէ հեծութեան իմոյ։

Կցեցաւ ոսկր իմ ՚ի մարմին իմ, նմանեցայ ես հաւալուսան յանապատի։

Եղէ ես որպէս բու յաւերակի, տքնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ՚ի տանիս։

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ, և գովիչք իմ ինև երդնուին։

Զի մոխիր որպէս զհաց կերի, և զըմպելին իմ արտասուօք խառնեցի։

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դու բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս։

Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։

Դու տէր յաւիտեան կաս, և յիշատակ քո ազգէ մինչև յազգ։

Դու յարուցեալ գթասցիս ՚ի վերայ սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նորա, և ՚ի հողս նորա գթասցին։

Երկիցեն հեթանոսք յանուանէ քումմէ, և ամենայն թագաւորք երկրի ՚ի փառաց քոց։

Զի շինէ տէր զսիոն, և երևեսցի փառօք իւրովք ՚ի նմա։

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և ոչ արհամարհեաց զխնդրուածս նոցա։

Գրեսցի այս յազգ յայլ, ժողովուրդ
որ ստացեալ է օրհնեսցէ զտէր։
Հայեցաւ նա ՚ի բարձանց ՚ի սրբութե̄
իւրմէ, տէր յերկնից յերկիր հայեցաւ։
Լսել զհեծութիւն կապելոց, և արձա-
կել զորդիս մահապարտաց։
Պատմել ՚ի սիոն զանուն տն, և զօրհ-
նութիւնս նորա յերուսաղէմ։
Ժողովել ժողովրդոց ՚ի միասին, և թա-
գաւորաց ծառայել տեառն։
Պատասխանի ետ նմա ՚ի ճանապարհի
զօրութե̄ իւրոյ. զնուազութի̄ աւուրց իմոց
ասա՛ ինձ, և մի՛ հաներ զիս ՚ի կէս աւուրց
իմոց, զի ազգէ յազգ են ամք քո։
Իսկզբանէ տր զհիմունս երկրի հաստա
տեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են։
Նոքա անցանեն, և դու կաս և մնաս
յաւիտեան։
Ամենեքեան ո̄պ զձորձս մաշեսցին, և ո̄պ
զվերարկուս փոխեսցես զն̄ս և փոխեսցին։
Բայց դու նոյն ինքն ես, և ամք քո
ո՛չ անցանեն. որդիք ծառայից քոց բնա-
կեսցին ՚ի նմա, և զաւակի նոցա յաւի-
տեան յաջողեսցի։

Շարական ապաշխարութեան ։

Ողորմեա ինձ քս ողորմութեամբդ քո մեծաւ, զի կարօտ եմ ես շնորհի քո և ողորմութեդ ․ ողորմեա և լո՛ւր ինձ բազմամեղիս ։ Լո՛ւր տէր ձայնի ողբալոյս և ցաւագին պաղատանացս, որ ամօթով կամ առաջի քո իմ չարաչար մեղօքս ․ ողորմեա և լո՛ւր ինձ բազմամեղիս ։ Ընկա՛լ տր զաղաչանս իմ և զհառաչանս սրտի իմոյ, որ աղաղակեմ ոպ կինն քանանացի ․ ողորմեա և լո՛ւր ինձ բազմամեղիս ։

Ո՛վ ած յոյս ապաշխարողաց՝ շնորհեա զթողութի բազում յանցանաց իմոց ։ Առ քեզ բազմագութ ապաւինեալ կարդամք, մի՛ մերժեր զմեզ յողորմութենէ քումմէ ։ Որպէս զաւազակն աղաղակեմ առ քեզ, յիշեա և զիս տէր 'ի քում արքայութեանդ ։

Զմեղս իմ խոստովանիմ առ քեզ քս, որ միայնդ ես բազմագութ թողութե, ողորմեա ինձ ած ։ Դու տ՛ր որ ճշմարտութեանց ես սիրող, և քննես զծածուկս գաղտնեաց սրտի իմոյ, ողորմեա

ինձ տ՟ր ։ Տո՛ւր ինձ ցնծութի՟ փրկութե՟ ,
և հոգւով տէրութեանդ քո հաստատեա՛
զիս , և ողորմեա՛ ինձ տ՟ր ։

Ալիք յանցանաց զիս ալէկոծեն , և մեղք
խմբագում զիս յանդիմանեն ։ Արդ
զի՞նչ արարից մեղուցեալ անձամբս , որ չեմ
ապրելոց յահագին հրոյն ։ Մեղայ քեզ
քո՛ որդի Ա՟յ՝ շնորհեա՛ զթողութի՟ բազում
յանցանաց իմոց ։

Տէ՛ր որ ՚ի մէջ լերինն աղբերացուցեր
զջուրն ՚ի վիմէն ։ Տէ՛ր ՚ի սրտէ իմմէ
հա՛ն ինձ արտասուս ապաշխարութե՟ ։ Զի
կեցից և ապաշխարութեամբ ապրեցայց ՚ի
հանդերձեալ քոց դատաստանաց ։

Մեղայ քեզ տ՟ր քաւեա՛ զիս , և ողոր-
մեա՛ ինձ տ՟ր ։ Ոչխար եմ բանաւոր
հօտի քո և առ քեզ ապաւինիմ , հո՛վիւ
բարի խնդրեա՛ զիս զմոլորեալս , և ողոր-
մեա՛ ինձ տ՟ր ։ ՚Ի ծովու մեղաց ալէկո-
ծեալ եմ և առ քեզ աղաղակեմ , նա՛ւա-
պետ բարի փրկեա՛ զիս ՚ի վտանգէս , և
ողորմեա ինձ աստուած ։

## Աղօթք առ Որդին միածին, ՚ի բանից երանելւոյն Յովհաննու գառնեցւոյ:

Որ արարչական գթով կենդանածնես զարարածս քո և խնամես քաղցրութեամբ՝ Աստուած իմ և տէր. որ յայսմ աւուր ամենազօր հրամանաւ քով հաներ ՚ի ջրոց զեռունս շնչոց կենդանեաց, և զկէտս մեծամեծս, և զթռչունս թևաւորս. և Աստուածային օրհնութեամբ քով օրհնեցեր զնոսա աճել և բազմանալ ՚ի վերայ երկրի:

Որդ աղաչեմ զանփոփոխելի տէրութիւն բարերարութեան քո, օրհնեա և զիս զստեղծուածս ամենակալ ձեռին քո ծննդաբեր լինել գործոց առաքինութեան: Եւ զսերմն հոգւոյ կենաց՝ զոր անդստին բնաւորեալ ես ՚ի խորս մտաց իմոց՝ զօրացո զիս աճեցուցանել կենսաբեր խորհրդով ՚ի ձեռն շնորհաց և ողորմութեան քո, զոր տաս ամենայնի և ոչ նախատես. զի դու նոյն ես, և ամք քո ոչ պակասին. բանաս զձեռն քո, և լցուցանես զպէտս և զկարիս ամենեցուն յանսպառ գանձուց քոց: Մի թողուր զիս տէր իմ՝ ամուլ և անբեր գործոց բա-

րութիւն . մի՛ անտես առներ զաղաղակեալս ՚ի քոց խնամոց վասն բազմութեան յանցանաց իմոց ։ Խոնարհեցո՛ զունկն քո և լո՛ւր ինձ, զի աղքատացայ ՚ի բարեաց . սատունդանեցի կենարար պատուիրանաց քոց, և յօժարեցայ հաճել զկամս անձին իմոյ ։

Յարդարեցեր զիս տաճար կենդանի արարչութեան քում, և ես զանձն իմ պատրաստեցի բնակարան ատելեաց քոց դիւաց ։ Պատմուճան լուսազգեստ զգեցուցեր ինձ ՚ի հոգևոր ծննդեան , և ես արկի զանձամբ հանդերձ խաւարի մեղաց և մահու , Ետուր ինձ սիրտ մարմնեղէն խոկալ յօրէնս քո յամ ժամ, և ես աման խորհրդոց անօրէնութեան յօրինեցի ։ Կարգեցեր զիս լսելիս ՚ի լուր պատուիրանաց քոց , և ես բացի առ հրապոյրս բանսարկուին ։ Կազմեցեր զիս լեզու գործի օրհնութեան, և ես չարաչար վարեալ՝ արարի զէն անիրաւութեան ։ Սերմանեցեր ՚ի միտս իմ սերմն բարի առաքինութեան, և ես փուշս դժնդակ մոլութեան բուսուցի ընդ այն ։ Զբարիսն զոր պարգևեցեր ինձ շահիլ նոքօք զկեանս, անմտութեամբ իմով վատնեալ ՚ի սնոտիս՝

ստացայ ինձ մահ և կորուստ։ Տիրական իշխանութ̃բ և փառօք պատուեցեր զիս, և ես կամաւ մատնեցի զանձն իմ 'ի ծառայութիւն մեղաց։

Ես այժմ առ քեզ ապաւինեալ աղաչեմ բարեգութ՝ քաւեա՛ զյանցանս իմ, և նորոգեա՛ զիս շնորհօք ողորմութ̃ե քո։ Պարտաւոր եմ առ քեզ ա՛ծ իմ, արբո՛ ինձ զջուրդ կենդանարար։ Ժանդահար եղէ ցանկութ̃բ չարեաց, ա՛րկ զիս 'ի բովս հալոցաց, և սրբեա՛ հրով սիրոյ քո։ Բաղձանք երկրաւորացս տարագիր արար զիս առ 'ի քէն, կարկառեա՛ առիս զաջդ ամենազօր, և մատո՛ զիս առ քեզ։ Փոխանակ մշտնջենաւոր և անանց փառաց, զդիւրեղծական և զապականացուն սիրեցի, մի՛ թողուր զիս 'ի կամս իմ։

Տեղացին 'ի վերայ իմ թունաւոր նետք աներևոյթ թշնամւոյն, լե՛ր ինձ վահան ամրութ̃ե և տեղի ապաւինի ապրեցուցանել զիս։ Խորհուրդք չարեաց հարին զհոգիս 'ի հարուածս անողջանալիս, մատի՛ր առիս գթութ̃բ, և բժշկեա՛ ամենահնար։ Թշնամիք զանձն իմ պաշարեցին և 'ի լար

խաբէութե իւրեանց արգելին , զարթո՛ զզօրութիւն քո և ե՛կ ՚ի կեցուցանել զիս։ Մերկացուցին զիս անագորոյնք , և վէրս ՚ի վերայ վիրաց յաւելին . զի ո՛չ զգեցայ զզրահն արդարութե , և ոչ եդի ՚ի գլուխս իմ զսաղաւարտն յուսոյն փրկութե . ո՛չ առի զվահանն հաւատոյ , և ո՛չ զսուր բանին այ . այլ դու հզօր և ամենակալ՝ ա՛ռ զէն և զասպար քո , և արի՛ յօգնել ինձ . խորտակեա՛ զզօրութիւն հպարտացեալ բանսաւորին , և ասա՛ դու ցանձն իմ թէ փրկութիւն քո ես եմ։ Զօրացեալ է անձն իմ մինչև ՚ի մահ , մխիթարեա՛ զծառայս քո։ Աներախտ գտայ առ երախտաւորդ , և բարկացուցի զանբարկանալի բնութիւնդ . այլ դու անյիշաչար՝ մի՛ հատուցաներ ինձ ըստ անօրէնութե իմում , այլ ողորմութե քաւեա՛ զիս։

Առ քեզ աղաղակեմ ՚ի խորոց անդնդոց յոր ընկղմեալս եմ , որպէս յովնան ՚ի փորոյ կիտին . հա՛ն զիս ՚ի վհէս խաւարի , վերաբերեալ ՚ի լոյս կենացդ յաւիտենից։ Խորտասուզեալ եմ յանդունդս մեղաց կորըստեան , մատո՛ զաջդ ամենազօր , և

փրկեալ զիս ։

Տանջիմ հանապազ 'ի խղճէ մտաց՝ զի դառնացուցի զքաղցրադութ տէրդ իմ · և յոյզք վարանական խորհրդոց աններելի տանջանաց՝ որ պատրաստեալ և մնայ ինձ, իբրև լեռնացեալ ամենի ալեօք հողմակոծեն զանձն իմ · բարերար և անոխակալ՝ ձգ[illegible] այցելու օգնեա՛ ինձ, և հանդարտեցո զմրրկեալ ալիս խռովութեան մտացս յօղով գթութեան քո ։

Բազմութի՟ անօրէնութե՟ իմոյ՝ որպէս հեղեղք պղտորեալք գարնանայյր գետոց ողողեցին զմեղուցեալս · այլ դու մարդասէր՝ շնչեա՛ զհողմն քաղցրութե՟ կամաց քոց, և ցամաքեցո՛ զհոսանս չարեաց իմոց · և ողորմութե՟ քով քաւեա՛ զանօրէնութի՟ս իմ, և թուակնից արա սիրելեաց անուանդ քում սրբոյ · զի ընդ նոսին փառաւորեցից զանոխակալ մարդասիրութի՟ քո, այժմ և միշտ և յաւիտենից յաւիտեանս, ամէն ։

Նորին երանելւոյ Յովհաննու Գառնեցւոյ աղօթք առ Որդին միածին ։

Լոյս ՚ի լուսոյ քս̃ ա̃ծ՝ որ լուսով ողորմութեան քո լուսաւորեցեր զարարածս ա̃մ, հալածեա՛ զխաւար մեղաց և զանգիտութեան իմոյ ։ Որ զաւազակն միով բանիւ սրբեցեր ՚ի մեղաց , և զբոցեղէնափակ դուռն դրախտին բացեր նմա ։

Եւ արդ՝ առեալ իմ զաղօթս աղաչանաց նորա , կարդամ առ քեզ ․ յիշեա՛ և զիս տէ՛ր յորժամ գաս արքայութեամբդ քով ։ Բա՛ց ինձ զդուռն ողորմութե̃ քո մտանել ՚ի հանգիստ յաւիտենից , և ընդ ա̃մ սուրբս փառաւորել զամենազօր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

## Ուրբաթի աւուր։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ամէն։

Հայր մեր որ յերկինս.

—

### Սաղմոս ապաշխարութեան։

Ի խորոց կարդացի առ քեզ տէր տէր՝ լուր ձայնի իմում։

Եղիցին ականջք քո ՚ի լսել զձայն աղօթից իմոց։

Եթէ զանօրէնութիւնս իմ քննես տէր տէր, իսկ ո կարէ կալ առաջի քո, զի ՚ի քէն է քաւութիւն։

Վն անուան քո համբերի տէր, համբերեր անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ ՚ի տէր։

՚Ի պահէ առաւօտու մինչև յերեկոյ, ՚ի պահէ առաւօտու յուսացաւ իէլ ՚ի տէր։

Ի տեառնէ է ողորմութիւն բազում, ՚ի նմանէ է փրկութիւն, և նա փրկեսցէ զիսրայէլ յամենայն նեղութեանց նորա։

Շարական աղաչխարութեան։

Բազում են քո գթութիւնք բազմամեղ անձին իմոյ, ողորմեա՛ ինձ Քաւիչ իմ։ Ո՛վ ՚ի քեզ անյիշաչար Տէր մեղայ չարին խաբմամբ, ողորմեա՛ ինձ Քաւիչ իմ։ Դու քո ՚ի միւսանգամ գալստեանն յորժամ գաս դատել զերկիր, ողորմեա՛ ինձ Քաւիչ իմ։

Ո՛վ մարդասէր՝ որ զմաքսաւորն արդարացուցեր, քաւեա՛ զիս զմեղաւորս։ Որ քղանցիւ հանդերձի քո զմերձեցեալն ՚ի քեզ բժշկեցեր, քաւեա՛ զիս զմեղաւորս։ Որ բանիւ հրամանի քո զանդամալոյծն առողջացուցեր, քաւեա՛ զիս զմեղաւորս։

Յամենայն ժամ աղաչանք իմ այս են, ՚ի մեղաց իմոց սուրբ արա զիս Տէր։ Յանցանաց իմոց զարհուրի սիրտ իմ, աղաչեմ զքեզ թո՛ղ ինձ Տէր։ Արտասուաց

նոց մի՛ լռեր Տէ՛ր, զի պանդուխտ եմ ես
յանցաւոր երկրի։

Զարհուրեալ դողացաւ ամենամեղ անձն իմ յահեղ քոյ դատաստանաց յաններելի տանջանացն։ Քանզի կամաւ մերձեցայ ՚ի մեղս մեծամեծս, արդ-այ և մնայ ինձ աններելի պատուհասն։ Արդ անկեալ աղաչեմ փրկիչ և բարերար, խնայեա՛ յիս ՚ի մեղուցեալս, և ողորմեա՛ ինձ բազմամեղիս։

Ամենակալ քաւեա՛ զմեղս իմ, զի ա͞ծ ես ապաշխարողաց։ Դու զհոգիդ մի՛ հաներ յինէն, զի ա͞ծ ես ապաշխարողաց։ Դու փրկեա՛ զիս յահագին հրոյն, զի ա͞ծ ես ապաշխարողաց։

Նայեսցէ տ͞ր ՚ի վերայ մեր ողորմութի͞ քո, և բան փրկութե͞ քո պահեսցէ զանձինս մեր ՚ի մեղաց։ Ողորմութիւն քո ճշմարտութիւն քո և լոյս երեսաց քոց առաջնորդեսցէ մեզ ՚ի յարդարութիւն։ Որ ողորմած ես գթած և երկայնամիտ, Տէ՛ր ընկալ զաղաչանս մեր բարեխօսութե͞ սուրբ ա͞ծածնին։

Աղօթք առ Որդին միածին, ՚ի բանից երանելւոյն Յովհաննու Օձնեցւոյ:

Որպէս բարի և ամենակարող զօրութիւն Աստուած յաւիտենական, որ յայսմ աւուր հրամայեցեր երկրի, և եհան զանասունս և զսողունս և զգազանս ըստ ազգի. և չհանդուրժեալ բնութեան բարիդ՝ արարեր զմարդն ՚ի հողոյ ՚ի պատկեր և ՚ի նմանութիւն արարչապետիդ տիեզերաց, և կացուցեր տէր և իշխան ՚ի վերայ բոլորեցունց քո արարածոց. և զգուշացուցեր զնա կալ ՚ի պատուիրանի քում, և վայելել զբարիսն զորս ետուր նմա ձրի և առանց փոխարինի ՚ի քումմէ առատութենէ:

Նաև արդ Տէր իմ և Աստուած իմ՝ որ զիս հողս անարգութեան այսպիսի անճառելի բարութեան բարգաւաճեցեր, ես ինքնին հրապուրանաց թշնամւոյն կենաց անսացեալ՝ պատուիրանաց կենարարիդ հեստեցի, և օտարացայ ՚ի նմանութենէ հաստողին իմոյ Աստուծոյ: Եղծի զգեղեցկութիւն կերպարանաց հոգւոյս աղտի աղտի անօրէնութեամբ, և ոչ զարհուրեցայ:

Պերճացուցեր զիս իմացական մտօք խորշել 'ի չարէն և ընտրել զբարին • իսկ ես վարեալ անմտութեամբ՝ յօժարեցայ 'ի չարիս • Ամբարձեր զիս 'ի նմանութիւն աստուածութեանդ քո անձնիշխան կամօք • և ես ծառայ եղեալ կրից մարմնոյս՝ հաւասարեցայ անասնոց անբանից • Թողի զլոյս հրամանաց քոց՝ զոր ետուր ինձ առաջնորդել նովաւ զգնացս ոտից իմոց 'ի ճանապարհ ուղիղ երկնից օթևանին • և ես ընդ խաւար գնացեալ անկայ 'ի խորխորատ անելանելի կորստեան վհի ։

Այլ դու մարդասէր և երկայնամիտ՝ մի' իսպառ բարկանար ինձ, և մի' ոխս պահեր յաւիտեան • զի 'ի քեզ անկայ ես յարգանդէ, և դու ես աստուած իմ և տէր ։ Գթա՛ յիս 'ի գործս ձեռաց քոց, և նորոգեա՛ զխանգարեալ մեղօք պատկերս բարերարութեան քո 'ի ձեռն աստուածեղէն շնորհաց քոց ։ Լուսաւորեա՛ զաչս մտաց իմոց ուղղել զշաւիղս իմ 'ի ճանապարհս օրինաց քոց • Սանձակոծեա՛ զերկրաքարշ բաղձանս և զանբան կրիցս բնութիւն երկիւղիւդ քով սրբով ։ Վառեա՛ զհոգի իմ սիրով

ե

ծութեանդ քո՝ մատուցանել պատարագ օրհնութե՟ ըստ հաճոյից բարերարութեան քո ։ Մի՛ թողուր զիս ՚ի ձեռս թշնամւոյն մեղկութե՟ իմոյ, որ հանդերձեալ է արկանել զիս ՚ի խաւարին արտաքին ։ այլ լեր այցելու բարեգթութե՟ քով, և փրկեա՛ զիս ։

Ընկալ բեկեալ զօրութի՟ իմ ՚ի մահաբեր հարուածոց հակառակորդին, և մեջք իմ կցեցան ՚ի հող ՚ի ծանրութե՟ բեռանցս մեղաց ։ այլ դու ողորմած յարո՛ զբազմամեղ անձն իմ, և զօրացո՛ զիս թօթափել զչարիս, և խնկալ զհրամանս օրինաց քոց ։ Հարայ ՚ի թունոյ աներևոյթ վիշապին, և մահ անմեռ կայ առաջի իմ յա՟մ ժամ ։ գթա՛ յիս օրհնեալ և ամենողորմ, և մատո՛ ինձ զդեղթափ ապաքինիչ երկնաձիր շնորհաց քոց ։ զի կեցից և փառաւորեցից զանճառ մարդասիրութի՟ քո այժմ և յանվախճան յաւիտեանս, ամէն ։

Նորին երանելւոյ Յովհաննու գառնեցւոյ աղօթք առ Որդին միածին ։

Որդի Ա՟յ, որ վասն անհաս մարդասիրութեան քո խոնարհեցար յանձնա-

փառաց քոց և եղեր որդի մարդոյ. և եղ-
եալ ՚ի խնդիր կորուսեալ պատկերիս քո
տանս ադամայ, ՚ի ձեռն անօրինական կրից
քոց արարեր փրկութի̃ ՚ի մէջ երկրի. և
հրաւիրեցեր զհողեղէնքս յարդարութիւն
և ՚ի փառս քո. և արարեր հաղորդ և ժա-
ռանգակից զմահկանացու բնութի̃ս երկ-
նային անմահական զօրացն։

Դու արդ՝ տէ՛ր յս̃ քս̃ ա̃ծ իմ՝ որ զայս
ա̃մ մարդասիրապէս շնորհեալ յօրինեցեր.
մի՛ ես ունայն գտայց յայնպիսի փրկու-
թենէդ վասն բանից յանցանաց իմոց։
Դու, որ̃ եղեր ՚ի խնդիր կորուսեալ ոչխա-
րին, և գտեալ ուսօք բարձեր, լե՛ր և ինձ
խնդրող կորուսելոյս։ Դու զոր օրինակ ողոր
մեցար քանանուհւոյն, և զհայցուածն կա-
տարեցեր, կատարեա՛ և զիմ հայցուածս՝
որ վասն թողութե̃ մեղաց իմոց պաղատիմ։
Դու որ̃ սրբեցեր բանիւ բերանոյ քո զբ
բորոտն, սրբեա՛ և զիս յա̃մ աղտեղանաց իմոց։
Դու զոր օրինակ զանդամալոյծն առողջա-
ցուցեր, առողջացո՛ և զիս զախտացեալս
չարեօք։ Դու որ̃ զհիւանդսն բժշկեցեր,
բժշկեա՛ և զիս զհիւանդացեալս հոգւով։

Եւ զոր օրինակ զդեւսն 'ի մարդկանէ հալածեցեր, հալածեա՛ եւ յինէն զթշնամին կենաց իմոց: Եւ որ͞պ զկոյրսն լուսաւորեցեր, լուսաւորեա՛ եւ զիս զխաւարեալս մտօք: Եւ զոր օրինակ զմեռեալսն յարուցեր, յարո՛ եւ զիս զմահացեալս յանցանօք: Եւ որ͞պ ալեաց ծովուն սաստեցեր, սաստեալ հանդարտեա՛ եւ զալիս մեղաց իմոց: Եւ զոր օրինակ զսովեալսն յանապատին կերակրեցեր, կերակրեա՛ եւ զիս զճշմարիտ սովեալս յառատ ողորմութ͞է· քումմէ:

Տէր յ͞ս ք͞ս ա͞ծ իմ, որ զա͞մ մարդ կամիս կեալ՝ եւ գալ 'ի գիտութ͞ի ճշմարտութեան, ուստի մարդ եղեալ վասն մեր՝ յանձն առեր զչարչարանս եւ զմահ խաչի, եւ զանձն քո ետուր փրկանս փոխանակ բազմաց, յիշեա՛ զիս եւ ողորմեա՛ ինձ. մի՛ ըստ գործոց իմոց հատուցաներ ինձ. մի՛ մերժեր զիս յողորմութենէ քումմէ. մի՛ անտես առներ զգործս ձեռաց քոց. եւ մի՛ զրկեր զիս յերանաւէտ խոստմանց քոց: Յիշեա՛ զիս յիշեա՛՝ յիշատա՛կդ յաւիտենից տ͞ր յ͞ս ք͞ս ա͞ծ իմ, եւ նայեա՛ առ իս քաղցրութ͞բ, Բարեխօսութ͞բ ս͞րբ ա͞ծածնին,

և ա՟մ սրբոց քոց երկնաւորաց և երկրաւո-
րաց, ազատեա՛ զիս յաններելի տանջանացն,
և 'ի դառն վշտաց գեհենին. և արա՛ զիս
արժանի երկնից արքայութե՟դ: Եւ քեզ
ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյդ փառք
իշխանութիւն և պատիւ յաւիտեանս յա-
ւիտենից, ամէն:

# Շաբաթի աւուր:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ամ̃ն:

Հայր մեր որ յերկինս:

—

Սաղմոս ապաշխարութեան:

Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութ̃ քով:

Լուր ինձ արդարութեամբ քով, և մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ա̃մ կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ, և նստոյց զիս 'ի խաւարի որպ̃ մեռեալ յաւիտենից:

Ձանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յա̃մ գործս քո, յարարածս ձեռաց

քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ ըզ
ձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ
քեզ, փաղփաղակի լո՛ւր ինձ տէ՛ր զի նուա-
ղեցաւ յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն,
զի մի՛ նմանիցիմ այնոցիկ որք իջանեն
'ի գուբ։

Լսելի՛ արա ինձ առաւօտու զողորմու-
թի՛ս քո, զի ես 'ի քեզ տէր յուսացայ։

Ցո՛յց ինձ ճանապարհ յոր և գնացից,
զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տէր, զի
զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու
ես աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ
'ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէ՛ր կեցուսցես զիս,
արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ
զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս
իմ, և կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ,
զի ես ծառայ քո եմ։

Շարական ապաշխարութեան։

Աներևութից քննող գաղտնեաց բը-
ժշկեա՛ զհոգւոյ իմոյ զհիւանդու-
թիս, և կեցո՛ միայն մարդասէր։ Որ եր-
կայնամիտ ես առ ամենեսեան՝ ողորմեա՛
անձին իմոյ բազմամեղի, և կեցո՛ միայն
մարդասէր։ Ամենաբաւական ողորմութե՛
շնորհ՝ պարգևեա՛ ինձ յահագին աւուրն
զթողութի՛, և կեցո՛ միայն մարդասէր։

Մեղք իմ բազում են յոյժ, ծանր են
քան զաւազ ծովու, քանզի քեզ
միայնոյ մեղայ, ողորմեա՛ ինձ ա՛ծ։ Բա՛ց
տէ՛ր զդուռն ողորմութեան՝ որ ողբալով
կարդամ առ քեզ. քանզի քեզ միայնոյ
մեղայ, ողորմեա՛ ինձ ա՛ծ։ Հե՛ղ յիս ըզ-
գթութիւնդ քո բա՛զումողորմ և մարդա-
սէր. քանզի քեզ միայնոյ մեղայ, ողորմեա՛
ինձ աստուած։

Մեղայ քեզ տէ՛ր մեղայ ողորմեա՛։
Մեղայ անօրինեցայ և մատնեցայ 'ի
ձեռս անօրէն թշնամւոյն. արդ անկեալ
աղաչեմ թո՛ղ ինձ տէր։ Վասն զամենե-
սեան առաւել մեղայ տ՛ր իմ գթած, քան

զամենեսեան անօրինեցայ և մատնեցայ 'ի ձեռս անօրէն թշնամւոյն . արդ անկեալ աղաչեմ թող ինձ տէր։

Զերծո՛ զիս յորոգայթէ որսողին , և յա̃մ վտանգից ապրեցո՛ և ողորմեա՛։ Յաներևոյթ թշնամւոյն և 'ի գաղտնի նետից բանսարկուին պահեա՛ և ողորմեա՛։ Փրկեա՛ զիս 'ի յանցանաց մեղաց իմոց , և նորոգեա՛ զիս հոգւով գիտութեան և ողորմեա՛ .

Ողորմեա՛ ինձ ա̃ծ , զի քեզ միայնոյ մեղայ։ Առաւել լուա՛ զիս 'ի տղմոյ յանցանաց ա՛ղբիւր բժշկութե̃ , և ողորմեա՛ . Յարենէ փրկեա՛ զիս՝ որ հոգւոց և մարմնոց ունիս իշխանութի̃ , և ողորմեա՛ .

Բազմութի̃ յանցանօք ծանրաբեռնեալ է անձն իմ . միայնոյ քեզ մարդասիրի աղաչեմ , ողորմեա՛ ինձ աստուած։ Բղխմամբ արտասուաց և հառաչանօք սրտի իմոյ անդադար հայցեմ բազմամեղութե̃ , քաւեա՛ զիս ա̃ծ . Բազմագութ մարդասէր շնորհեա՛ զթողութիւն իմոյ յանցանաց . զի առ քեզ միայն պաղատիմ , քաւեա՛ զիս աստուած։

Աղօթք առ Հայրն երկնաւոր, 'ի բանից երանելւոյն Յովհաննու դառնեցւոյ:

ՈՎ Տ՟ ամենակալ՝ անքննելի և անճառելի, անաշխատ բնութիւն և անտկարանալի զօրութիւն, որ յայսմ աւուր հանգեար յա՟մ գործոց քոց զոր արարեր. և օրհնեցեր զնա և սրբեցեր ամենիմաստ խորհրդով և կանխագիտութե՟ քով:

Արդ ես ծնունդս մեղաց՝ անկեալ կամ յախտ դառնագին ցաւոց հոգեկան ճխասուց, զոր ընչեաց յիս հողմն մահածին իշխանին խաւարի, և ոչ գոյ ինձ հանգիստ 'ի դժնդակ տանջանացս: Այլ դու ամենազօր՝ ապաքինեա՛ զանբժշկելի հիւանդութիւն հոգւոյս աննահանջելի հրամանաւ քով, և հանգո՛ զիս յանհնարին տանջանացս՝ որով հասեալ կամ 'ի դրունս մահու. զի ամենայնի կարող ես և հզօր, և չի՛ք քեզ իր անհնարաւոր:

Սէր երկրաւորացս և բաղձանք հեշտալեաց գերեալ գերբեալ զմիտս իմ՝ չարաչար վշտօք ծառայեցուցանեն զիս հանապազօր 'ի զգալիս և'ի սնոտիս, և ոչ երբէք տան դուլ և դադար ոգի առնուլ, և խո-

կալ խորհիլ զելս ազատութեան յանտանելի կրիցս կարեաց և դառն տխրութեանցս : Եւ այժմ աղաչեմ զքեզ բարերար՝ որ փըրկութիւն ես ամ̃ և դիւրիչ վշտաց նեղելոց , տուր ինձ գտանել ելս ՚ի տառապանաց աստի յազատութիւն մշտնջենաւոր կենաց և անանց հանգստեան , յորում մերժեալ են ցաւք և հեծութիւնք :

Մեք յանցանաց յուզեալք ՚ի հողմոյ հրապուրանաց բանսարկուին բաղխեն ըզնաւակ մարմնոյս շինուածոյ , և սպառնան խորասոյզ առնել յանդունդս խաւարի անզերծ տանջանաց : Իսկ դու բարեգութ փրկեա զիս ՚ի վշտացս ամենազօր աջովդ շնորհի , և հասո ՚ի նաւահանգիստն անփոյթ խաղաղութեան երկնային յարկի , ուր ամբարեալ պահին ամ̃ գանձք բարեաց և անզբաղ բերկրութիւնք :

Մի' թողուր զիս տէր ած̃ իմ ՚ի կամս անձին իմոյ , զի մի' ըստ յօժարութեան ապականեալ բնութեանս ստորաքարշ եղէց յանցաւորս և ՚ի սնոտիս . և մի' ՚ի բացեայ առնիր յինէն նահանջելով զնպաստս շնորհաց և ողորմութեան քո վասն անօրէնութեան

իմոյ • այլ ըստ սովորական մարդասիրութե՟ քում խնայեա՛ յիս 'ի ստեղծուածս քո՝ որ առ քեզ աղաղակեմ կողկողագին հեծութե՟։

Ուր ինձ անոխակալ, գթա՛ մարդասէր, ներեա՛ անյիշաչար, և ողորմեա՛ բազմամեղ անձին իմոյ, ըստ մեծի ողորմութե՟ քում․ արա՛ առ իս նշան բարի 'ի փառս անուանդ քում սրբոյ, և քաւեա՛ զմեղս իմ 'ի ձեռն ամենաբաւական շնորհաց քոց․ զի քաղցր ես դու տէր, և գթութի՟ քո անչափ։

Աղաչեմ զքեզ մարդասէր՝ մի՛ մատներ զիս 'ի ձեռս դժոխորովայն գազանաց, որ բացեալ զկոկորդս իւրեանց՝ խնդրեն կեղեքել զհոգի իմ ամենաժամ ժանեօք․ հա՛ր զնոսա զօրութե՟ բազկի քո 'ի հարուածս անողջանալիս, և զերծո՛ զիս զծառայս քո 'ի մահաբեր վտանգէս․ զի դու ես փրկութիւն իմ և կեանք, և առ 'ի քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ։

Տարակուսեալ վարանիմ վ՟ բազմութե՟ մեղաց իմոց, յորժամ նկարեմ առաջի աչաց տեսութե՟ մտացս զդատաստանն անաչառ, զմերկապարանոց յանդիմանութիւնն ամ՟ գործոց, զպատիժն սոսկալի մեղաւո-

բաց և անդարձից, զհուրն անշէջ, զորդունս ժանտս, և զդատապարտութիւն յաւիտենական։ Այլ քանզի ոչ կարեմ իմովս զօրութ թօթափել յանձնէ զբեռինս մեղաց, և ազատիլ յարժանահաս պատժոցս. վն որոյ անձամբ բեկելով գոչեմ առ քեզ մարդասէր, գործակից լեր ինձ 'ի դառնալ յետս յանօրէնութե գնացից իմոց՝ և դիմել առ քեզ յամ զօրութէ և 'ի մտաց, և սրտառուչ զղջմամբ գտանել զթողութիւն և զշնորհս, և ողորմութե քով արժանաւորել ընդ սուրբս քո մշտնջենաւոր հանգստեան յարքայութե քում յերկինս, և ընդ նոսին փառաւորել անլռելի գոհաբանութե զամենազօր տէրութիւն քո յամ յաւիտեանս, ամէն։

Նորին երանելւոյ Յովհաննու գառնեցւոյ աղօթք առ Հոգին սուրբ։

Անքաւելի և բազմազան շնորհաց առատապէս մատակարար և բաշխիչ Հոգի սբ։ Հոգի ճշմարտութե, հոգի ելող 'ի հօրէ, հոգի մխիթարիչ, ած ճշմարիտ, տր արարիչ ընդ հօր և ընդ որդւոյ, և

ա՟ծային նախախնամութեամբ քով բերող
ց՟ամ. որ ըստ կամաց քոց ախրականաց բա-
ժանես ըստ իւրաքանչիւր չափոյ հաւա-
տոց պատուատահես շնորհաց պարգևս։ Եւ
անճառելի գթութե՟ սիրոյ քոյ՝ ամենա-
կան բարութեամբ ձոխացուցանես զեկե-
ղեցի քո՝ առաքելովք, մարգարէիւք, վար-
դապետօք, և այլովք դասուք արժանա-
ցելովք ա՟ծայնոց պարգևաց քոց։ Յորում
եդեր զթողութի՟ մեղաց, և վհատութեան
և տկարութեան մերոյ բնութեանս մար-
դասիրապէս ետուր զօրութիւն վերստին
ուղղութեան՝ և կենդանութեան ՚ի մահ-
ուանէ մեղաց։

Հայեա՛ քաղցրութե՟ քով ամենագութ՝
և յիս յանարժան ծառայս քո, և տուր
ինձ սիրտ բեկեալ և հոգի զղջման։
Զօրացո՛ զլքումն մտաց իմոց, և հալածեա՛
զանյուսութեան ստուեր հոգւոյ ծառայի
քոյ։ Եւ մեծութեամբ ողորմութե՟ քոյ՝
զաստակութի՟ անօրէնութե՟ իմոյ, որ հար-
կանէ ցանկ զիս տանջեալ անբժշկական
խղձիւ, քաւեա՛ բարերար ա՟ծ։ ՚Ի գեր-
մանէ մեղաց կանգնեա՛ զիս, և զվէրս ան-

ձին իմոյ բժշկեամ ։ Օ պատճառն չարեաց իւրովք նենգութեամբքն, և զամենայն պատրանս խաբէութեան նորա մերժեամ յինէն, և զհաւանութիւն անմտութեան իմոյ անտես արա և մի՛ յիշեր ։

Մեծապէս անօրինեալ ցասուցի զկամս քաղցրութեան քո, և ոչ իշխեմ համարձակապէս մատուցանել աղաչանս առաջի քո, յիշելով զոր ինչ գործեցի ։ գուցէ անարժան գոլով և լի աղտեղութեամբք՝ դառնացուցից միւսանգամ զամենասուրբ կամս քո ։ Բայց ներողութիւն տարակուսանաց անձին իմոյ, և անհրաժեշտ երկիւղ վրէժխնդրութեանն՝ իշխել կալ առաջի քո հարկեցուցանէ զիս, մանաւանդ անխմանալի քաղցրութիւն քո, և աներկրական սիրոյ վստահութիւն ։

Եւ արդ ողորմած՝ տես որքան պէտս ունիմ մարդասիրութեան քում ։ և հայեաց որքան սաստիկ են վէրք անձին իմոյ թշուառացելոյ ։ Մատիր խոնարհութեամբ կարողութեամբ՝ բժշկել զանբժշկելի հարուածս անձին իմոյ ։ քանզի հնարաւորք են քեզ անհնարինք ։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն ընդ հօր և ընդ որդւոյ այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն ։



Յս̄ փրկիչ յարութեամբ քո,
զմեռեալ հոգիս կենդանացո՛։

Մաղթանք զօրաւորք հաշտեցուցիչք ոյ՝ եօթ-նեակ թուով ըստ եօթնեակ աւուրց շաբաթուն․ յաղօթամատոյն գրոց սրբոյն Գրիգորի Նարե-կացւոյ։

---

## Կիրակի աւուր։

՚Ի խորոց սրտից խօսք ընդաստուծոյ ։ ԺԵ

1 Արդ աղաչեմ զխնամակալդ վտանգա-
ւորաց տաժանելեաց կրից թախ-
ծութեանց հոգւոց վշտացելոց։ Ո՛վ յաւե-
լուր հեծութեան ցաւ․ մի՛ խոցեր զվիրա-
ւորեալս․ մի՛ դատապարտեր զպատժեալս․
մի՛ տանջեր զչարչարեալս․ մի՛ գաներ ըզ-
հարուածեալս․ մի՛ գլորեր զանկեալս․ մի՛
կործաներ զդայթագղեալս․ մի՛ մերժեր
զհեռացեալս․ մի՛ տարագրեր զհալածեալս․
մի՛ ամաչեցուցաներ զպատկառեալս․ մի՛
կշտամբեր զհարթուցեալս․ մի՛ խորտակեր

զբեկեալս • մի՛ խռովեցուցանել զամբոխեալս • մի՛ ալեկոծել զըքացեալս • մի՛ սասանեցուցանել զդողդողեալս • մի՛ շփոթել ըզմըրկեալս • մի՛ կեղեքել զգխշատեալս • մի՛ ջախջախել զբեկեալս • մի՛ գօշել զմրմռեալս • մի՛ կուրացուցանել զխաւարեալս • մի՛ զարհուրեցուցանել զապշեալս • մի՛ խորովել զխարշատեալս • մի՛ մահացուցանել զհիւանդս • մի՛ բեռանց ծանրութեան մատնել զտկարս ։ Մի՛ անուր յաւելուլ կարկամեալ թիկանցս • մի՛ կրկնակի ողբումն դառն հեծութեամբ • մի՛ ուժգնապէս վարեսցիս առ հողս • մի՛ սաստկապէս առ մոխիրս • մի՛ անոչառապէս առ ստեղծուածս • մի՛ ահարկութեամբ առ փոշիս ։ Մի՛ ընդհարկանիլ խստութեամբ մեծդ ընդ փոքուս • լոյսդ ընդ ստորնականիս • բնութիւն բարիդ ընդ 'ի բնէ չարիս • ողկոյզդ օրհնութիւն ընդ պտղոյս անիծից • քաղցրութիւնդ խակապէս ընդ համայն դառնութեանս • փառաւորեալդ անփոփոխ ընդ ամենևին անարգիս • կենացդ նշխար ընդ կաւոյս զանգուածոյ • տէրդ տէրանց ընդ ողիս երկրայնոյ • աննուաղ լիութիւնդ

ընդ չքաւոր սորկիս · անկապուտ ճոխու-
թիւնդ ընդ անպատսպար տառապելոյս ·
անկարօտ բարութիւնդ ընդ ամենաթշուառ-
աղքատիս ։ Քանզի ո՛վ որ հասեալ յառա-
ւօտ , և 'ի ծագման լուսոյն խիթայ մթա-
նալ · և կամ ընթերակայ կենաց , մանձա-
նալ · կամ աղքատութե՟ և պարտաւորիլ ·
կամ շնորհաց և դատապարտիլ · կամ փըր-
կութե՟ և մնանիլ · կամ նորոգման և եղ-
ծանիլ · կամ օրհնութեան և տարագրիլ ·
կամ բժշկութեան և վիրաւորիլ · կամ
լիութեան և նուաղիլ · կամ յաճախութե՟
հացի և քաղցնուլ · կամ դեղոց հասանաց
և պասքիլ · կամ մայրենի գթոյ և նեն-
գիլ · կամ խնամոց աստուածեան աջոյդ
և զրկիլ ։

2 Դու այրդ՝ ընդ ախտացելոյն սատակապէս
մարմնոյն բորոտութե՟ , հոգւոյս վտան-
գաւ և ես պաղատիմ , տէ՛ր եթէ կամիս ,
կարօղ ես զիս սրբել ։ Ընդ աչացաւացն
նեղելոց մշտագիշերին խաւարամանօք՝ մե-
ծակական ձայնիւ հառաչեմ · ո՛չ որդի ան-
ուանեմ դաւթի , այլ ծնունդ եւդ ոյ
դաւանեմ · ո՛չ միայն ռաբբի կոչեմ , որ

վարդապետացն է պատիւ՝ կարծողական զխելն գիտելոյ, այլ տէր երկնի և երկրի հաւատամ։ Ո՛չ ձեռնինդ միայն ձգմամբ հպաւորութե̃ ով բարեգութ ա՛ծ մերձաւոր, այլ 'ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ՝ ակնունիմ զօրել քո բանից առ իմ բժշկութի̃։ Ո՛չ թէ ինչ խորոց կասկածանաց միջոցի բանի, որ երկմտութեանն կարծի նշանակ՝ 'ի մէջ արկանեմ կամելոյն և ողորմութեանն, այլ կամիս որպ̃ բարեգութ, և կարես որպ̃ զօրաւորիչ· ասա́ բանիւդ և բժշկեսցայց։ Ընդ հարիւրապետին հաւատոց և ես լծակցեմ· ո՛չ մինչ անձուկ միայն բացակայութբ̃ հեռի լինելով խորան 'ի խորանէ՝ հաւատամ աղելքդ կարողութեդ̃ առ յարութի և բժշկութիւն, այլ 'ի վերինն երկնի բազմելով, և'ի ստորինս երկրի բովանդակ առ հրաշիցն սքանչելութի̃՝ ո՛չ ունիմ հատուցանել։

3 Շնորհեա́ ինձ, որպ̃ դատակնիք բանին քո վճռեաց առ պռունկին ընդունելութիւն՝ հնգից հարիւրոց դենարաց պարտուց շնորհաբաշխութի̃՝ ա՛ծ բարութեանց և տէր երանութեց̃, որ յաձախն

ընձեռել՝ բազում փառաւորիս • և՚ի շատն մատուցանել՝ նորին չափ սիրիս • և յառաւելն ողորմել՝ կրկին բարգաւաճիս • և յաւուրքան բարիս՝ իրաւամբք գովիս • և ա̃մի տէր գոլով՝ հաւաստարորդ ճանաչիս • և որ զբոլորն ունիս՝ ընդ մերումս կշռիս • և անճառելեաւդ ձրիւ՝ մերայնովքս վճարիս • և ընդ երկրաւորիս՝ զանվախճանն պարտ վարկանիս • և մեծագրեալ քո զմերն՝ մէհս գոհաբանիս • և՚ի սակաւուն տուչութիւն՝ դդչն փառաւորիլ ոչ ամբարտաւանիս : Արա՛ և ինձ զնոյն գթութիւն՝ ունողիս զգործս անհամար պարտուց • զի և՚ի ճառս երախտեաց քումդ պարգևաց՝ նորին իսկ սակաւ սիրելն կարգեսցի • և

քեզ փառք յա̃մի , ամէն :

## Երկուշաբաթի աւուր :

՚Ի խորոց սրտից խօսք ընդ աստուծոյ : Ժ.Բ.

1 Որդ ես ծնունդս մեղաց , որդիս մահացու երկրին , արդարև ան-

սահմանս բիւրոց քանքարաց տուժից գոլ հատուցանօղ ՚ի միում աւուր ։ Ր․ ԺԼ ո՞չ թէ առ փոքրկութիւն մարդկային մտաց հայցեմ ներութի, այլ առ աննուազ լիութիւն փրկչիդ մի քի պաղատիմ մարդասիրութի ․ որ չէի երբեմն և ստեղծեր ․ չմաղթեցի և դու արարեր ․ չև ևս եկեալ ՚ի լոյս և տեսեր ․ ո՞չ յայտնեցեալ իմ և գթացար ․ ո՞չ կարդացեալ և խնամարկեցեր ․ ո՞չ համբարձեալ ձեռն և նայեցար ․ ո՞չ պաղատեալ և ողորմեցար ․ ո՞չ կերպացեալ ձայնիս և լուար ․ ո՞չ հեծեծեալ և ունկնդրեցեր ․ գիտելով զարդեանն դիպուածոյս և չանտեսեցեր ․ նախահայեցող աչօք նկատեալ զպատժապարտիս չարագործութի և յօրինեցեր ։ Եւ արդ զքո արարչեալս, և զքև փրկեալս, և զայսքանեաց խնամոց յանձնեալս՝ մի՛ խապակորուսցէ մեղացն հարուած գիւտք բանսարկուին ․ մի՛ յաղթեսցէ յամառութեա իմոյ մառախուղ՝ ներողութե քո լուսոյ ․ մի՛ սրտիս կարծրութի՝ երկայնամիտ բարութեանդ ․ մի՛ մահացու մեղքիս՝ ամենակատարող լրութեանն ․ մի՛ տկարութիւնս

նիւթոյ՝ անպատմելիդ բարձրութե՟ն :

2 Ահա կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս յանուն քո հզօր, արասցես ողջ իբրև զառաջինն, մինչ ՚ի դրախտին փափկութե՟ զպտուղն կենաց կթէի : Կաշկանդեալ գօսացեալ ՚ի կոր կործանմամբ ընդ կնոջն տագնապելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուառութիւն, ընդ երկիր պշուցեալ մեղացն կքմամբ սատանայական բռունն կապանօք, զի մի՛ զերկնայնոյդ ընկալցի զողջոյն. խոնարհեա՛ց առիս միայն ողորմած, զի բարձրացուսցես զփայտս խոնարհ բանաւոր անկեալ, և զչորացեալս ծաղկեցուսցես ՚ի բարի կրօնս վայելչութե՟ ըստ ա՟ծաբանութեան սուրբ մարգարէին : Որպ՟ զ՚ի ծնէ կոյրն անլուսաւոր՝ չունիմ տեսարան, որով զստեղծիչդ նկատեալ զկերպ մաղթեցից հզօր՝ բարեգութ, միայն դու պաշտպան ակնարկեալ խնամովք անճառ քոյ սիրոյ ՚ի շնչական խօսուն քո անօթս, յանէից գոյաւորութի՟ լուսոյ հաստեսցես : Ընդ երկոտասանամեայ չարեօք չարչարեալ վշտագին կնոջն տանջեցելոյ՝ գետովք մեղանաց արեան հեղեղիմ,

հայեւմ 'ի բարձանց անմատոյց լուսովդ-
պարածածկեալ, ուր ոչ է քղանցք ձեռաց
եղծական վերարկուի ձորձոյ, այլ տա-
րածումն հրաշից ամ՟ ուրեք զօրացեալ։
Ո՛չ օծութ՟բ իւղով՝ պատժապարտս ընդ-
դեղաւորին մատուցեալ առ կենդանաձիր
ոտից գարշապարդ՝ զկաթիլս աչացս վար-
սիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ զամ-
բիծ հաւատս՝ անբարձմամբ բազկացս՝
ստոյգ դաւանմամբ հոգւոյ ողջունիւ՝ շըր-
թանց կափուցմամբ զերկիր համբուրեմ,
խառնեալ հեծութիւն աղբերցս արտաս-
ուաց՝ բժշկութիւն հոգւոյս աղերսեմ։
Մատնեալ մեղանօք հոգւոյս գոյութիւն
լուծեալ մեղկութ՟բ, և յերկուց կայից
միայնակողմամբ անհաստատ հետովք, զըն-
թացից գործին՝ նահանջմամբ չարին՝ ըղ-
ձեւականին բարձողութիւն շինուածոյ
մարմնոյս՝ առ ելս ծառոյն կենսառիթ
պտղոյն խափանեցելոյ, պատսպարեսցե՛ս
անդրէն վերստին միայն հնարաւորդ առ
'ի փրկութ՟ի։ Ո փառաբանարան հաստ-
ուածոյ կերպիս 'ի քէն եղելոյ՝ ամրափակ
խցմամբ համրացոյց արգել հողմ բան-

սարկուին , հոգիդ քո աղուեալ մեծդ ողորմութեամբ , ըստ յաւիտենականին բժշկեցելոյ , հրաշափառապէս բարեգործեցեր բանդ կենդանի՝ ինձ խօսողութեան անսայթաքելի ։ Նկեալ կամ չարեօք ՚ի մահիճս ախտից ընկողնոց մեղաց՝ զի կենդանի և խօսուն մեռեալ , կարեկցեալ իմում թշուառութեան ողբականօք քրքուանաց ձայնից ով բարերար որդի այ̃ , օրհնաբանեալ աչացդ ցօղով վերականգնեցեր ՚ի կենդանութիւն , իբր զաւրեալն ՚ի յանշիջական մեռելութէ ։ Ողջ դառնացօղս ՚ի գբի մեղաց կամ տարակուսեալ , ձեռն մատուցեալ որև անստուեր որդի բարձրելոյ , հանցես զիս ՚ի լոյս քումդ նշուլից ։ Ընդ աղխողում թշուառութե կականման ձայնի այրւոյն ՚ի նային մօր միամօրին , տատանմամբ մատանցն , կոծմամբ կրծիցն , հոսմամբ արտասուացն , տուայտանօք տխրութեան դիմացն՝ և ես պաղատիմ վերջին հեծութեամբս , տուր յուսահատելոյս ղեաջաւերութիւն միխիթարութեան գթած քո բանիդ , ասելով և ինձ գովեալդ բարի սուեղծիչ աշխարհի , թէ մի՛ լար գերի

բազմաց ողբալի ․ որում ընդ պատանւոյն
կենդանացելոյ ՚ի վշտացելոյ ծնողին ափո-
փանս՝ զամենապարտ ողբս ընկալցուք ՚ի
քէն ընդ նմին կրկին նորոգեալ ։ Ընդ
պսակիւ անզգայելոցն՝ դիւալլուկ և քա-
րակոշկոծ հեղձամղձուկ եղկելի անձանց ,
քստմնելի գխախուխ հերացն , վայրենե-
րես բանդագուշելոցն՝ ՚ի քէն ողորմեալ
փրկիչ բոլորից , իբրև զնոսին առ քեզ դի-
մեցից ․ հերքեալ մերժեսցես զգունդս չա-
րացն ապականողաց ՚ի քո խորանէս , զի
ժամանեալ հոգիդ քո բարի այսրէն հան-
գիցէ , լցեալ զմարմինս մաքրութեամբ
ընչոյս՝ զգեցմամբ անդամոցս՝ զգաստ ա-
րասցես զխելագարեալս ամենաթշուառ ։
Ընդ գերեցեալ դժոխաբնակաց վտարան-
դելոցն հոգւոց՝ արգելեալ կամ ՚ի վտան-
գի ․ զճառագայթ ողորմութեն փառաց քոց
ծագեալ , լոյսդ իմ անձկութե՝ ՚ի կապա-
նաց օգտողին զերծեալ զնս ապրեցուսցես ։
Գաղտնորոգայթ աներևութերակ վրիպակ
արահետ գայթութե մեղացս ջրդողեցեալ
ոգւոյս կերպարան՝ կայ ՚ի տագնապի ․ ըղ
ծածկեցեալն ՚ի տեսողութենց պչարադո-

ծին նիւթիցն պտուղմունս , քո ինքնա-
ւորդ զօրեղութե՛ որդի ա՛յ՝ գթածաբար
առողջացուցես ։ Ո՛ բազմազան տարազս
ցեղիցն զանազանից ախտաւորութեց մա-
հացուցանողաց՝ իւրականօք կորստեան
բերիւք՝ դժնդակարմատն շառաւեղօք հա-
տատեցելովք ՚ի յանդաստանի անօրէն
մարմնոյս , տարակորզեցես ՚ի ձեռն ձե-
ռինդ ամենակալի ․ որ արօրադրեալ միշտ
և մշակես զսահմանս հոգւոց առ բանիդ
կենաց արդիւնաւորութիւն ։

3 Եւ քանզի անցաւ ըստ նմանութե՛ օրի-
նակութեց յանցուածոցս վէր , ըստ
ձարակօղն քաղցկեղի առ ընաւ անդամս
մանաւորեալ զախտին տարածումն , չիք
ապեղանի իբր իսրայելի առ անչափութե՛
խարանացն մատուցանել ․ ՚ի խարսխաց բար
ձից մինչև ցափն կառուցման լրութեան
անդամոցս չէ՛ առողջութե՛ , այլ ամենևին
անբժշկութե՛ ։ Իսկ դու ողորմած բարե-
րար օրհնեալ , և երկայնամիտ թագաւոր
անմահ , լո՛ւր պաղատանացս արգահատու-
թեան սրտիս վտանգի , որ կարդամն առ
քեզ տէր ՚ի նեղութեան ։

# Երեքշաբաթի աւուր:

՚Ի խորոց սրտից խօսք ընդ աստուծոյ: ԼԵ

1 Եւ արդ տէր զօրութեց , մեծութի ահեղ , անտարակոյս տեսաւորութի , կամք ամենընդարձակ , առատութի անպակաս , մի՛ ոք զօրեսցէ տօնել հանդիսիւ պարերգութե՝ ՚ի միոյ կաթուածոյ ցօղոյ քումդ բարութեան , որ ցանկ դեգերիս պատրաստել պատճառս հնարից խնամ փրկութեան : Եւ զոր մեծն է գրեցից պատմել յապաւնիսն . քանզի ոչ անուանեցար հրեշտակաւէր , և որ զպետութի նոցունց հաստատեցեր . այլ և զերկինս զամենայնօք նոցին զմտաւանց քոց գործ , ոչ գրեցեր երբէք սիրել զնոսա . այլ առեր ՚ի պատիւ մեծաց գովեստից առաջին դասեալ զմարդասիրութիւն : Վ̃ որոյ կրկին մեծացուցեր քեզ անուն անձառ ՚ի խորհուրդս սոսկալիս . զերկնայինս լուսակերպիցն կոչեցեր զնոսին սպասաւորս և զլխաւորս յատուկ մատակարարութեանց . խնկ

զստորինային ծնունդս մահկանացուաց՝ ան-
բական և անծական պաշտելի անուամեղ-
պերձացուցեր ։ Մնացեալ մերատին ըստ սահ
ման կշռութեան չափոյ, լայնեցեր քեզ
կտակս գրոց ձեռօք անբաւից՝ զանապակ
ծորմանն ծայրագունին մերձում բարու-
թեանն ։ Նուս և ՚ի մարդանալդ քո միջ-
ջեութենէն, ոմանց վա՜ խնդրեանց, և կիսոց
վասն այլոց՝ զեղեր առատութբ՜ ցօղս
կենաց, արտեւսս բաղմօրինակս, սքանչե-
լիս անծագործս, նշանս զմարտատեսիլս ։
Որպ՜ զի թէ անդամալուծին պակասելոյն
՚ի հաւատոյն, հոգաբարձացն աղաչարկու-
թեամբ զգոյս քուսոյն՝ գթացեալ ողոր-
մեցար, և ո՜րչափ զօրեացէ առաւել բան
քո ամենակար՝ առ ախտալից մարմնոյս մաք
րութիւն աղաղակողիս հաւաշման · քանզի
արդարև մեծ են չափք հրաշից՝ քան զան-
մաքրեալս հոգի՛ որ հաստել, զլուացեալս
պատկեր՝ անտիրելի աղտոյ ներգործել ·
Նա զի և երկրորդս առաւելութբ՜ յաւա-
զանին շնորհ յաձախեալ՝ զփառսն հայրե-
նի բարձրացուցանէ ·

2 Ա Դու ես Տէ՛ր որ սրբես զմեղ, որպէս

ընտրեցելոյն .քո նախապատուորեցեր մաքրէ-
ալ • դու ես, որ ՚ի մեղս և յանօրէնութիւն
մերանկացու եղեր տոհմին յակոբայ, մինչ
յեղխրղտացուոյն երկրի ընդ խաւարին հե-
թանոսաց ընտանենայլին ։ Դու ես, որ
օրէնսգէտ առնես զմեղաւորսն ՚ի ճանա-
պարհի ըստ բանի երգողին դաւթայ ·
դու ես, որ փոխատարես զ.քարեղէն սրտից
կարծրութիւն ՚ի լոյծ կակղութե մարմնոյ
գթութե՝ բանի ընդունելութե ։ Դու ես,
որ բաւես ընձեռել սիրտ այլ, և ճանա-
պարհ մի երկնչել ՚ի քէն զբովանդակ
կենացն սահմանն • դու ես, որ տաս զերկիւղ
.քո ՚ի միտս խստութե առ քեզ ուշ ունել
հաւատովք, ըստ մարգարէիցն ձայնի ։

3 Օրհնեալ .քո շրթանցդ զաշխարհաս-
տեղծ բերանոյդ՝ զա̃ծեղէն անձ-
րևացդ զկեցուցանօղ կաթուած, մատո
լսելեաց դրանց բացարան, որով զօձին
խորամանկութիւն բանսարկուին թիւնից
բարձցես և բժշկեսցես ։ Ամենակալդ ձե-
ռօք՝ զխօսնականացս շարժողական գործի
ընծռնեալ՝ ազդեամ զօրութի ձայնի, որ
տաս բնաւից ընտրութի բանի • զի դա-

տխարակեալ զպատուհասականն՝ մի՛ յանդգ-
նաբար խօսելով իբր զնախնին՝ ըմպայց ’ի
յուսոյդ , և անբանութեան մատնեցայց
փանեալ յորսողէն ։ Լուսաւորեա՛ վերստին
զխաւարեցեալ հոգւոյս աչս՝ կենդանա-
բաշխ աջոյդ կարկառմամբ , զի մի՛ համար-
ձակութեն շիջեալ լապտեր շնչմամբ վի-
շապին՝ ’ի ներքոյ գրուանին ստորածած-
կեցայց ։ Բա՛րձ զանօրէնութի՛ս իմ տէր ,
և ընկեա՛ ’ի խորս ծովու ․ որ է փոքր առաւել
մեծութեան քում անբաւութեան՝ ըստ
մարգարէին , զեմս ընկղմել չարութիւն ։
Կանգնեա՛ կործանեալս անձին՝ նշան վս-
տահութե , զի մի՛ յուսահատութեն կոթող
կառուցեալ՝ զծածկեցելոցն բողոքեսցէ ։
Բա՛ց հզօր և գթած՝ զբժշկարանիդ
կենաց վարդապետարան , զի զառ ’ի ներ-
քոյն մշակութե կորուսչին սերմանց՝ ման-
կաղաւ կամացդ հուպ առ արմատ խուզ-
եալ հնձեսցես ։ Դէմ եդեալ հետևել
առ քեզ բոլորից ած պետրոսեան օրի-
նակութեն , ’ի կենցաղիս ծովու մեղանացս
ալեաց ընկլուզայ ․ մատո՛ ժամանեա՛ զաջդ-
կեցուցիչ յօդնականութի ինձ սասանե-

ցելոյս ։ Ընդ քանանուհւոյն ձայնի 'ի խորոց սրտիս պաղատիմ ․ առվեցելոյս աս-պականասպաս կաղկանձողական ամենա-թշուառ վտանգաւորիս, տալրուստ կերակ-րոյ փշրանաց հացի 'ի ճաշմանէդ քո սե-ղանոյ մանաւորեցես ։ Որպէս փրկութի(ն) նիւթոյ խորանիս որդւոյս դառնութե, որ եկիր խնդրել և կեցուցանել զիս զկո-րուսեալս ։ Զի քո է մեծութիւն, յաղ-թութիւն և զօրութիւն ․ և դու ես քաւութիւն և բժշկութիւն, նորոգութիւն և երանութիւն ․ և քեզ վայելէ փառք և երկրպագութիւն յաւիտեանս, ամէն ։

## Չորեքշաբաթի աւուր ։

'Ի խորոց սրտից խօսք ընդ աստուծոյ ։ ԿԳ .

1 Արարեալ և բազմագութ, մարդասէր և երկայնամիտ՝ միայն Թագաւոր, ընդ Հօր քում պատուեալ և օրհնաբան-եալ որ ամենայնի, որդի ո՛յ կենդանւոյ ։ Անպատճառդ միշտ իմում կորատեան, որ

ամենեւին անփորձ ես 'ի չարեաց. որ ոչ
կամիս զմահ մեղաւորի. որ փրկութիւն ես
'ի քոց կամաց ընծայեցեալ. որ դարձու-
ցանես զմրրիկ մեղաց 'ի յօդ քաւութեան.
որ զհուր բարկութեան յանձրեւ փոխարկես։
Որ զյետնեալ զկիրն 'ի բարեաց՝ կրկնակի
դյիւ նահանջեր՝ երկեակ բնութիւն 'ի նոյն
արձանի, ոչ խոկապէս ընդ անպարտան, եւ
ոչ համայն ընդ պատժաւորսն։ Որ զլու-
ծութիւն ծովուն սահմանաց, եբեր զկարկառս
քարանց կառուցեալ յեղանակեցեր։ Որ
զկարծրանիւթ վէմն անապատին, 'ի վի-
ժակս վտակաց հոսեալ բղխեցեր։ Որ ըզ
յորդանանու ջրոյն սրաշարժ վայրէկու-
թիւն, հրաշաւոր անդրադարձութբ՝ 'ի
յետնորդս հեթանոսաց լուացումն աւա-
զանին 'ի թիկունս առաքեցեր։ Որ ըզ
պատուաստեալ պարխայն երկրովի, յօրի-
նակ կործանման բնութեան սատանայի՝
եբեր զթեթեւութի յարդի ցնդեցեր։ Որ
զվնասակար ջուր նորին, 'ի յաւակ ողլայ-
լութեան առ 'ի բարին փոխարկութեան՝
քանանացւոցն փրկութեան՝ խորհրդական
ալեւն համեմեալ անուշեցեր։ Որ զմե-

է

ռային դառնութե՟ն, իբր զմաւաց անհաւա-
նութե՟ն, կենացն փայտիւ 'ի քեզ յարմար-
եալ պիտանի արարեր։ Որ զառեալն 'ի
դեւոյն, 'ի գծագրութե՟ն անսահմանդ քո
հրամանի անորակելիդ գունակութե՟ն 'ի նոր
երանգ բոսորային՝ մածեր արեւն 'ի ցա-
մաքի։ Որ զանկենդան ցուպ գաւազանին,
'ի կերպարանութիւն առ 'ի դքջդ մերով
նկարագրիւ, այլ և յօտարազնից ընտրու-
թիւն 'ի տեսլն ապաթոյն կերպիւ վիշապի
նմանեալ ցուցեր։ Որ զերջանիկ ձեռն ա-
ջոյն մովսիսի, 'ի ցոյց տեսութե՟ն ապագայ
իցս հրաշից մարդեղութեանդ քո բարձ-
րեալ, և քե՛ աղտաւոր մարմնոյս մաքուր
լինելոյ անփոփոխ փոխատրութե՟՝ կրկին
գուշակեցեր։ Որ յայսքանեացս շրջադրու-
թիւն, բարեխնամապէս արուեստիւ սրբոյ
զանակնկալն գիւտ մեղաւորաց կորստա-
կանաց նշանակեցեր։

2 Օրհնեա՛լ ամենագութ, որ բուսուցա-
նես յերկրէ դալարի, զմեռեալն յան-
շնչականէն․ որ զանշարժն իբր զընթացօղ
կառավարես․ որ յանարգ արգանդէ կոչես
զքեզ պատկերակիցս․ որ տաս պատմանեկաց

տղորիս ըմբոշխնելիս · որ յայտս մաքուրս
հերս ընծայես · որ զատաղարթ սևութեան
վարսից 'ի ձեան կերպարան զարմանագոր-
ծես · ցուցեալ՝ թէ առ ա͞մ սահման հեռա
ւորական՝ յաղթօղ ես հըզօր · որ փոփոխես
զշրթունս բնաւորականս՝ ըստ բանին յո-
ւայ , 'ի կամս հաւատարիմս ։ Որ սասանես
զերկիր , և զսխունս նորին 'ի հիմանց , նշա-
նակեալ հաստատուածին գալու՝ թէ դու
միայն մնաս անկործանելի · որ հոլովես զտա-
րերս իբրև զանցաւորս , և դարձեալ 'ի
նոյնն կայես իբրև զյարակայս · յայտ
արարեալ՝ թէ և առ մեղաց բազմութիւն՝
դիւրապէս ունել կամ թողուլ դոյնպէս
զօրաւոր իցես ։ Որ զարուեստին անզգայ
ութիւն՝ իբր երասանաւ իմն դաստիա-
րակես · երևեցուցեալ այնր իրի կերպիւ՝
թէ զբնութեանս չար դիմեցումն՝ յորժամ
և կամիս՝ հանդարտ առնիցես ։ Որ զան-
բարբառ բոլորակ լուսնին կարգես ու-
նայնս և պատարունս · լուսաւորեալ զպատ-
ճառն առ աւետիս տեսողաց՝ թէ 'ի նուա-
զութէ բարեաց զպարտաւորս մարմնին՝ դու-
ածես 'ի լրութի առաջնաստեղծ հարը-

տութեն։ Որ զպատկերս անխօս աստե-
ղաց, իբր զդաստակս դպրին հօտից տորոնես
և ժողովես. յայս իմն կենաց առ այս խոր-
հրդաբերեալ՝ քաղցրահայեաց տեսութի,
թէ և անապաշաւորաց լեզուաց կարօղա-
պէս բաւես ողորմել։ Որ 'ի մէջ մահու և
կենաց՝ շաւիղ փառահութեան ուղղես 'ի
ծովու. վկայութի եղեալ հաւաստի, թէ
և յանկասկածաւորն վայրի քև պաշտպա
նիք անդայթագղելի. որ իբր զջուր կաթ-
սայից 'ի հրոյ եռացեալ, ոչ զմեղաց մրրիկ
պղտորեալ՝ բանիւ կամաց քոց խափուցա-
նես։ Որ հայիս յերկիր և տատանես զսա,
զի անբանիւն զմտաւորս զգաստացուցա-
նես. որ իբր զանկատ մի անձուկ նաւի՝ 'ի
մի շարժութէ ալեաց՝ զանբաւ թանձրու
թիւն գետնոյս դղրդես, որով ծանուցեալ
լինիս ամենից հաստատածոյ՝ թէ իցես ա-
ներկբայելի, որ 'ի բան քո զօրեղ՝ հիմ-
նացեալ ունիս զնա։ Որ սերմանես զար-
տաշնչացեալ մարմինս յերկրի, և զնոյն ան-
կորուստ պահեալ կրկին կենդանածնես.
որ ապականացուս աւանդեալ՝ անեղծս
ստանաս, որ ընդ մահացու նիւթոյս ըղ

Նշխարդ կենաց խառնես • որ հրամանաւ ակնարկութե՛ ՚ի խուն վայրկենի կազմեցեր՝ պատրաստ կացուցեր զանզարդութի ամենից եղականաց ։ Քո՛ է զօրութի և կարողութիւն , որ շրջանակես զժամանակս ամաց հոլովման աւուրց՝ յայլ նմանութի բարեպաշտեհ տեսողութե ։ Որ կարդաս զանմռունչյուն իբրև զկենդանիս • որ ազդես միայն , և նոքա ընթանան • որ միայն հենուս անկանես անճառ արուեստիւ հնարագիտութե՛ մեծ և առաւօտ ։ Որ յետ նախակարգ յօրինուածոյն առաջնաստեղծլինելութեանն , արարեր զփառաւորեալն մեծամեծս հրաշակերտից հանդիսից , ըստ գրոյն երջանկութեան կանխահիացն զարմացման , այլ իմն գոյացութի տօնելի տեսակի՝ անեղծ աշխարհագործութեան և քան զայն՝ ՚ի մարդանալդ քո , որոց ո՛չ գոյ թիւ ։

3 Որ աստ զմիասին մեր քեզ գրեցեր • որ զարդարութի՛ն քո մեզ շնորհեցեր • որ ընդ քեզ կրեցեր զհաշտութեանն մերում փրկանակ • որ ո՛չ երբէք լքանիս յողորմութէ՛ • դարձո՛ զամբարշտեալս՝ ՚ի

պաշտօն բարի երկիւղի , զԹմբրեալս՝ 'ի
զգաստուԹի արԹնուԹե սրտի • զանմա-
քուրս՝ 'ի սրբուԹի պայծառուԹե կեր-
պարանի • զբազմաբիծս՝ յանբծուԹիւն
հանդարտական ոք պատկերի • զբեկեալս՝
յողջուԹի , որ 'ի դիպմանց ոչ խորտակի •
զլացեալս՝ 'ի խնդուԹի զուարԹուԹեան
անտխրելի • զյուսահատեալս՝ 'ի սէր միա-
ւորիչ անքակտելի • զամաչեցեալս՝ 'ի վստա-
հուԹի հաստատուԹե անշարժելի • զխա-
ւարեալս՝ 'ի լոյս երանուԹե անմեկնելի •
զմահու դերեալս՝ 'ի կեանս , որ ընդ եղծ-
մամբ ոչ անկանի ։ Ո՛վ 'ի փառաւորեսցի
անուն քո յիսուս՝ խոստովանեալ յամի ,
ընդ հօր և ընդ հոգւոյդ ոբյ՝ 'ի բարձունս
երկնի և 'ի ստորևս երկրի և 'ի բնակիչս
նց , յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

## Հինգշաբաթի աւուր ։

'Ի խորոց սրտից խօսք ընդ աստուծոյ ։ ՀԱ

2 Այլես անպխտանս յամի , և որքան
բան զօրէ պարսաւեալս • որ մինչ-

դեռ արթունս եմ՝ նիրհեմ․ մինչդեռ զգաստ երեւիմ՝ թմբրիմ․ 'ի բարեպաշտելս իմում գայթագղիմ․ մինչդեռ աղօթեմս և վրիպիմ․ 'ի յընթանալս իմում և կասիմ․ յարդարանալս իմ և մեղանչեմ․ 'ի խաղաղանալս իմում ամբոխիմ․ մինչդեռ արշաւեմս՝ առ 'ի յետոյս հակամիտեմ․ 'ի չուելն իմում՝ ընդ կրունկն դառնամ։ Ընդ լուսոյն մասին և խաւար յարեմ․ ընդ քաղցրութեն ճաշակ օշինդր խառնեմ․ ընդ կուղս բարեացն չարիս հիւսեմ․ ընդ կանգնելն և կրկին գլորիմ։ Ծաղկիմ և ոչ պտղաբերիմ․ ասեմ և ոչ առնեմ․ խոստանամ և ոչ կատարեմ․ ուխտեմ և ոչ վճարեմ։ Կարկառեմ և անդրէն ամփոփեմ․ ցուցանեմ և ոչ ընծայեմ․ մերձեցուցանեմ և ոչ մատուցանեմ․ 'Ի ճարակել խոցուածոյս՝ անդրէն վիրաւորիմ․ 'ի հաշտեցուցանելն՝ վերստին խռովեմ․ զուր հանդիսանամ, և իրաւամբք պարտաւորիմ․ գրիմ, և իսկոյն եղծանիմ․ նաւեմ, և 'ի գիծն թուլանամ․ սկսանիմ, և 'ի հանդիսան ոչ ժամանեմ։ Կարգիմ, և դարձեալ սասանիմ․ ընանիմ, և կրկին հեղում․ շարունա

կիմ սաստ, և անդ 'ի ստորևս հոսիմ. բար-
դիմ, և անդէն տոչորիմ: Հիմն արկանեմ,
և ոչ գլխաւորեմ. սակաւ վաստակիմ, և
բիւրս վատնեմ. դոյզն գանձեմ, և անթիւս
սպառեմ: Զայլս խրատեմ, և ես ինքն
անփորձ եմ. միշտ ուսանիմ, և երբէք 'ի
Ճշմարտութիւն գիտութեան ոչ հասանեմ:
Զշիջեալ չարիսն՝ նոյնչափ արծարծեմ.
սուղ ինչ քաջալերիմ, և առաւելապէս
լքանիմ. լարիմ, և իսկ և իսկ առ նմին մեղ-
կիմ. զայս կարկատեմ, և զայն պատառեմ.
ճլեմ զեղիճն, և տատասկ տնկեմ: Ընդ
ամբառնալն՝ և այսրէն բերիմ. մտեմ 'ի
բոյնն աղաւնի, և սնոտուստ ագռաւ ելա-
նեմ. գամ սակաւ մի սպիտակ, և սրանամ
դառնամ ընաւին սևացեալ. տանեմ զխս
քեղ դաւանել, և սպանողին նուիրիմ.
ընդ յանդիման լինելն, և թիկունս դար-
ձուցանեմ: Մաքրիմ, և այլ մրճոտիմ.
լուանիմ, և նովին զաղրանամ. կերպարանիմ
զդաւթին, և գործք զսաւուղայն կատա-
րեմ. շրթամբք Ճշմարտեմ, և ստեմ երիկա-
մամբք. աջովս մատակարարեմ, և ահեակ
կողմամբս աւերեմ: Ընդ երկրագործութե

ցորենոյն՝ որոմն սերմանեմ. ՚ի բարձրագոյն իմաստիցն՝ վայր իջեալ ես ինքն գտանիմ. Հրեշտականամ յերեսս, և ՚ի խորհուրդս դիւանամ. ՚ի յոտս հաստատիմ, և ՚ի միտս տատանիմ. սուտ ձևանամ, և իրօք խոտորիմ. կեղծաւորիմ արդար, և արդեամբք ամբարշտեմ: Գրաւիմ ՚ի պարս հեզոց, և ընդ այսս կաքաւեմ. ՚ի մարդկանէ գովիմ, և ՚ի տեսողէդ պարսաւիմ. ՚ի հողածնելոցս երանիմ, և յորդւոցն լուսոյ աւաղիմ. հաճոյանամ յետին ռամկին, և Թագաւորիդ մեծի յաչաց ելանեմ: Ո՜ ատեանն դատաւորին Թողեալ, խառնակրօնիցն աղերսեմ. հերքեալ ՚ի վեհիցն, սոսկականացն սպրդիմ. մարմնոյս արտաքուստ պճնիմ, և անձամբս երփնիւ ճային ճանաչիմ. հպաւորիմ դաշն հաստատել, և ուխտակորոյս արտաքս մերժիմ: Ի. յսօր մաքուր հոգեկիր, և վաղիւ մոլի խելագար. զտէրունի պատուէրն լքեալ, Թելադրութեան օձին հետևիմ. արիանամ զօրապէս, և վատԹարագոյնս ընկրկիմ. զծանրութի աւուրն բառնամ, և ՚ի ժամ վարձուն անմասն ելանեմ. ՚ի բացուստ ձոռոմն խօսիմ, և ՚ի պատասխա-

Հաստատութե̃ն պաշտօն պատգամնձեալ կարգիմ. 'ի յերս արևուն հարուստ երևիմ, և ընդ երեկս ունայն դեգերիմ. 'Ի յաթոռս ծերոց բազմեալ, և խելայեղից կցորդիմ. Ննջեմ խեթիւ, և արհաւրօք զարհուրեալ զարթնում: Օ անդաստանս կամացս՝ չարաչարս հերկեմ. փշոյթ խնամով 'ի չարիս. միշտ անսաուակ որդիս. անդարձ տարագրեալս. անզղջական զառածեալս. անմխիթար տրտմեալս. ինքնագրաւ գերեալս. մահու և ապականութե̃ ծառայեալս. անողոքելի տանջեալս. անփրկելի մատնեցեալս. անպատուաստելի հատուածեալս. անարծարծելի շիջուցեալս. անկազդուրելի խորտակեալս. անհանդերձելի կործանեալս. Եւ եթէ պարտ է զսաստիկն աստանօր ասել անօրինեալս անձին նախատինս, ահա գրեմ, գրեմ և ոչ անխայեմ 'ի խուխս նիւթեալ դեհենին: Ստացուածս նախանձու նորոյս ադամայ երկնայնոյ, ով և կայենն առաջին՝ հնոյն և հողեղինին. որ ունիմ զընաւն աստուստ 'ի յանձին զնշանակ ամբաստանութեանս, ոչ զշնչոյս տուրևառութի̃, այլ զըանիցս կշտամբութիւն:

3 Աւ որդ ո՞ւր իցեն փրկութիւնքն, ուր
սկզբնահայրն հաւատոց՝ 'ի յուսահա
տութեան վայրի զանգթութեան իմ չարիս
կրկնէ. ԱԾՆ մարգարէից՝ քարամբք բանից
կոչկոծէ. արին բարեփառ՝ աշտեին նիզա-
կաւ 'ի մահ սատակէ. պատկեր ճշմարտին՝
ընդ աքարու համայնիւ ջնջէ. ա̃ծարեալն
վեհից՝ յարագողաց վրիժուց մատնէ.
մարգարէածին տեսանօղն՝ ընդ ամաղէկաց
ւոյն առաջի ա̃ն սպանանէ. Նախանձաւորն
ա̃յ՝ երկնատեղաց բոցովն վառնէ. սուրե-
րին լրումն և նորոյս սկիզբն՝ հեծանոցին
ընտրութե̃ հոսէ. պետն առաքելոյն՝ ընդ
սափրայի 'ի կենաց զրաւէ. զարմանալին
քննութե̃ հոգւոյն՝ բուրումն ինձ մահու
ընդ կենացն քարոզ խառնէ։ Արդ անա-
չառք և ինձ կամառք երջանկացն, և ուժգ-
նութեան հրամանի վերնոյն՝ արի սպառա-
զէնք. ընդ հրեշտակացն և մարդկան. ընդ
տիեզերաց երկրի և տարերց. ընդ անզգայ
իցն և շարժողականք. որովք դատեալ միշտ
լինիմ տուժիւք ըկանաց՝ յօրինակ և յի-
շատակ սոսկալեացն ապագայից. իբր հող-
մով փոթորկի ալեաց յաւէտ մըրկեալ կե-

նացս վստահութի՟՝ մինչ անկայուն ՚ի հաս տատութե՟ց ։ Ո՛ որ եթէ ոք իմաստութե՟ ՚ի քննին առեալ խուզեսցէ զլուղակացն բազմատեսիլ զանազանութիւն , զմանունս փոքունս ընդ մեծամեծացն դասեալ , որ առանց թուոյ և քանակութեան համարոյ՝ թինդս առեալ անբաւ երամոց , եռանն զե- ռանն սլանան ՚ի մարմինիս ծովու , վկայեսցէ և հաստատեսցէ ճշմարիտ լինել զասացելոցս բանագրութիւն ։

4 Եւ ալ դու ինքն օրհնաբանեալ անմահ թագաւոր՝ բարի երկնաւոր մարդա- սէր քս՟ , այ՟ կենդանւոյ միածին որդի , հզօր , բարձրեալ , անքննին , անճառ , քա- ղիչ , ահաւոր , սաստեամ ՚ի ձմեռն ամբոխ- եալ ալեաց ոգւոյս ծփանաց ․ արձանացն զծարաւս մոլեգին շարժմանն սրտիս խռո- վութե ․ ընդոտնեամ ՚ի սանձս կարգոյ երա- սանաց ըմբռնմանն՝ զցնդեալ մտացս վայրա- գութի ։ Ողջցի խաղաղութի հրամանաւ մեծիդ ամենակարան բնոյս սասանման ․ սաստկեամ խափանեամ զբազմագլխեան ան- դամս ուրուականս գաղտնեաց ամօթոյս երկրակենցաղս հինից ․ Պրեսցես աղօթս

մտամտոյցս զայս նորընծայ տառ ողորմա զէրս թախծագին ձայնի ողբերգարկութե՟ այսր մատենի ։ Զան ՚ի խորոց մահուս ան-դընդոց՝ չքնաղ ապրեցեալ, ընդ մարդա-բէին փրկելոյ ․ ընկա՛լ զխոստովանութիւն անձնադատ բանիս ՚ի հոտ անուշից ․ շնոր-հեա՛ մխիթար դառնութե՟ վշտաց ուժգին հեծութե՟ յուսահատելոյս ։ Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք պատիւ և իշ-խանութի՝ յաւիտեանս, ամէն ։

## Ուրբաթի աւուր ։

՚Ի խորոց սրտից խօսք ընդ աստուծոյ ․ ՀԴ

1 Ս՝րբոյ երկնաւոր՝ տէր բոլորեցուն,
Տաւ ա՜մ բան՝ յա՜մի միշտ երկայնա-
միտ, ո՜յ կենդանւոյ անքննին որդի ։ Նհա
անդ է ողորմեսն իսկապէս, յորում հատաւ
ակնկալութի՟ վաստակոյն ․ ա՛նդ է բարե-
գործեսն, յորում տեսութիւն իմաստից՟
խափանեցաւ ․ յա՛յնմ ժամու է մարդա-
սիրեսն, յորում տկարութեանն վտանգ

պաշարեալ տխրեաց նեղքդ և արտաքդ։ Ընդամնօր է բժշկութիւն ծծայլին քոյ ձեռինդ, յորժամ ընտա անդամոցն տեղի ետ կենդանութեան. այն վայր է այցելութե, յորում ելք հնարից ոչ գոյ։ Այն է քո մեծութի, յորժամ զյուսահատութեան վէրս ողջացուցանես. այն է հարազատ քումդ ազգակցութե, եթէ յանակնկալն ժամու արտասուօրեայցես փրկութիւն։ Այն է հանդիսարան քում յաղթանակի, եթէ զփակեալն մուտս կենաց 'ի սպառումն չշոյս՝ բացցես. այն են քո շնորհք վայելչականք, եթէ զչարեացս իմոց մոռացեալ՝ զբարեացդ քո յիշեսցես։ Նմանես անոխակալ, եթէ ապախտաւորիս՝ ընդ երախտաւորացն խնամարկեսցես. 'ի սոսին ծանեալ գիտացից, եթէ նայեցար 'ի նուէր բանիս նախնի գթութեդ, եթէ զսովրութիւն չարեացս բարձցես։

2 Ողոքս այսօրիկ հիւսին բանք, և եղանակին նուագերգութիւք, յորժամ տրն բարի չարն ծառայի զբարեգործացն պարգևեսցէ. որ մինչ իրաւամբք մնայցէ բանտի, նա յորքայական ապարանս ընդ

հանգուցէ · մինչ հրաւիրեալ է ՚ի գուբ տղմոյ , նա ՚ի բազմականս ամենապատիւս գահուց գրգեցուցանիցէ · մինչ բրելոյ զաչսն դիտեսցէ , նա ՚ի բարձրութի բերկրութեան հայեցուցանիցէ · մինչ ծայրատութեան մատանցն սպասէ , նա մատանի համարձակութե մատուցանիցէ · մինչ հայի հարուածոց գանից , նա գթոց գիրկս արկանիցէ · մինչ պատրաստեալ յուսոյ կորստեան , նա երևելի տեսողաց բազմաց տանիցէ · մինչ ակն ունի սատակման մահու , նա ընդ կենացն և փառս ընծայեցուսցէ · մինչ հատման գլխոյն նայեսցի , նա զնոյն պսակաւ պայծառացուցանիցէ ։

Այս պտուղք օրհնութե գլթած , սքանչելարմատ քում շառաւիղաց · այս արգասիք կենաց՝ արարչականդ քո հրամանաց · այս իղձ խորհրդոց՝ խոստովանեալդ քո տենչանաց · այս նշոյլք լուսոյ՝ ամենափառդ ճառագայթից · այս ախորժութի ճաշակաց՝ բարեբանեալդ քո քաղցրութե ։

3 Քո միայնոյ են այսոքիկ տէր , ՚ի քէն ազդեցաւ գրել ինձ զսոսին · ահա՛ զքոյդ յատուկ տէրս աղաչեմ օրհնեալ ,

'ի քոյոց այտի պարգևեալ շնորհեմ . բայց տէ՛ր զգանձս քո բարիս , ըստ աղերսանաց աւակէին : Ո՛հ խառնեցես 'ի համբարս բարեացդ քոյ 'ի չարեացն իմոց . մի՛ շտե-մարանեցես զատելիսն քո՝ որ են ոխութիւնք և ցասմունք , ընդ սիրելիսն քո՝ որ են գը-թութիւնք և ողորմութիւնք . մի՛ պահեցես 'ի ստացուածս քո պաշտելիս զանախորժե-լիսն քո՝ որ են մթութիւնք և դաժանութիւնք, և զիմ վնասելիքն՝ որ են մեղք և թշուա-ռութիւնք : Ո՛հ գրեցես աջովդ օրհնութեն 'ի մատենիդ կենաց զմուրհակ պարտուց իմոցս անիծից . այլ զանհնարաւորսն ինձ համարեալս՝ մեծացուցես կրկին առաւել զանուն քո տէ՛ր 'ի նոսին , ցուցանել ըղ-դոյն ինձ դիւրինս և հեշտականագոյնս : Շա՛տ են իմ պարտիքս և անդր քան ըղ-թիւ , այլ ո՛չ այնքան հրաշալիք իբրև զքո ողորմութիւնդ . բազում են մեղանքս , այլ յաւէտ են նուազեալ առաջի քոյդ ներո-ղութեն . յաճախ են չարութիւնքս , այլ յաղ-թական են համայնից՝ հզօր ամենակալ , քոյդ մարդասիրութի . ինձ են անհամար՝ իմոյս անձին բիծք , այլ քեզ՝ յոյժ դիւրա-

եալ են ընդ սահմանաւ ։ Ո՛չ են այնքան
զօրաւորք առ կենդանութիւն՝ զենք մեղա-
նաց դատապարտեցելոյս պատուաբերութեան ,
որքան յիշատակ մահու կենդանւոյդ՝ առ
վանումն կործանողին բնութեան ։ Ո՜ ինչ
ազդեցէ փոքր խաւար՝ աւուրդ այ • զի-
արդ բաւեսցէ դոյզն ինչ աղջամուղջ՝ մե-
ծիդ ճառագայթից • զիարդ համբարձի
կշռեցի ընդ խաչի քո կրից՝ խակութիւն
հեշտութեան մարմնոյս տկարութեան ։ Ո՜ ինչ
երևեցի յաչս ամենակալիդ քո առատու-
թեան կոյտք մեղանաց ամ՝ տիեզերաց •
այս կշիռ մի հողոյ դիւրափոխելի՝ ի կարծ-
րութիւն բախման փանեցեալ , իբր զպղպջն կ
անձրևոյ բաղդատեալ համեմատ քո կամացդ՝
չքացեալ պայթեալ անդստին ։ Ո՜ ինչ
պիտոյ են քում զօրութեանդ ամենահնարդ
կարողութեան ժամանակաց առաւելութի՝
առ յանցուածոց իմոց քաւութիւն • ոչ
քթթել մի ական • ոչ խուն մի տեսութի
անցական • ոչ սակաւ մի նայեցուած
փայլական • ոչ կիսամասնեայ յամրութի •
ոչ փութացելոյ ոտից յեղեղուածն • ոչ յե-
ղց բարձրութենէ միոյ կանգնոյ կաթի

ակնունելոյ • ոչ գիծ մի չափով մտաց հե-
տեւեցելոյ • ոչ նշուլից արագութիւն • ոչ
ընչոյ տուրեւառութե՟ • ոչ ինչ յայսմ յան-
գոյ եւ յանտպաւորական նմանութե՟ անձեւ
օրինակաց յաւէտ անկայից՝ այնքան առ-
ժամայնք, կամ հարեւանցիկք, որքան եղծ-
մունք, ցնդմունք եւ հալմունք մեղաց սառ-
նամանեաց պահեստի՝ քումդ զօրութե՟
ա՟ծ ա՟մի տէր յ՟ս ք՟ս որդի անքննին կեն-
դանւոյդ այ՟ ։ Որ տաս պարգեւս առ-
քաղցրութե՟՝ չարաց ընդ բարիս • եւ անձ-
րեւս երկաքանչիւրոցն անաչառապէս ։
Աշուես սահմանես իրաւամբք եւ զվտանգս
կրիցն հաւասարաբար • որոց մեծ է հան-
գիստն առ ակնկալութի՟ պարգեւին, փոքր
խթանաւ փորձութեան զսակաւութիւն
պտղոտուցն աստէն վճարես • իսկ որ զերկիր
ընտրեցին, ներես ողորմութբ՟, տալով եւ
նոցա դարման ընդ նոցա՝ միշտ առ քեզ
դարձին սպասեւ ։ Եւ քեզ փառք ամենա-
զօրիդ՝ առ ա՟մ հրաշագործութիւն բարե-
խնամօղ երկայնմտութե՟, օրհնեալ յաւի-
տեանս, ամէն ։

# Շաբաթի աւուր։

՚Ի խորոց սրտից խօսք ընդ աստուծոյ։ ԺԶ

1 Սուրբդ՝ դու միայն ես երկնաւոր բարձրեալ՝ բարեգործ՝ քո է զօրութիւն, քո ներողութիւն, քո բժշկութիւն, քո առատութիւն, քո են պարգեւք, քո միայնոյ են ձիրք ձրի, քո քաւութիւն, քո պաշտպանութիւն, քո հնարք անիմանալիք, քո արուեստք անգտանելիք, քո չափք անչափելիք. դու սկիզբն եւ դու կատարած։ Քանզի ոչ երբեք ստուերացուցանէ զլոյս ողորմութեան քո՝ խաւար սրտմտութեան. վասն զի ոչ ես գրաւեալ ընդ մասամբք ախտից՝ ՚ի վերոյ քան զբան։ Պատկեր անպարագիր՝ անդր քան զորքանութիւն կշռութեան. անչափ լայնութիւն փառաց. անտարրափակ ընդարձակութիւն հատու զօրութեան. անամփոփելի առաւելութիւն բացարձակութեան. անտկարանալի բարերարութիւն գթութեան։ Դու դարձուցանես ըստ մարգարէին, յայգ զստուերս մահու. որ իջեր կամաւ ՚ի տարտարոսն ներքին արգելականացն

բանտի, յորում և մաղթանացն դուռն էր աղխեալ, և գերեալ անտի զմթերիցն կապուտ փտարանդելոցն հոգւոց, սուսերհրամանի յաղթական բանիդ՝ զկապ սատակման մահուն խզեցեր, և զմեղացն կարծիս ցրուեցեր։ Պա՛րծ առ իս՝ որ զընդդամ զընդդանաւ վհիս տղմասից գբոյս յերկաթս մեղաց, վիրաւորեալ խոցմամբ սլաքաց բանսարկուին նետից։

2 ԻՅԼԴՈ՛Ւ յանձի տէրդ բարերար, լցեալ ՚ի մէջ խաւարի, օրհնութեդ գանձ, ողորմած, գթած, մարդասէր, կարող, զօրաւոր, անպատում, անքննին, անճառ. բաւական ըստ սրբոյն յակոբայ. անհնարիցդ ամենից դիւրապատրաստ հնարաւորութիւն, հուր ծախիչ զխռիւս մեղաց, ճաճանչ կիզանող ընդհանրական թափանցանցութեան խորհրդոյ մեծի, յիշեա՛ զիս յողորմութեան քո օ՛րհնեալ, և մի՛ յիրաւունս քո. ՚ի ներողութեան քո, և մի՛ ՚ի հատուցման. յերկայնմտութեան, քան ՚ի հաւասատութե։ Եթէ կշռեսցես զմեղանաց իմոց ծանրութի, ընդ քաղցրութե քո՝ և մի՛ ընդ արդարութեան. զի առ սակ նախ-

նուէն յոյժ է նուաղեալ , իսկ 'ի ներհակ վերջնոյս յաւէտ ծանրակիր ։

3 Արդ մատե՛ր առիս բարութի՛ , որպէս յունկանն բժշկութի՛ հակառակ քո համբարձելոյն . բարձ 'ի մերուցելոյս զհողմ մահու խռովութեանս , զի հանգիցէ յիս ամենակալ հոգիդ խաղաղութե՛ ։ Եւ քեզ փառք յաւի՛ , յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

## Նախ քան զհաղորդութիւնն ։

'Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։ ԻԷ

1 Եւ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեց վերընծայելոց զդրութիւն Թուղթս յարմարեցի կական և հեծութի՛ , հառաչանք կողկողագինք , դառնութեան լալումն և արտասուաց երգ . դարձեալ սկսայց զձայն պաղատանաց՝ խոստովանօրէն զղջականաբար , զգաղտնածածուկն յայտնաբարբառ . զի անդրադարձութե՛ սկզբնամբն և վերջաւորօքն բառ-

խուք, զնոյն համաձայնութիւն 'ի մի թախանձ նմին մաղթանաց հոգեկեցոյցն խոնարհութեան՝ աստանօր եդից ։

2 Մեղայ մեծիդ բարերարութեան, անարգս մեղայ . մեղայ ծագմանդ ճառագայթից, խաւարս մեղայ . մեղայ շնորհացդ անբաւ երախտեաց, արդարև մեղայ . մեղայ սիրոյդ վերնում գթութեան, յայտնապէս մեղայ . մեղայ ստացողիդ քաղցրութեան, ստուգապէս մեղայ . մեղայ գերունակ գոգոյդ գրկանաց, անբաւս մեղայ . մեղայ աննուաղ լուսոյդ վայելման, նենգօղս մեղայ . մեղայ ճաշակման անճառուդ կենաց, բազում մեղայ . մեղայ անհաս պարգևացդ ձրից, հանապազ մեղայ . մեղայ գովեալ մարմնոյդ տ̃յ, մահուչափ մեղայ . մեղայ պաշտելի արեան արարչիդ, իսկապէս մեղայ ։ Ո՛հ արդարև օրհնեալ է հատուած բանի յուսադրական սրտի այսր մեղայի . սոյն ևս՝ պատուելի աւանդ . անմոռաց պատուէր . հայրենեացն տուր . նախահարցն օրէն . համայնից թոշակ . անհերքելի բան . զօրաւոր պատասխանի . կենդանութեան կամուրջ . ախորժելի վերնոյն . սիրելի ն̃ց .

անխզելի կապ • հրաշալի բարբառ • անշրջելի պատճառ • բաղձալի աղերս • փափաքելի սեղան • սրտաբեկ հնչումն • անհնարից ճարակ • կարծրութեան վանիչ • ա̃ծապաշտից սահման • հեթանոսաց գիրք • վաղնջուց կանոն • քրիստոնէից հարազատ • արարչութեան յաղթօղ • անջրպետ հզօր • խորոց ահաւոր • արուեստ բարձրութե̃ • խորութի̃ անչափ • հիացման տեսիլ • խորհուրդ կնքեալ, ընդ որ չիք ումեք անցանել, եթէ ոչ անըմբռնելի մտաց արագման զսա ծանիցէ: Զայն բարեպատեհ հրաշաւորական, որ ոչ յիշատակեցաւ 'ի վերջին դատաւնիք դասուն լքելոյ • գուցէ առ Նմին խզեալ համառօտ զվրիժակն իրաւանց մահուն հասելոյ, յորմէ ընտրութիւնն ապագործ եղեալ, զպահմանն յաւիտենական քակտեսցէ:

Օրդ փառաց մեծութեան, որով նոյն ինքն ա̃ծութի̃ն պսակեալ բարգաւաճի: Քանզի ո̃վ ոք դիմեալ կալաւ զեղջերաց սեղանոյ այսր սրբութե̃, և ոչ առժամայն պրծեալ 'ի պատժոց անարատ գտաւ • Իսկ եթէ աքար զարմեան, և սաւուղ կիսեան, և յուդա սիմոնեան՝ ասելով զայն ոչ ար-

դարացան, և ես վկայեմ՝ խրատամբք խոստովանեալ զայս պայման բանի, զի ակամայիցն բռնադատելոց ոչ է կատարեալ սէր, ուստի և ոչ բովանդակապէս փրկութիւն։ Իսկ ես կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ զմկրտութեան հաղորդաս։

3 Մեղայ երախտեացդ մոռացութեան, վերստին մեղայ. մեղայ մարմնոյ ձեռն յոգի հարեալ, յիմարս մեղայ. մեղայ աւկեանսդ դժրողութե, իսկ և իսկ մեղայ. մեղայ բանիդ ապախտ առնելոյ, չարաչար մեղայ. մեղայ 'ի յօր սատակման ինձէն ստիպեալ, վատթարս մեղայ. մեղայ պարտականս անկենդան մահուն, ձաղելիս մեղայ. մեղայ անպատկառս քո բարձրուե, տաղտկալիս մեղայ։ Մերջին ինձ կրկին աշխար հոգևոր, զի 'ի կորուստ և 'ի կործանումն ինձ երևեցայ. զի անդարձս վարատեցայ. զի որդիս Թշնամի գրեցայ. զի 'ի բարձանցն երկնից ընկեցայ. զի փուշ վարուց դիզի։ Իսկ ես առ սմին ողբք աղաղակի, զի անձամբ զանձն անարգեցի. զի բադին կորուսչին գտայ։ Մ. ժԼ իմ

կսկիծ գժնդակ սրտի, զի զիս ունիս առ որ չէմ, զարտաքնայարդար բաժակս անմաքուր, զբռեալ որմն գարշունակ, զխն պարծանօք պաճուճեալս, զդյսս 'ի մուայլ շրջեալ, զգերանակիր ակնս թշուառացեալ, զջահս փառաց շիջեալ, զմիւս յոյժ իմ իրօք մեղսասէրս, առ անօրինականսն տերունականս. առ յայտնութիւն մեծայինս. առ երեւմունսն արարչագիրս. առ խոնարհութիւն սարսափելիս. առ այն զոր տեսի աչօք իսկ իմովք: Առ որ մեծ է պատասխանատուութիւն, քան առ համօրէն աւետարանին՝ զարմանս, հիացմունս. հոգս հալոզականս. անդաձմունս անհնարաւորս. թուականութիւնս՝ մտաց անբաւարդելիս. եղմունս անկատարս. իջմունս անհասատատս. յուսահատութիւն յարմարականս. յանդգնութիւն պատշաճականս. ձաղանս պատեհագոյնս. նզովս խրատացս. անէծս արժանահատոյցս: Արդ այսոքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիք, և ինքնահարուած տանջանաւորութիւն:

3 Եւ քանզի կարող ես զայս իմ զպարտս թողուլ, և զխայթուածս մահու

բժշկել. տէր ողորմութ՟եց, ամ՟ բոլորից, ք՟ս Թագաւոր՝ բարձրեալ Հօր որդի, ստեղծիչ՝ գթած՝ բարերար, օրհնեալ՝ առատ՝ հարուստ, ահաւոր՝ հզօր՝ ողորմած, տեսուչ՝ ձեռնկալ՝ հաստիչ, ապրեցուցիչ՝ դարմանիչ՝ կեցուցիչ, երկայնամիտ՝ անոխակալ՝ ապաւէն, բժիշկ՝ գովեալ՝ երկնաւոր, անճառ՝ լոյս՝ կեանք, յարութի՝ նորոգութ՟ի՝ քաւութ՟ի, եթէ հայեսցես մարդասիրութեամբ, ըստ որում քո՟դ են սովորութ՟ք, նայեցեալ ՚ի քեզ՝ կողկողիմ և ես։ Եթէ լուիցես, հառաչեմ. եթէ ունկն մատուցանիցես, պաղատիմ. եթէ անսայցես, աղերսեմ. եթէ ներեսցես, աղաչեմ. եթէ առիս դառնայցես, գոչեմ։ Ապա եթէ անտես առնիցես, կործանիմ. իսկ եթէ առ ոտն հարկանիցես, լամ. եթէ զողբեպահն ոչ ընծայեսցես, մեռանիմ. ապա եթէ ահարկու դէմս ցուցանիցես, սատակիմ. իսկ եթէ սաստեսցես, դողամ. եթէ խէթիւ տեսանես, սոսկամ. ապա եթէ սաստկանաս, սարսափեմ. եթէ հալածես, հեծեմ. իսկ եթէ ընդվայր հարկանիցես, հերքիմ. եթէ զբոց վհատութ՟ես ոչ

առցես, տագնապիմ. եթէ խստանաս, փախնում. ապա եթէ սպառնաս, ընկճիմ։ Իսկ եթէ քննես, քարկոծիմ. ապա եթէ ուժգին ակնարկես, սուզանիմ. եթէ ոչ անխայեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես, խիթամ. իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տացես, երկնչիմ, զբարեացն պարգև մատնեալ. զերանութին թողեալ. զշնորհն լքեալ. զուխտն ցրեալ. զաւանդն կենաց մոռացեալ. զհամարձակութեանն վստահութի կորուսեալ. զստեղծիչդ էիցս բարկացուցեալ. զանճառութիւն շնորհին ընդոտնեալ. զպատուոյն պատկեր այլայլեալ։ Իսկ եթէ առ այս խեղդ մահու հեծութե ցաւոց մարդասիրեալ՝ առիս ժամանեցուսցես տէ՛ր յս քս՝ զազդեալն գիր ընանիլ ՚ի յիս, եթէ բժշկութի դադարե ցուցանէ զմեղս մեծամեծս. որով ամենառատ քաղցրութե պատուաստեալ ՚ի քեզ, զքոյդ կերպարան լուսոյ նկարեալ յոգի՝ վերստին գտեալ պնդեցայց քաւեալ, եւ ստեղծեալ կրկին ՚ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց. եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս, ամէն։

# Նախ քան զհաղորդութիւնն:

’Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ: Խէ

1 Եւ արդ զինչ գոյ աւել ամաչեցելոյս
յերեսաց մեծիդ ահաւորութենէ,
բայց եթէ համբառնալ, և հող ’ի բերան
եդեալ լռել ’ի սրտի, ըստ մարգարէութ՟ն
խրատու, ահա ’ի բարւոյն կարկառեալ ’ի
յոյս: Իսկ եթէ զփականս շարժողութ՟ն
շրթանցս բացից բանադատեցից խօսել
կամեցեալ, դարձեալ զնոյն ձայն կրկնակի
կամ եղերերգութ՟ն լալեաց բազմութեան՝
խէթ մտացս յառաջադրէ.
2 Եւ արդ ողբակից մեծ մեղաւորին ա-
նօրինելոյ կամաւ առ ’ի մահ՝ զնորին
գոչումն երկրորդեցից և ես ընդ նմին.
մեղա՛յ տէ՛ր՝ մեղայ, և անօրէնութեանց իմոց
ինձէն վկայեմ. Հիւսեալ ընդ նմին զբանս
յիններորդի սաղմոսին, անթիւս գրեմ
զպարտուցս սակ անձինս մեղանաց՝ քան
զհիւղ երկրի հողմահոս փոշւոյ ընդ օդս
ոմ տարածեցելոյ:
3 Մեղայ յերկինս և առաջի քո, ընդ

անտուակ որդւոյն պատկառեցելոյ՝ հայրենի գթոյդ վերստին դարձեալ թախանձ արկանեմ. զողորմելին ձայն աղերսանաց արտօսրածին ողբովք գոչման՝ ՚ի տխուր դէմս մատուցեալ առաջի քո տարածանեմ՝ հայր գթութեանց ա̃ծ բոլորից, չեմ արժանի կոչիլ, եւ ոչ բնաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլեւ անպիտան ապաբան վարձկան. Ընկա՛լ զոսկէալս տարագրական՝ պարտական ծնաւուց. եւ զցաւքաղցոյս լլկանաց նեղոյս նուաղեցելոյս՝ կենաց քո հացիւդ բժշկեսցես: Եւ ընդառաջ քո ողորմութ̃բդ՝ ՚ի սկզբնաւորս ապաւինութե̃. զգեցո՛ գթած եւ անոխակալ՝ անօրինեալս մեղապարտի զնախակապուտ հանդերձին ծածկոյթ. առանդակորոյս ձեռացս աղտեղեալ մեղօք՝ զկնիք մատանւոյն համարձակութեան ամենատուր կամօք մատուսցես. զգարշապարացս թշուառութե̃ մերկութե̃ ոտիցս՝ պատսպարութե̃ աւետարանական ամրավերարկու օդիցս կօշկաց՝ ՚ի յօձին թիւնից միշտ ամրացուսցես: Օ զուարակդ պարարակի եղինդերինայնոյ, որ է միածին որդիդ քո օրհ-

նեալ, իսկապէս մարդասիրութեամբ կարօտե լոյս բարեաց նուիրեմ. որ մատուցեալ միշտ՝ և անպակաս մնայ 'ի լրութեան, յարակայ զենեալ 'ի սպանդարանի անթիւ սեղանոց անսպառութեամբ, բոլոր յամենեսին և ընաւ յամենայնում, էութեամբ յերկինս և իսկութեամբ 'ի ստորինս, աննուաղ մարդկութեամբ և անթերի աստուածութեամբ, փշրեալ և բաշխի 'ի մասունս անհատս, զի զհամայնն հաւաքեսցէ առ 'ի նոյն մարմին իւրում գլխոյ. քեզ փառք ընդ նմին հայր ողորմութեան՝ յաւիտեանս, ամէն:

## Յետ հաղորդութեան:

'Ի խորոց սրտից խօսք ընդ աստուծոյ: Ե

1 Եւ արդ ես երկրածինս մարդ՝ կենցաղականաւ անկայուն գոյիւ ըղբաղեալ, և յիմարութեամբ պատրողականաւ գինեաւս յիմարեալ, որ ամենայնիւ ստեմ, և ոչ միով իւիք ճշմարտեմ: Քանզի որովք դիմօք վերագրեցելովք նշանակ:

աղարտեցելովք՝ յանդգնեցայց լինել յան-
դիման քում դատաստանիդ, ուր հրաւա-
դատ ահաւոր անճառ՝ անպատում հզօր
ա̃ծ բոլորից ։ Քանզի դասեալ սատանին
'ի սոյն զապերախտութի̃ մեղուցեալ ան-
ձինս՝ առ քումդ երախտիս, ցուցից զիրա
ւունս քո միշտ զօրացեալ, և զանիրաւու-
թիւս իմ յաւէտ պարտաւորեալ ։ Որ արա-
րեր զիս 'ի քո պատկեր պանծալի 'ի ձեռն
վեհիդ տպաւորութեան, զոկալս օժան-
դակելով ։

2 Զարդարեցեր բանիւ ․ փայլեցուցեր
փչմամբ ․ մտօք ճոխացուցեր ․ իմաստ-
իւք աճեցուցեր ․ հանճարով հաստատե-
ցեր ․ 'ի շնչականացն որոշեցեր ․ հոգւով
իմանալեաւ խառնեցեր ․ իշխանականին
գոյիւ պճնեցեր ։ Ծնար հայրաբար ․
սնուցեր դայեկապէս ․ տածեր ստացողա-
պէս ․ Տնկեցեր զամբարիշտս 'ի քումդ
գաւթի ․ ջրովն կենաց ոռոգեցեր ․ աւազա-
նին ցօղով մաքրեցեր ․ կենացն փառակա-
արմատացուցեր ․ հացիւդ երկնայնով ջամ-
բեցեր ․ ա̃ծային արեամբդ արբուցեր ․
անհպիցն և անհասանելեացն ընտանեցու-

ցեր • զայս երկրեալէն 'ի քեզ համարձա-
կեցեր • լուսովդ փառաց վերածածկեցեր •
զհողանիւթ մատունս անմաքուր ձեռացս
'ի քեզ մատուցեր • զմեղկիս անարգ մա-
հացու իբր զնշխարս լուսոյ յարգեցեր • ըզ
հայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մարդա-
սիրապէս և անարժանիս ինձ անձին կըն-
քեցեր • Ո՛չ կոչեր զբերանս լցեալ նան-
րութեան՝ 'ի ժառանգակիցն կարդալ զքեզ •
ոչ կշտամբեցեր զյանդգնելս՝ 'ի քո կը-
ցորդութիւն • ոչ ստուերացուցեր զտեսիլ
աչացս՝ 'ի քումդ ակնարկութիւն • ոչ արգե-
լանաւ կապանաց՝ ընդ մահապարտացն տա-
րագրեցեր • ոչ խորտակեցեր զգաստակ
բազկիս, որ անմաքրապէս առ քեզ համ-
բառնայր • ոչ մանրեցեր զոստս ինձ մա-
տանցս՝ 'ի շօշափելն զբանդ կենաց • ոչ պա-
տեցին զլինել մատախուղք՝ 'ի ձօնելն ըզ
քեզ ահաւոր • ոչ փշրեցեցեր զշարս ատա
մանցս՝ յըմբոշխնելն զքեզ անսահմանելի •
ոչ գնացեր բարկութբ խոտորնակի՝ խոտոր
նակի ընդ քեզ հեռաւորս, իբր ընդ վրիպ-
եալ տունն Իսրայելի ։ Ո՛չ խայտառակե-
ցեր 'ի հարսնարանիդ՝ զանարժանս քումդ

պարերգութեան. ոչ 'ի գձուձ հանդերձին
տեսիլ՝ զանօրինելս յանդիմանեցեր. ոչ
կապանօք ձեռացս և ոտիցս՝ յարտաքին
խաւարին հալածեցեր։

3 Օայս ամ՛ մասունս բարեաց՝ և զներե-
լոյդ երկայնմտութի ընկալեալ 'ի
քէն բարերար օրհնեալ, և յամի միշտ
երկայնամիտ, փոխադրեցի զնաստակալս
պարտեաց՝ անթիւս և բազմօրինակ անօ-
րէնութիւ, մարմնականաց և անձնականաց՝
ամենակիր բազմածուփ խորհրդոց յուղ-
մանց երկրաքարշութեց։ Օայսոսիկ քեզ
տ՛ծ իմ և տէր՝ ընդ այսքանեաց բարեաց
փոխարէներեցի. զայս քեզ՝ ինձէն հատուցի
չարիս, ըստ մոլխեան յանդիմանութեն
առակի, մոռացեալ զիմաստութի՝ և սի-
րօղս յիմարութեան։ Օայդ բարեաց ե-
րախտեաց կամաւս՝ ընդունայնութեան
դնացիք չարաչար ունայնացուցի. զայս
լուսաւորութի շնորհաց անձաւլից՝ 'ի բարձ-
րելոյդ խնամոց բարդեցեալ՝ մրրկաւն խե-
լագարութե ցնդեցի։ Նա Թէպէտ բա-
զում անգամ ծանուցար՝ կարկառմամբ
ձեռին քո այցելութե ձգել զիս առ քեզ,

ոչ հաւանեցայ , ըստ մարգարէին որ զխա-րայելէ ամբարտաւանութե. եւ թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյանալ , եւ ոչ ընդ այսմ՝ սահմանաւ ուխտիւ փակեցայ , այլ դարձեալ զնոյն նիւթեցի չարիս. անդստին յոճն առաջին մատեայ. փշոցն մեղաց հերկեցի զանդաստան սրտիս յորոմանն արդիւնաւորութի։ Ու իս եղանեն առածք ամծարեալ սուրբ մարգարէիցն , քանզի մնացեր յինէն խաղողոյ , եւ ես ընդ այնորիկ փուշ շառաւիղեցի. դարձայ յանախորժ դառնութի՝ պտղոյ այգիս օտարացեալ. բուռն հարի զանհաստատ հողմոյ , որովք միշտ տատանեալ այսր անդր տարաբերիմ. ըստ ձայնի երանելոյն յոբայ՝ ընդ ճանապարհ իմն անդարձ գնացի. 'ի մէջ աւազոյ շինուածս յիմարութեան կառուցի. Յայնատարր հետովք խաբեցայ կենացն անձկալեաց հասանել. փակեցի ինձէն զելիցն ուղղութիւն , բացի կամաւ զկորստեան խորխորատն. Խցի զպատուհան լսելեացս իմոց՝ առ բանիդ կենաց ընդունելութի. կափուցի զաչաց հոգւոյս հայեցուածս՝ առ 'ի զկենացն դէպ նկատել.

Ո՛չ ընդոստեայ ՚ի թմբրութեանց լքմանէ մտացս՝ ՚ի պատգամ փողոյդ ահաւորութե՟ . ոչ զգաստացայ ՚ի փողոջ գուժի՝ հրափորձական աւուրն ընտրութեան . ոչ երբէք զարթեայ ՚ի նիրհմանէ քնոյն մահացուի , որ ՚ի կորուստն կարապետէ : Ո՛չ ետու հանդիստ քոյ հոգւոյդ ՚ի մարմնեղէնս տաղաւարի . ոչ ընդ բնութ՟ի շնչոյս խառնեցի զմասն շնորհաց քումդ պարգեւի . իմոյս ձեռօք կոչեցի կորուստ ըստ առակողին , զհոգիս կենդանի մահացուցանել :

4 Ու զինչ է ինձ սակաւս և նուազագոյնս յօդել սահմանս կսկծելիս չափաբերականս՝ մինչ անցեալ է ըստ քանակութիւն՝ և վրիպեալ ըստ բժշկութիւն : Արդ քո՛ է ընձեռել կեանս հոգւով մեռելոյս , և անոխակալութե՟ մատչել առ այցելութիւն դատապարտելոյս որդի ա՟յ կենդանւոյ . քեզ փառք յա՟մի , ամէն :

# Յետ Հաղորդութեան:

'Ի խորոց սրտից խօսք ընդ աստուծոյ: ՀԸ.

1 Նուարդ անկեալ յերեսս հողանիւթ կերպիւս, 'ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագութ̃բ՝ զբարեգործիդ ողորմածութ̃ե զկենդանարար ոտս համբուրեմ, զայս օրինակ մաղթանաց մեծիդ ընծայեցուցեալ:

2 Աղաչեմ զքեզ միա՛յն խնամակալ, մա՛րդասէր, գը՛թած, կե՛ցուցիչ, հզօ՛ր, ա՛յցելու, պա՛շտպան, մի՛ ունայնասցի վաստակն աշխատութ̃ե փրկականդ կրից մարդացելոյդ վասն իմ ա̃յ․ մի՛ սուտ եղիցի քրտանցն կաթուած խառնեցեալ արեամբ՝ 'ի մատնութ̃են աւուր գիշերին․ մի՛ լիցի ստուերացեալ լուսոյդ երախտիս, զոր ձրի և առանց փրկանաց թշուառացելոյս ինձ պարգևեցեր․ մի՛ ջնջեսցին շնորհացդ աւետիս, զոր կողից քոց կայլակք նորոգեցին․ մի՛ անշահ եղիցին կրիցդ պտուղք, զոր կարօտութեանս իմում մատուցեր:

Ո՛վ պարծեսցի բանսարկուն վանեալ՝ զքո ստացեալս իւրացուցանել . ահա յաղթեսցես կամօք քո ըղձից չարին . վերստին ապշեսցի միանգամ զարհուրեալն . կրկին պարտեսցի իսպառ դատեցեալն . Ո՛վ անխայեր զազատարարդ քո բան, որ զստեղծեալս քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզ դարձուցանէ . զանճառն արարեր բարերարութի յանակնկալ ժամուն յուսահատութեան . յորժամ բնաւ իսկ կորեալ և օտարացեալ էր կենդանութեն շարժողութիւն , մեռար անմահդ՝ և զմահացեալս նորոգեցեր . եթէ զկանոն համաձևութե օրինին փոխեցեր , արդ զդիւրինն և ըղհեշտականն և զևս հնարաւորն մի՛ արգելցես՝ ըսկզընաձիր ողորմածութե բարեգութ օրհնեալ և երկայնամիտ Թագաւոր, Ո՛զդեա՛ բանիւդ ամենազօրաւ՝ որ զգոյութիւն լուսոյն ստեղծեր ՚ի նախնումն աւուր , և վաղվաղակի փոփոխեալ գտայց ՚ի լաւ անդր . և փոխանակ զի ես ոչ խնդրեցի հետևել լուսոյդ , դու եկեսցես ինձ յայց՝ ճառագայթ ծագման հայրենի կերպիդ , և կոչեցայց առաջի քո ծառայս միա-

նապաստ՝ ողորմեալ շնորհեալ առ՚ի քէն․ ոչ է ժամանակ յերկարաձգութեան առ՚ի զպարտսն հատուցանել, այլ շնորհեա ինձ տառապելոյս զերեսս քո՝ լոյսդ ՚ի խաւարի սրտից վհատելոց։ Արգե՛լ և կնքեա զըն-թացմունս ելից, որ միշտ զեղուն բարիքն հոսեալ ՚ի յուշոյս իմ տեսութե̃․ պահեա ինձ զշնորհ ամենապայծառ գանձուց-մնացականաց, որով պատուական գտեալ՝ քո՛ անուանեցայց, պաշտպանեալ ՚ի քէն անսահման բարի։

3 Ա՛հա ողորմեա ինձ գթած, աղաչեմ զքեզ ողորմեա ինձ հզօր, կրկին ողորմեա։ Մի՛ փոխարկեր երկուսն ցաւոց ընդ չարեաց իմոց բարիդ ամենևին․ մի՛ բառնար ՚ի վտանգելոյս զառ ՚ի քէն պար-գևեալդ շնորհ․ մի՛ կապտեր զփչումն ա-մենօրհնեալդ հոգւոյ․ մի՛ լուծաներ ըղ ճնկեալ զկնիք արքունական պատկերիդ։ Մի՛ յայտնեսցես փուշք մեղանացս ՚ի սըր-բութե̃ս մտացս․ մի՛ խզեր զկապ միութե̃ ընդ քեզ սիրոյն պնդութե̃․ մի՛ մերժես ցես զարուեստ զօրութե̃ լեզուոյս յարմա րութե̃․ մի՛ դակասեցուցաներ զաջողուած

աջոյս՝ առ 'ի զլուսոյդ մասունս բաշխել։ Մի՛ գրեր 'ի դպրութե՟ կենաց մատենից զմահուն պտուղս․ մի՛ պահեր․ մի՛ ինձ համարիր․ մի՛ յիշեցուցաներ․ մի՛ ամաչեցուցաներ․ մի՛ նախատեր․ մի՛ ոտն հարկաներ․ մի՛ արձանացուցաներ զմեղկութե՟ցն․ մի՛ ամբարեր զկորստեանցն․ մի՛ իբր ստգտաեալ իմն ամբաստաներ։ Մի՛ յարուսցես ընդ իս զծառն անիծից․ մի՛ արձակեր 'ի յիս զապարթ մոստուցն․ մի՛ ընծիւղեր զծաղիկ մեղաց․ մի՛ բերցես ընդ առաջ զնամակ պարտուցս․ մի՛ արտաբերեր զեութե՟ պտղոյն։ Մի՛ թուեսցես 'ի ձիւղս երկրաստեղծ մատանցդ զգլուխս գործոցս․ մի՛ մատուսցես բան ընդդէմ ա՛հեղ՝ զանօրէնութիս իմ յիշատակել․ մի՛ մատնեսցես իմոցս կամաց զաւանդս հոգւոյս վարել 'ի գերութե՟․ մի՛ սատէն զիս փառաւորեր՝ զի անտանօր դատապարտեսցես․ մի՛ նուաղութե՟ այսր անցաւորի՝ զյաւիտենական բարիսն տուժեր․ մի՛ 'ի սակաւուն այսմ ժամանակի՝ զանվախճանելի ըզփառսն չափեր․ մի՛ ընդ հոլովս վշտաց հեծութե՟՝ զանախտական զկեանսդ գրա-

ւէր ։ մի՛ ընդ ստուերի այսր մթութեան՝ զանճառելերդ լոյս փոխանակէր ։ մի՛ զերասանակ մտացս լքցես՝ ըստ արտաքուղի հետս հետևել ։ մի՛ զկամուրջ կենցաղոյս գրեսցես՝ ինձ հանգստեան բաւականութիւն ։ մի՛ զհովիտ հանճարոյս ստուերական պահեր՝ ՚ի հանդերձեալսն ինձ հրապարակել ։ Եթէ ամբարես զաւանց համարոյ գործոցս իմ չարիս , մեռայց կենդանւոյն ։ եթէ շտեմարանես ՚ի սրտի , սասանին կիզեալ անբոց այրեցայց ։ եթէ քննեսցես զանօրէնութիւնս , առանց յանդիման քեզ լինելոյ խպառ հալեցայց ։ եթէ տնկակից ինձ թողցես զմեղսն , ՚ի նոսին վատնեալ մաշեցայց ։

4 Կնարկեա՛ մի՛շտ զօրեղ ամենակարօղ՝ փախնուլ չարութեանցս որ քիս , զի բարիդ քո եկեալ փոխանորդեսցէ ։ հրամայեա՛ գլթած , խնամակալ , գովեալ , լո՛յս անշիջանելի , զօրութիւն անսահմանելեաւ , զի նոր հաստատեսցի գոյութիւն բնութեան մարմնեղէն յարկի անդամոցս ։ յորում հանգուցեալ անլքանելի բնակեսցես բազմեալ ախորժ տենչանօք միութիւն

հոգւոյս իմ ընդ քեզ. զապականութիւն մեղաց մերժեալ իսպառ՝ յանարատութի̄ զիս պատրաստեսցես՝ ամենակեցոյց Թագաւոր անմահ Տէր յս̄ քս̄, օրհնեալ յաւիտեանս, ամէն։

'Ի խորոց սրտից խօսք ընդ տիրուհւոյն։ Ձ

1 Եւ արդ 'ի վերայ այսքանեաց յուսահատութեանց և ահարկու սրտաբեկութեանց, պակուցանողական սոսկութեանց ա̄ծային բարկութե̄ց, տագնապեալ ոգւով թախծութե̄ իսպառ, աղաչեմ զքեզ սուրբ ա̄ծածին։ Հրեշտակ 'ի մարդկանէ. մարմնատեսիլ քերովբէ. երկնաւոր արքայուհի. անխառն իբրև զօդ. մաքուր որ̄պ լոյս. անաղախ ըստ նմանութե̄ պատկերի արուսեկին բարձրութեան. գերազանց քան զբնակութի̄ անկոխելին սրբութե̄ց. երանաւոր խոստմանն տեղի. եդեմ շնչական. ծառ կենացն անմահից բոցեղէն սրոյն պարունակեալ, 'ի բարձրեալն հօրէ զօրացեալ և հովանացեալ, հանգստեամբ հոգւոյն

հանդերձեալ և մաքրագործեալ, ընտանիք որդւոյն յարդարեալ և տապաւորեալ։ Միածինն հօր՝ և քեզ անդրանկին. որդի քո ծննդեամբ՝ և տէր արարչութեամբ։ Ընդ անաղտ մաքրութեանդ՝ և անբիծ բարի. ընդ անարատ սրբութեանդ՝ և խնամակալ բարեխօս. ընկալ զմաղթանս այսր աղերսանաց քում դաւանողիս, և միատ ընծայեա ընդ սմին խառնեալ զբանն իմ նախնի մեծին ներբողի 'ի քոյդ պաղատանս։ Հիւսեա միացի զմեղուցելոյս դատն հեծութի՝ ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ հայցուածոյ՝ տունկդ կենաց պտղոյն օրհնութե. զի 'ի քեն միշտ օգնեալ և բարեգործեալ, և 'ի մաքրական քո ծնելութիդ ապաւինեալ և լուսաւորեալ, կեցից քովի որդւոյ քո և տեառն։

2 Ժամանակեա թևոցդ աղօթիւք՝ խնատոփանեալ մայրդ կենդանեաց, և ելիցն իմ յերկրէս հոլաէ՝ առանց լլկանաց հեռացեալ 'ի կեանս օթևանացդ պատրաստութեան, զի թեթևացի կատարածն իմ ինձ ծանրացելոյս անօրէնութեամբ։ Արացես տօն ինձ բերկրութեան զօրն իմ տաղ-

նայի՝ ողջացուցիչ երկանցն Եւայի · բարե-
խօսեա՛ խնդրեա՛ աղաչեա՛ , զի ըստ անճա-
ռելի մաքրութեանդ և ահա զբանիդ հաւա-
տամ զընդունելութի՟ ։ Արտասուօք օգ-
նեա՛ վտանգեցելոյս գովեալդ ՚ի կանայս ·
ծունր խոնարհեցո առ իմ հաշտութիւն
ծնողդ ա՟յ · ընդ իմում թշուառիս հոգա՛
խորան բարձրելոյն · ձեռն տուր անկելոյս
տաճար երկնային · փառաւորեա՛ զորդիդ
քո ՚ի քեզ՝ ա՟ծօրէն ինձ հրաշագործել
քաւութի՟ և ողորմութիւն՝ աղախին ա՟յ և
մայր · բարձրասցի պատիւ քո ինև , և
ցուցցի փրկութիւն իմ քև ։

3 Եթէ զիս գտցես՝ տիրամայր · թէ ինձ
ողորմեսցիս՝ սրբուհի · թէ զկորուս-
եալս շահեսցիս՝ անարատ · թէ զհարթուց-
եալս յանձանձեսցես՝ երջանիկ · թէ զամա-
չեցեալս յառաջ մատուսցես՝ բարեշնորհ ·
Թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես՝
միշտ ս՟բ կոյս · Թէ զմերժեալս ընտանե-
ցուսցես՝ մեծարեալդ ա՟յ · Թէ յիս ցուցցես
զգթածութի՟՝ լուծիչդ անիծից · Թէ ըզ
ծփեալս հաստատեսցես՝ հանգիստ · Թէ
՚ի խռովութեցս յուզմանց փոխեսցես զիս՝

խաղաղարար․ թէ վրիպելոյս ինձ հնարաւորեցեր՝ գովեալ․ թէ վասն իմ մտցես 'ի հանդէս՝ մահու նահանջիչ․ թէ զդառնութիւնս իմ անուշեցեր՝ քաղցրութեամբ․ թէ զբաժանմանն իմ խաւարոյ քակեցեր՝ հաշտութեամբ․ թէ զանմաքրութիւնս իմ բարձցես՝ եղծման ընդոտնիչ․ թէ զմատնեալս մահու փրկեցես՝ կենդանի լոյս․ թէ ըղ լալեացս ձայն հատցես՝ բերկրութեամբ․ թէ զխորտակեալս կազդուրեցես՝ դեղ կենաց․ թէ 'ի կործանեալս յիս ակնարկեցես՝ հոգելից․ թէ ողորմութեամբ ինձ պատահեսցես՝ կատակ նուիրեալ, օրհնեալդ միայն 'ի շրթունս անբիծս լեզուաց երջանկաց․ ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ անձրևեալ՝ կենաց ինձ զօրէ, մայրդ բարձրելոյ տեառն յիսուսի արարչին երկնի և ընաւորին երկրի․ Ո՛վ որ անձառապէս ծնար բովանդակ մարմնովն և համայն աստուածութեամբն, որ փառաւորեալն է ընդ հօր և հոգւոյն սրբոյ էութեամբ և անքննութեամբ՝ մերոյին բնութեամբս միացելով, աստուած և յամենայնում, մի յերրորդութենէն․ նմա փառք յաւիտենից յաւիտեանս, ամէն․

1 Ընդ ա̃ծածնին մաղթանաց՝ ահա և
զվերնոցն անմահ հրեշտակացն լու-
սակերպից զաղերս հայցուածոց, որ վասն
իմ գոչեն առանց լռելոյ հանապազորդեան
արգահատութե̃ մաքուր բերանոց՝ ընկալ
բարեգութ ։ Որք են բարիք բարեգործ-
եալք 'ի բարերարէդ, անկիրթք չարեաց՝
հաստեալք յամենիշխան հրամանաց էիդ ·
զօրութիւք հզօրք ակնարկութե̃ բարձրե-
լոյդ · սուրբք, մաքուրք, անարատք, օրհ-
նեալք, վայելչականք, քաղցրօղք և ան-
պարտելիք, և ըստ ընթացից տեսութեան
մտաց արագունք ·

2 Որք և պտղակորոյս անկոյ Թզենւոյն
եւամեանն դատարկութե̃, որ զբնա-
կաւխտեանս պարունակէ ժամանակն, զան
ցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնւոյն՝
յամայր յամրութեամբն յերկարաձգելոյ՝
յայգի աշխարհիս արմատացելոյ, սին սա-
ղարթիւն պաճուճելոյ՝ զրկեալ 'ի պտղոց,
որ է ճշգրիտ պատկեր Թշուառ մարդկու-
Թեանս, սոքա բարեխօսք՝ հանդերձինք՝

այլև խնամակալք․ որ դեգերին հանապազ
առ մեզ՝ ընդ մերում կրիցս կարեկցելով,
բարեմասնութեան մեր սպասեն․ և յաւի-
տենականն կենդանութեան փրկութեան մեր
աղօթեն՝ զայս բան ասելով, զգործս ձե-
ռաց քոց մի՛ անտես առներ։ Քանզի ար-
դարև մեր են այս աղաչանք ՚ի բարերարեդ-
ող վասն մեր կարգեալ առ նոսա․ զի նոքա
բանիւ են ստեղծեալ, և մեք ձեռօք ներ-
գործեալ։ Որք և գալոց են ընդ միածնիդ
վկայք սոսկալի դատաստանին հատուցման,
ճշմարտաբան դատախազք յանցաւորութե-
երկրայնոցս, յահաւորին ատենի յայտնիչք
իրաւամբք զմատակարարութիւնն որ առ
մեզ․ որ և անդանօր կարեկցեն աղդեալ
հառաչմամբ զմշտանուէրն նուագ ձայնի,
ողորմեա՛՝ դու ստեղծեր մի՛ կորուսաներ։
3 Արդ ընդ գոհաբանութեան ձայնիցն
խնդրուածոց անմահականացն վե-
հից՝ և ՚ի մեր հեծութիւնս հոտոտեսցիս
բնաւից արարիչ, որ յաղթես գթութեա-
քո վերնոցն և ստորնայնոցս․ քանզի քո՛ է
բարերարելդ առ մեզ և առ նոսին։ Արդ
վասն բարեզարդութեան անախտականացն,

հրաշատեսիլ հրակերպից, անշաղախ մաք-
րոցն, անմեղից, բոցանիւթից, հոգեղէ-
նացն, և անմարմնեղեացն, ամենաձեցուն ա-
ռաւելութբ ՚ի բարձրն ընտրականութիւն
գերափայլ յաճախ գիտութբ՝ անցուրա
ջերմութբ ջեռուցանօղք՝ ինքնաբուն տա-
պուղն ածսիրութեան ըստ ինքեանց զմերս
սառնասեր սրտից անբորբոք շիջուամն,
այրիլ անաղօտ ՚ի մեծախորհուրդ սրբում
սեղանին որ ՚ի խորանին, առանց նիրհելոյ
և դանդաղանաց սպասել հրամանաց երա-
նականաց կեցուցիչ կամաց ամենատեղ-
ծին, քրովբէօրէն առաքինութբ յած-
միացեալք անբաժանելի։ Որք երկնաւոր
պետութիք են մեծք, և զինուորութիւնք
անբիծք ահաւորք, երկնաւորին այ ազա-
տագնեալ պաշտօնեայք, ՚ի յամպոյդ լուսոյ
ցոլք նշուլից։

4 Որովք և ինձ մեղաւորիս հողեղինի
մարդասիրեսցես ողորմել յիսուս, ա-
պաշանօք իմոյն հրեշտակի, դարձուցանելով
զիս տէր, ՚ի բարիդ քո հետս լուսոյ. զի
զաւանդ հոգւոյս իմ պաշտպանութեան,
որ հաւատացեր նմին տեսչութե զընկա-

եալն 'ի քեն 'ի կենցաղ սատեալս՝ ուրա-
խութբ̅ սրտիւ յիս ընթերցեալ, անմեղադ-
րելի առ 'ի քեն օրհնեալ՝ խնդալից դիմոց
զուարճութբ̅՝ քեզ արքայ բարձրութեան
փառաց անհատից՝ 'ի խրախճանս կենդանա-
խումբս ընթերցելոցն պարուց մատուց-
եալ ընծայեցուսցէ՝ գովեալ ողորմած։
Նա քեզ անքննին ընդ հօր անհասի՝ Թու-
ակցութեամբ Հոգւոյդ անճառի՝ վայելէ
փառք պատիւ և երկրպագութի̅, յաւի-
տեանս յաւիտենից, ամէն։

Երանելւոյն Վարդանայ աղօթք առ Որդին միածին։

Մ'նակիղքն ած որ վասն մեր խոնար-
հեցար 'ի հայրական ծոցոյ, և առեր
մարմին յանարատ կուսէն մարիամայ · զի
զմեղօք մեռեալս կենդանացուսցես, և զօ-
տարացեալս 'ի քեզ դարձուսցես, և զմոլոր
եալս գտանիցես։

Նա արդ՝ տառապեալ ծառայս քո ան-
կանիմ առաջի քո · և հայցեմ արտասուա-
թոր պաղատանօք՝ մի՛ թողուր զիս 'ի պատ-

ր

ուխտանաց քոց հեռանալ. այլ յորդորեա՛
յառաւելուլ յամ գործս բարիս առանց
մեղաց. Մի՛ թողուր զիս տէր անկանիլ
'ի ցանկութի մեղաց, և 'ի հեշտութի երկ-
րաւոր կենաց, այլ պարապեա՛ երկիւղիւ,
և ամրացո՛ յամ չարեաց և յաշխարհական
զբօսանաց: Մի՛ յապաղեր տէր իմ՝ տալ
ինձ 'ի փրկութի հոգւոյ՝ զջերմութի սիրոյ,
զպարկեշտութի մարմնոյ և զզղջումն ար-
տասուաց 'ի լուանալ զաղտս հոգւոյ իմոյ.

Յաղթեա՛ տէր հակառակորդին իմոյ, և
զօրացո՛ զիս ընդդիմակաց լինել աներկիւղ
պատերազմողին 'ի տուէ և 'ի գիշերի: Տո՛ւր
ինձ տէր տեղի ապաշխարութեան և հան-
գիստ աշխատութե, հոգի խոնարհութե և
ճանապարհ արդարութե՝ 'ի լուսաւորութի
մտաց, 'ի հանդիպումն շնորհաց, և 'ի պահ-
պանութի պատուիրանաց քոց: Շնորհեա՛
ինձ, սուգ մեղաց և դողումն տանջանաց
և հոսումն արտասուաց՝ 'ի լուանալ զհոգիս
իմ 'ի յաղտոյ մեղաց մինչդեռ 'ի մարմնի
աստ եմ:

Յորժամ զերկինս գալարես և զլուսա-
ւորս նսեմացուցանես, փող հարկանես և

զմեռեալսն զարթուցանես, զերկիր դողա-
ցուցանես և զտիեզերս ա՟մ ժողովես, ըզ
դատողական աթոռսն դնես և անաչառ
դատաստանաւ դատես· զկամարարսն պատ-
ուես և զապստամբսն պատուհասես, զօ-
դիսն 'ի քեզ ընտրես, և զայծիսն 'ի հուր
գեհենին առաքես։ Յայնժամ բարերար
և մարդասէր փրկիչ՝ գթա՛ 'ի մեղաւորս զոր
գնեցեր արեամբ քով սրբով, և ջնջեա՛ ըզ
ձեռագիր յանցանաց իմոց, և թո՛ղ զա՟մ
պարտիս յանցանաց իմոց զկամայ և զակա-
մայ· ձայն քո լսելի արա՛, եթէ եկա՛յք օրհ-
նեալք հօր իմոյ։

Արդ՝ ընկա՛լ զաղօթս և զխնդրուածս
իմ, որ պաղատիմ և հայցեմ 'ի քէն· մի՛
դարձուցաներ զերեսս քո յինէն, խոնար-
հեցո՛ զունկն քո յաղաչանս իմ· ցո՛յց յիս
զողորմական քո մարդասիրութիւնդ, և
խնայեա՛ 'ի մեղաւորս· զի դու ես ա՟ծ ա-
պաշխարողաց և հանգիստ աշխատելոց· և
քեզ ընդ հօր և ընդ ս՟բ հոգւոյդ վայելէ
փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ մաղթանք առ Հոգին սուրբ ասացեալ։

Ո՛վ տէր և դաստիարակ՝ հեզ և խնամօղ անձին իմ Հոգի, շնչեա՛ ՚ի մրրկեալ ծովս խորհրդոյս զսիւք շնորհիդ՝ որով խաղաղի. և որպէս միշտ երախտիւք քո առատացուր զիս քեզ պարտական գոլեստի, լե՛ց և այժմ զբերան իմ օրհնութեամբ տէր ընծայելի։ Թէպէտ և եմ անպատշաճ տաճար լինել քումդ հանգստի. այլ դու ա՛ռ ա՝ առ միայն գործի հնչման քո ձայնի. և զանձառ խորհրդոյ քո հանճար տարփալի, բացեալ փայլեցո՛ խնդրողաց նորին առաջի. ՚ի փառս պատուոյ մեծի քո անուան սուրբդ սիրելի, և ինձ կշտամբեանս բարբառ բերանոյս ժխտօղ ծառայի։

Նորին սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ աղօթք առ Որդին միածին։

Ո՛վ շուրջ պատեալ ՚ի տարակուսանացս յամ կողմանց սրտիւ շաղախեալքս, և ունկնդրութեան կարօտեալքս՝

նայիմք առ քեզ փորձ տկար բնութեանս
քահանայապետդ յս՟ ։ Ո՛վ որ վասն մեր
մեղս եղեր, զի մեք լիցուք վասն քո արդա-
րութի՟։ Ո՛վ որ վս՟ մեր երկրաւոր եղեր,
զի մեք լիցուք վս՟ քո երկնաւորք։ Ո՛վ որ
վասն մեր հաց եղեր, զի մեք 'ի ճաշակէն
դքեզ՝ սրբեսցուք։ Տո՛ւր զպարարեալ
վշտօք մարմին քո՝ ըմ՟ սրտի սրբարար կե-
րակուր։ Մատուցակեա՛ զարեան քո վտակ
անմեղ կայլակեալ՝ որդւոց մարդկան ան-
մեղութե՟ զմայլումն։ Հզեա՛ զփրկական
քո զխաչդ զօղելոցս 'ի ծով աշխարհիս առ
քեզ վերածիչ։ Կարօտացաք շնորհի՝ սփ-
ռեա՛. լքաք 'ի գործոց՝ քաւեա՛. խարխա-
փեմք զխաւար՝ ճառագայթեա՛. կործանե-
ցաք 'ի հաւատոց՝ հաստատեա՛։ Դո՛ւ ես յոյս.
դու ես լոյս. դու ես կեանք. դու ես քաւութի՟.
դու ինքն և անմահութի՟։ Քե՛զ սպասեն
յեցեալքս 'ի շնորհս քո. 'ի քէն կարօտին
առնուլ փրկութիւն խառնեալքս 'ի մար-
մնոյ քո. զքեզ ունին քաւիչ քահանայ՝
գնեալ արեամբ հօտս քո։ Հայեա՛ց յամե-
նեսեան. սփոփեա՛ զտարակուսանս մեր
քջին վաստակովքդ. հանդարտեցո՛ զխռո-

վութիւնս մեր քոյին խաղաղութեամբդ ։ Հանգո՛ զաշխատանս մեր ՚ի քո օթե-վանդ, ուր դու գնացեր ո՛վ տէր՝ և խոս-տացար ։ Արժանացո՛ զմեզ փառաւորել զքեզ այդր ընդ Հօր և ընդ սբ Հոգւոյդ յաւիտեանս, ամէն ։

Աղօթք ըստ մտաց տէրունական աղօթից ։

Ամենասուրբ Հայր մեր և ստեղծօղ, փրկի՛չ մեր Յս Քս, և մխիթա-րի՛չ մեր սբ Հոգի, որ ՚ի յերկինս զՀրեշ-տակս լուսաւորես առ ՚ի ճանաչել զքեզ ։ Քանզի դո՛ւ ես լոյս յաւիտենական, ո[ր] բորբոքես զնոսա ՚ի սէր քո · դո՛ւ ես սէր որ բնակիս ՚ի նոսա · դո՛ւ ես ծայրագոյն և յաւիտենական բարի, որ առանց քեզ ո՛չ գոյ բարի · զի դո՛ւ ես աղբիւր բարութե[ան]

Սուրբ եղիցի անուն քո՝ ո՛վ տէր մե[ր] և Հայր երկնաւոր · պայծառասցի՛ և ՚ի մեզ յայտնութիւն քո · զի ճանաչեսցուք զլայ-նութիւն բարերարութե[ան] քո, զբարձրութ[իւն] խոստմանց քոց՝ ՚ի վեր քան զմիտս զգերա-գոյն փառս քո, և զանքննելին խորութիւն

դատաստանաց քոց ։

Եկեսցէ արքայութիւն քո ․ զի թագաւորեսցես դու մեզ միայնակ ՚ի ձեռն շնորհաց քոց ․ և տացես զմեզ յարքայութիւն քո, որ է տեսութիւն քո յայտնապէս ․ և ուրախացուսցես զմեզ ՚ի սեղան երկնաւոր բարեաց քոց ։

Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի ․ զի սիրեսցուք զքեզ ՚ի բոլոր սրտէ ․ զքէն խորհեսցուք ՚ի բոլոր անձնէ ․ և քեզ միշտ ցանկասցուք ՚ի բոլոր մտաց ․ և զամենայն միտս և զխորհուրդս մեր ՚ի քեզ ուղղեսցուք ․ և զպատիւ քո յամենայնի խնդրեսցուք ․ և զամենայն գործս և զհոգս մեր՝ զմարմնոյն և զհոգւոյ մեր ՚ի ծառայութիւն քո նուիրեսցուք ․ և զընկերս մեր իբրև զմեզ սիրեսցուք վասն սիրոյ քոյ ․ և ՚ի վերայ բարեացն այլոց՝ իբրև ՚ի վերայ մեր բարեացն խնդասցուք, և չարեաց և վշտաց նոցա ցաւակից լիցուք ։

Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր ․ զսիրելի որդին քո հայր երկնաւոր՝ զտէր մեր յիսուս քրիստոս տուր մեզ ՚ի կերակուր և յըմպելի ․ և զշնորհս հոգւոյդ սրբոյ մեզ դաստիարակ և ձեռնտու պարգևեա ։

– Թո՛ղ մեզ զպարտիս մեր . ’ի ձե-
ութեան քո հայր երկնաւոր , և
ելն զօրութեամբ սիրելի որդւոյ
ն մերոյ յն քն , և ամենասուրբ
բարութեն հոգւոյդ սբյ , Թո՛ղ մեզ
ս մեր . զի մեք որպ մարդ մեղաք
որպ կարօղ ած ողորմեա՛ .

րպ և մեք թողումք մերոց պարտապա-
. բա՛րձ տէ՛ր ’ի սրտից մերոց զանգ-
թն և զնախանձ . զի թերևս լնայե-
եք թողութն շնորհեսցուք յանցա-
ն մերոց . և զթշնամիս մեր՝ վասն
եսցուք , և ո՛չ ունեք չարի զչար փոխ-
հատուսցուք .

ու մի՛ տանիր զմեզ ’ի փորձութն . այլ
յայտնի և յաներևոյթ փորձութեանց
ատեա՛ . և փրկեա՛ զմեզ ’ի չարէ , յա-
ոցն և յայժմէն և որ գալոցն է . և զմ
րծս մեր հոգևորս և մարմնաւորս ’ի գ-
ի և ’ի տունջեան՝ ’ի բարին յաջողե-
ի քո՛ է արքայութն և զօրութիւն
փառք յաւիտեանս , ամէն .

ՎԵՐՋ

X 100
328/2